

ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40րդ. ՏԱՐԻ ԹԻ 50 (2022) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 8, 2022
VOLUME 40, NO. 50 (2022) SATURDAY, JANUARY 8, 2022



Պաշտոնաթերթ՝
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

Հին տարին փակելով նոր տարին կը
դիմաորենք ակնկալիքներով ու
մաղթանքներով, որ ան ըլլայ
հայաստանի ու Արցախի համար
խաղաղութեան ու
ապահովութեան տարի մը,
միաժամանակ բարգաւաճի
տնտեսութիւնը, ամրապնդուի
բանակը եւ սահմանները ըլլան
պաշտպանուած, իսկ սփիւռքահայութիւնը
իր հայեացքները սեւեռած մնայ դէպի իր
հայրենիքը՝ կարողանալ պահպանելու համար
իր գոյութիւնն ու ինքնութիւնը



Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ



ՄԱՍԻՍ - 2022

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նոր Տարին Կը Դիմաւորենք Ակնկալիքներով Ու Մաղթանքներով

Հրաժեշտ կու տանք 2021 տարուան, որ լի էր աշխարհի ու մարդկութեան համար վերիվայրումներով ու տագնապներով, որոնցմէ բաժին հասաւ իւրաքանչիւր անհատի ու հաւաքականութեան: Երկրորդ տարին ըլլալով համաճարակը շարունակեց աներներ գործել երկրագունդի ամբողջ տարածքին, ուր զոհերու թիւը գերազանցեց հինգ միլիոնի սահմանները՝ դառնալով մարդու պատմութեան ամենէն մահացու հիւանդութիւններէն մէկը:

Առողջականի հետ մեկտեղ ընկերային ու տնտեսական հարցերը շարունակեցին խաթարել շատերու հոգեվիճակները, իսկ հորիզոնի վրայ չեն երեւար բնականոն կեանքին վերադառնալու յոյսի նշոյլներ՝ հակառակ պատուաստի բազմաթիւ տեսակներու առկայութեան: Շատ-շատեր, որոնց շարքին դժբախտաբար մեծ թիւ հայեր, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին շարունակեցին ընդդիմանալ պատուաստումին՝ վտանգելով իրենց ու շրջապատի առողջութիւնն ու կեանքը:

Անցնող տարին եւս Հայաստանի համար եղաւ դժուարին ու ծանր տարի մը: Պատերազմի հետեւանքները մնացին չյաղթահարուած՝ հակառակ հայրենի իշխանութիւններու բոլոր ջանքերուն: Ազգերի թշնամին շարունակեց բռնաբարել մեր սահմանները՝ փորձելով նոր պայմաններ, զիջումներ ու գետնի՝ նոր իրողութիւններ պարտադրել երեւանին: Մի քանի տասնեակ հայ զինուորներ մնացին գերիվարուած ու որպէս խաղաքարտ օգտագործուեցան Պաքուի բռնապետին կողմէ՝ խախտելով միջազգային բոլոր օրէնքներն ու ստորագրուած ուխտերը:

Հայ-թրքական յարաբերութիւններու դժուարին ու խնդրայարոյց հարցը դարձեալ վերադարձաւ օրակարգ: Կողմերու միջեւ երկխօսութիւն սկսելու ազդանշանը տրուեցաւ տարուայ վերջին օրերուն, սակայն մեծ չեն յոյսերն ու ակնկալիքները սպասուող բանակցութիւններէն՝ մեկնելով մօտ ու հեռու անցեալի փորձեն եւ Հայաստանի ու հայութեան նկատմամբ թուրք պետութեան թշնամական նկրտումներէն:

Հայաստանի ներքաղաքական կեանքը եւս եղաւ փոթորկոտ՝ անցնելով բազմաթիւ փորձութիւններու ընդմէջէն: 2018 թուականի թաւշեայ յեղափոխութեամբ իշխանութենէն հեռացած ուժերը փորձեցին փողոցային հանրահաւաքներով, ցոյցերով ու ճանապարհներ փակելով վերադառնալ իրենց նախկին դիրքերուն, սակայն արժանանալով լայն հասարակութեան մերժումին, շատ չանցած՝ կորսնցուց իրենց թափը:

Խոհեմ քայլի դիմեց կառավարութիւնը՝ երթալով արտաքին ընտրութիւններու, որպէսզի ժողովուրդը ինք որոշէ թէ, ով պէտք է ղեկավարէ երկիրը այս հանգրուանին: Այդ ընտրութիւններուն Նիկոլ Փաշինեանի արձանագրած յաղթանակը բաւական տպաւորիչ եղաւ ու ան վերադարձաւ վարչապետի պաշտօնին՝ ստանալով «երկաթեայ մանտաթ»՝ կառավարելու երկիրը:

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն համար եւս տարին եղաւ բաւական ծանր ու մտահոգիչ: Տեղի ունեցան դէպքեր, որոնք կարելի չէր նոյնիսկ երեւակայել՝ կարճ ժամանակ մը առաջ: Նախագահական ընտրութիւններուն պարտուած նախկին նախագահը մերժեց ընդունիլ քուէարկութեան արդիւնքները, պաշտօնի վրայ մնալու համար դիմելով տարբեր անօրինական միջոցներու, որոնց գագաթնակէտը հանդիսացան Յունուար 6-ի իրադարձութիւնները: Տանուլտ Թրամփի համախոհները ներխուժեցին Ամերիկեան ժողովրդավարութեան խորհրդանիշ՝ Գափիթոլի շէնքէն ներս, այն պահուն երբ Գոնկըտի երկու Պալատներու անդամները հաւաքուած էին հաստատելու համար ճօ Պայտընի ընտրութիւնը, որպէս նախագահ: Այդ օրուան ու անոր յաջորդող դէպքերը եկան յիշեցնելու թէ Ամերիկայի հիմքերը փխրուն են ու ապագային եւս կրնան կրկնուիլ նոյն երեւոյթները: Նոր նախագահի երդմնակալութեան արարողութիւնը կատարուեցաւ բանակի ու զինուորականութեան անմախքնաբաց հսկողութեան տակ, մեծ վնաս հասցնելով երկրի վարկին ու հեղինակութեան:

Միջազգային գետնի վրայ, յարաբերութիւններու սրում արձանագրուեցաւ Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի միջեւ, յիշեցնելով պաղ պատերազմի օրերը: Ուլքրանիոյ շուրջ ծաւալուած իրադարձութիւնները իրար դէմ լարեցին Մոսկուան ու Արեւմտեան երկիրներու մայրաքաղաքները: Մտավախութիւն յառաջացաւ, որ այս երկու ճակատներուն միջեւ ուղղակի կամ անուղղակի բախումները կրնան աշխարհը դարձեալ բաժնել երկու մասի՝ ներգրաւելով նաեւ Չինաստանը, որ սկսած է հզօրանալ ոչ միայն տնտեսապէս, այլ զինուորական առումով եւս ու իր ազդեցութիւնը կը տարածէ տարբեր ցամաքամասերու վրայ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կը թեւակոխէ իր հիմնադրութեան 135 ամեակը եւ նոր տարին յորելիճական տարի մըն է Հայ ժողովուրդի ծոցէն ծնած կազմակերպութեան համար: Հիմնադրութեան առաջին օրէն դառնալով դրօշակակիրը Արեւմտահայութեան ազգային ազատագրական պայքարին ու դաւանողը՝ ընկերային արդարութեան ու ժողովրդավարութեան գաղափարներուն, ՄԳՀԿ իր ամբողջ պատմութեան ընթացքին անշեղօրէն մնաց հաւատարիմ իր սկզբունքներուն ու ոչ մէկ ատեն Հայ ժողովուրդի ու Հայաստանի հանդէպ իր հաւատարմութիւնը սակարկութեան առարկայ չդարձնելով ապաւինեցաւ բացառապէս իր շարքայիններու ու համակիրներու զոհաբերութեան վրայ:

Հին տարին փակելով նոր տարին կը դիմաւորենք ակնկալիքներով ու մաղթանքներով, որ ան ըլլայ Հայաստանի ու Արցախի համար խաղաղութեան ու ապահովութեան տարի մը, միաժամանակ բարգաւաճի տնտեսութիւնը, ամրապնդուի բանակը եւ սահմանները ըլլան պաշտպանուած: Նոյնպէս կը մաղթենք, որ սփիւռքահայութեան հայեացքը շարունակէ սեւեռած մնան դէպի Հայրենիքը՝ կարողանալ պահպանելու համար իր գոյութիւնն ու ինքնութիւնը:

Շնորհաւոր Նոր Տարի



ՍՊՀԿ Կեդրոնական Վարչութեան Ամանորեայ Մաղթանքի Խօսքը

Կը թեւակոխենք 2022 թուականը՝ համակուած նոյն մտահոգութեամբ, որ ունէինք անցեալ տարեմուտին՝ ի տես պսակածել ժահրի համաճարակի նոր ալիքին, որ կը սպառնայ խաթարել բնականոն կեանքի վերադառնալու այնքան սպասուած յոյսը:

Այս օրերուն, հայրենիքը կը գտնուի դէմ-յանդիման արցախեան պատերազմին հետեւանքով ստեղծուած տարածաշրջանային նոր իրողութեան եւ անկէ բխող բարդ գործընթացներու, որոնք Հայաստանի եւ Արցախի համար կը պարունակեն նոր հնարաւորութիւններ, սակայն նաեւ լուրջ վտանգներ: Կամայ թէ ակամայ, ճակատագրական որոշումներու պահը հասած է եւ այսօր, աւելի քան երբեք, հայրենիքը պէտք ունի ներքին կայունութեան ու համախմբուածութեան՝ դիմակայելու համար բազում մարտահրաւերները:

Միւս կողմէ, Սփիւռքի տարբեր գաղութներ կը բոլորեն դժուար ժամանակներ: Կը շարունակուին Սուրիոյ եւ Լիբանանի քաղաքական ու տնտեսական տագնապները, եւ հակառակ դժուարին պայմաններուն՝ շրջանի հայութիւնը կը շարունակէ ապրիլ կենսունակ ազգային կեանքով: Իսկ անոնք, որոնք ստիպուած կ'ըլլան բռնել գաղթի ճամբան, բարեբախտաբար կը նախընտրեն տեղափոխուիլ Հայաստան՝ հոն տեսնելով իրենց ընտանիքին եւ զաւակներուն ապագան:

Այս տարի, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը հպարտօրէն կը մշէ իր 135-ամեակը: Հայ ժողովուրդի ծոցէն ծնած կազմակերպութիւնը կը շարունակէ իր հաստատական երթը հայրենիքի ու հայ ժողովուրդի ծառայութեան մէջ եւ անշեղօրէն կը մնայ հաւատարիմ իր գաղափարախօսութեան եւ սկզբունքներուն:

Նոր Տարուան եւ Ծննդեան տօներուն առիթով, մեր հայրենիքին կը մաղթենք խաղաղ եւ բարեբեր օրեր, իսկ մեր հայրենակիցներուն՝ առողջութիւն եւ երջանկութիւն:

ՍՊՀԿ Կեդրոնական Վարչութիւն 01/01/2022

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ ՎԱՐՆԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA

1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Ուղերձը՝ Վերածնունդը Պետական Քաղաքականութիւն Է

Վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհաւորական ուղերձ յղած է Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ, ուր կ'ըսուի.

«Սիրելի ժողովուրդ, սիրելի հայրենակիցներ.

Տարեմուտի այս րոպէներին մեր մտքերն ու սրտերն առաջին հերթին հայրենիքի համար իրենց կեանքը զոհաբերած մեր եղբայրների ու քոյրերի, նրանց ընտանիքների հետ են:

2020 թուականի 44-օրեայ պատերազմի ողբերգութիւնից յետոյ որդեկորոյս բազմաթիւ ընտանիքներում գաւակներ են ծնուել. վերածնունդ են մարտի դաշտում ընկած մեր նահատակները:

Բառիս բուն իմաստով վերածնունդ են, որովհետեւ 2021 թուականի շատ նորածիններ կրում են նահատակ եղբօր անունը, ազգանունը եւ հայրանունը: Միեւնոյն անունը, ազգանունը, հայրանունը:

Խորախորհուրդ մի յայտնութիւն է սա, կեանքի յաղթանակ, առասպելաբանութեան մարմնաւորում. ծնուել է 2001 թուականին, զոհուել է 2020 թուականին, վերածնուել է 2021 թուականին:

Ես ուզում եմ նախ գլուխ խոնարհել այն հայրերի ու մայրերի առաջ, ովքեր կայացրել են այսպիսի որոշում, որովհետեւ նրանք ոչ միայն իրենց ընտանիքին, այլեւ մեր հայրենիքին ապրելու, յուսահատութիւնը յաղթահարելու, ապագային հաւատալու եւ յանուն ապագայի ապրելու նոր լիցք են տալիս:

Հենց այս ընթացքով քաջալերուած եւ բազմաթիւ ընտանիքների ցանկութիւնը հաշուի առնելով, կառավարութիւնը 2022 թուականի Յունուարից զոհուածների ընտանիքներում վերարտադրողական առողջութեան վերականգնման պետական ծրագիր է սկսում: Իսկ բոլոր այն դէպքերում, երբ վերարտադրողական առողջութիւնը հնարաւոր չի լինի լիարժէք վերականգնել, մեր նահատակ գաւակների ընտանիքները պետական ֆինանսաւորմամբ փոխնակ մայրերի դիմելու հնարաւորութիւն կ'ունենան:

2022 թուականի Յունուարի 1-ից մեկնարկում է 3-րդ եւ իւրաքանչիւր յաջորդ նոր ծնուող երեխային պետական աջակցութեան ծրագիրը, երբ իւրաքանչիւր ընտանիքում, անկախ նրա սոցիալական վիճակից, նոր ծնուող 3-րդ եւ իւրաքանչիւր յաջորդ երեխայ մինչեւ վեց տարեկանը կը ստանայ ամսական 50 հազար դրամ պետական աջակցութիւն:

Այս ամէնն ասում եմ՝ ի ցոյց դնելու, որ վերածնունդը պետական քաղաքականութիւն է, եւ 2022-ի նշանաբանը հենց վերածնունդը պիտի լինի: Յոյս ունեմ, որ մեր բազմաթիւ ընտանիքներում հարազատ, ընկեր, բարեկամ, նոյնիսկ ծանօթ ու անծանօթ նահատակների անունները կրող գաւակներ կը ծնուեն 2022-ին:

Նման որոշումներն, ի հարկէ, կապուած են ոչ միայն ֆինանսական, որքան աւելի շատ սոցիալ-հոգեբանական գործօնների հետ: Նման որոշումները կայացում են առաջին հերթին ապագային հաւատալով եւ ապագայի նկատմամբ հաւատի վերականգնումը, ամրապնդումն ու զարգացումը մեր մեծագոյն առաքելութիւնն է:

Մեր հայրենիքի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու քաղաքականութեան յաջողութիւնն է ապագայի նկատմամբ հաւատն ամրապնդելու միջոցը ու որքան էլ գիտակցում ենք, որ դա միայն մեզնից չէ կախուած, հետեւողականօրէն գնալու ենք այդ ճանապարհով՝ փոխելու համար իրադրութիւնը եւ մթնոլորտը Հայաստանի Հանրապետութեան շուրջ եւ մեր ողջ տարածաշրջանում: Անվտանգութեան ապահովումը մեր այսօրուայ մեծագոյն մարտահրաւէրն է եւ փորձը ցոյց է տալիս, որ անվտանգութեան ապահովման ամենայնուայն էլ միջոցը խաղաղութիւնն է:

Սրան գուզահեռ առանցքային խնդիր է մեր Զինուած ուժերի՝ բանակի բարեփոխումը: Հայաստանը պիտի ունենայ փրոֆեսիոնալ բանակ, ընդ որում, նաեւ կանանց աւելի ու աւելի շատ ներգրաւումը: Ռազմավարական հեռանկարում ժամկէտային գինծառայութիւնն էականօրէն պիտի փոխուի, վերակերպուելով մարտական պատրաստակարարութեան պարտադիր հաւաք-վարժանքների, որոնք կեանքի ընթացքում պիտի տեղի ունենան մի քանի անգամ, որոշակի պարբերականութեամբ:

Ուզում եմ ընդգծել, որ քաղաքական առումով մեր բանակը տարածքներ նուաճելու խնդիր չի դնելու իր առաջ, նրա խնդիրը մեր երկրի անվտանգութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելն է:

Սիրելի ժողովուրդ,

Հենց վերածնունդին եւ խաղաղ ապագային են միտուած կառավարութեան բոլոր քայլերը: Տարածաշրջանային կոմունիկացիաների բացումը, սահմանների դէլիմիտացիայի եւ դեմարկացիայի գործընթացները, այս բազմաթիւ ռիսքեր են պարունակում, բայց եւ նաեւ բազմաթիւ հնարաւորութիւններ, եւ մեր քաղաքականութիւնը միտուած է ռիսքերը կառավարելուն ու չէզոքացնելուն, իսկ առկայ հնարաւորութիւնները՝ օգտագործելուն:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորումն Արցախի հայութեան իրաւունքների լիարժէք պաշտպանութեամբ՝ մեր ռազմավարական նպատակն է:

Մեր կառավարութիւնը թէ պատերազմից առաջ եւ թէ դրանից յետոյ մշտապէս եղած է Արցախի կողքին: Միայն 2021 թուականին կառավարութիւնն աւելի քան 128 միլիառ դրամի՝ 267 միլիոն տոլարի արջակցութիւն է ցուցաբերել Արցախին: 2022 թուականի պիւտձեով արդէն Արցախին նախատեսում ենք յատկացնել աւելի քան 144 միլիառ դրամ՝ 300 միլիոն տոլար եւ նաեւ պիտի մտածենք մեխանիզմների մասին, որ այս յատկացումներն ու նրանց օգտագործումը լինի առաւել արդիւնաւէտ:



Սիրելի ժողովուրդ.

2021 թուականը դժուար տարի էր, որը սկսուեց պատերազմի արհաւիրքների արդիւնքում յառաջացած սոցիալ-հոգեբանական, քաղաքական ճգնաժամով: Երբեմն թւում էր, թէ յետպատերազմական յուզումները կը դառնան անկառավարելի, կը վերածուեն քառսի եւ քաղաքացիական բախումների: Բայց ուզում եմ նկատել, որ 2021 թուականը նաեւ Հայաստանի ու հայ ժողովրդի կենսունակութեան ապացոյց դարձաւ, որովհետեւ ի զարմանս շատերի, մենք կարողացանք փրոցեաները վերադարձնել լիարժէք քաղաքական հուն, Հայաստանի Հանրապետութեան

քաղաքացիներին արտայայտուելու, ազատ կամարտայայտմամբ որոշումներ կայացնելու հնարաւորութիւն ընձեռելով:

2021 թուականին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները միջազգային մեծ ուշադրութեան արժանացան, որովհետեւ մինչեւ օրս էլ միջազգային հանրութիւնն ապշեցուցիչ է համարում, որ նման պայմաններում Հայաստանը կարողացաւ ազատ, արդար, ժողովրդավարական ընտրութիւններ անցկացնել:

Այսօր այդ, միջազգային հանրութիւնը Հայաստանն ընկալում է որպէս ժողովրդավարութեան առաջատար ուժ եւ սա մի ձեռքբերում է, որը մենք չպէտք է կորցնենք: Մեր խնդիրն է՝ ժողովրդավարութիւնը, ժողովրդավարական համարումը դարձնել իրական գործօն մեր երկրի անվտանգութեան, բարեկեցութեան, զարգացման համար: Ժողովրդավարութիւնը պիտի դառնայ վերածննդի ու ապագայի շարժիչ ուժը: Ժողովրդավարութեանն ու ժողովրդավարական արժէքներին Հայաստանն իր նուիրուածութիւնը եւս մէկ անգամ ի ցոյց դրեց 2021 թուականի Հոկտեմբեր-Դեկտեմբեր ամիսներին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւններում:

Եւ այդ, ժողովրդավարութիւնը, իրաւունքի գերակայութիւնը, մարդու իրաւունքների պաշտպանութիւնը պէտք է անձեռնմխելի լինեն մեր երկրում, մարդու ազատ ապրելու, ստեղծագործելու, աշխատելու եւ արդիւնք ստեղծելու հնարաւորութիւնները պէտք է աջակցութիւն ունենան եւ խթանուեն:

Այս առումով, մեզ համար սկզբունքային նշանակութիւն ունեն այն բարեփոխումները, որ իրականացնում ենք կրթութեան եւ գիտութեան ոլորտում, որովհետեւ հնարաւորութիւնն այդպէս էլ կը մնայ հնարաւորութիւն, եթէ մենք մեր քաղաքացուն դրանից օգտուելու հմտութիւն չհաղորդենք: Իսկ սա հնարաւոր է անել միայն կրթութեան, գիտութեան եւ տեխնոլոգիաների զարգացմամբ: 2021 թուականին յաջողութեամբ մեկնարկել է ուսուցիչների կամաւոր աթեսթաւորման ծրագիրը, որի արդիւնքներով բազմաթիւ ուսուցիչներ շիջարտարաւորաբար արդէն իսկ բարձրացել են 30-ից 50 տոկոսով: Կամաւոր աթեսթաւորման գործընթացը շարունակուելու է 2022 թուականին եւ այդպիսով ոչ միայն ուսուցիչ աշխատանքի գրաւչութիւնն ենք բարձրացնում, այլեւ երաշխիքներ ենք ստեղծում, որ դասասենեակ մտնեն միայն պատշաճ որակաւորում ունեցող ուսուցիչներ, որոնց գործունէութեան արդիւնքում մեր երեխաներն ու սերունդները կը լինեն առաւել մրցունակ:

Արդէն իսկ մեկնարկել է 300 դպրոց եւ 500 մանկապարտէզ կառուցելու, վերակառուցելու կամ հիմնանորոգելու մեր ծրագիրը: 2022 թուականին գործընթացի մէջ գտնուող աւելի քան 100 դպրոց կ'ունենանք, առնուազն 100 մանկապարտէզ: Որոշակի վերափոխումների ենք ենթարկում համայնքներին տրուող սուպլենդիտն ծրագրերի բանաձեւերը՝ համայնքների համար մանկապարտէզներ կառուցելու հնարաւորութիւնն աւելի ընդլայնելու համար:

2022 թուականի պետական պիւտձեով աւելի քան 80 տոկոսով աւելացրել ենք գիտութեան ֆինանսաւորումը: Արդէն Յունուարի 1-ից գիտութեան ոլորտի աշխատողների աշխատավարձերը կ'աւելանան, ուշադրութիւն դարձրէք, 40-ից 165 տոկոսով՝ բայց սա ամէնը չէ, եւ գործընթացը շարունակուելու է մինչեւ 2026 թուականը: Սրանով մենք գիտնականի աշխատանքը գրաւիչ ենք դարձնում երիտասարդների համար, բայց նաեւ քաջալերում ենք գիտական հանրութեանն աւելի ակտիվ ու մեծ ներդրում ունենալ մեր երկրի զարգացման գործում:

Սիրելի ժողովուրդ, սիրելի հայրենակիցներ.

Ամանորի այս ուղերձը չեմ ուզում ծանրաբեռնել լրացուցիչ տուեալներով, ոչ էլ քաւ լիցի, վարդագոյն պատկեր եմ ուզում ստեղծել: Պարզ է, որ պատերազմի ցնցումը չենք յաղթահարել, ու տեւական ժամանակ չենք յաղթահարի: Այս իրավիճակն ահազանսում է COVID-19-ի շարունակուող համավարակով, որի բերած տնտեսական հետեւանքները հիմա արդէն իւրաքանչիւր ոք աւելի է գգում, քան 2020 թուականին: Աննախադէպ կլոպալ գնաճը, որը 2020-21 թուականներին COVID-ի պատճառով ի յայտ եկած սահմանափակումների հետեւանք է, իւրաքանչիւրի տուն է մտել եւ քաղաքացիների մեծամասնութիւնն այսօր աւելի վատ է ապրում, քան 2020 թուականի մեկնարկին:

Բայց պատերազմի ու COVID-ի հետեւանքներին մեր արձագանգը պիտի լինի մտածումը, աշխատանքը, ջանքը: Մտածումը, աշխատանքը, ջանքը: Հենց այսպիսին պիտի դարձնենք 2022 թուականը, Հայաստանի իրական եւ ռազմավարական վերելքի տարի: Պատերազմի հետեւանքով յայտնուել ենք զրոյական կէտում եւ թերեւս ժամանակն է, որ ժամանակն աշխատի մեր օգտին: Ազատ, խաղաղ, վերածնունդ եւ վերակառուցուող Հայաստանի ու Արցախի կենացը բարձրացրէք:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ»:

ՄԱՍԻՍ - 2022

Հարցազրույց 135-Ամեայ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկեր Համբիկ Սարաֆեանի հետ



Հ. - Ընկեր Սարաֆեան, նկատի առնելով, որ քանի մը օրէն կը դիմաւորենք մեր տարի, ինչպէ՞ս կը կարգաւորուի 2021-ին ամիսները 2021 տարին:

Պ. - 2021 տարին ձեռնարկը շարունակութիւնն էր 2020-ին, մասնաւորապէս պատկաճեալ ժամանակահատիկի համաճարակի առումով, ինչ որ մեծապէս ազդեց կուսակցական եւ կազմակերպչական աշխատանքներուն վրայ: Մեր աւանդական ձեռնարկները եւ միջոցառումները կամ սահմանափակուեցան կամ ալ ընդհանրապէս չեղեալ յայտարարուեցան, երբ հերթական ալիքը հասաւ այս կամ այն երկիր: Կը թուէր, որ պատուաստանիւթերու առկայութիւնը պիտի բարելաւէր իրավիճակը եւ վերջապէս պիտի վերադառնայինք մեր բնականոն կեանքին, սակայն ինչպէս տեսանք, այդ մէկը տեղի չունեցաւ եւ ահա կրկին նոր ալիքի մը դէմ յանդիման կը գտնուինք: Համաճարակէն անդին, ինչպէս 2020-ին, այնպէս ալ 2021-ին, մեր հայեացքը սեւեռած է ինքիս հայրենիքի վրայ, որովհետեւ հոն է որ ամէնէն մտահոգիչ երեւոյթները տեղի կ'ունենան՝ յետպատերազմեան գործընթացներու լուսին տակ:

Հ. - Ըսիք, որ կուսակցութեան հիմնական հայեացքը սեւեռած է Հայաստանի վրայ, ուր պատերազմի աւարտէն ի վեր տակաւին կիրքերը կը շարունակուին մնալ բորբոքած: Ինչպէ՞ս կը գնահատէք ներհայաստանեան քաղաքական կեանքը ներկայիս:

Պ. - Դժբախտաբար շատ անառողջ, որովհետեւ պատերազմը պատուեց այն շղարշը, որմէ անդին մեզի կը թուէր, թէ կայ կայացած պետական համակարգ, պետական մտածողութիւն եւ նաեւ համոզում, որ դարաբաղեան հակամարտութեան հետ առնչուած մեր դիրքերը ամուր են, որովհետեւ ունինք մարտունակ բանակ ու բաւարար սպառազինութիւն: Սակայն, ինչպէս պարզուեցաւ, իրականութիւնը բոլորովին այլ էր եւ պատերազմի աւարտէն աւելի քան մէկ տարի անց ականատեսը կ'ըլլայք տգեղ ու ապականած քաղաքական դաշտի, մասնաւորապէս ներկայ խորհրդարանէն ներս, ուր երկիրը չուզող կարեւոր հարցերու վերաբերեալ լուծումներ գտնելու փոխարէն կը գերիշխէ աժան եւ անիմաստ վիճաբանութիւնը: Դժբախտաբար, ընդդիմադիր ուժերու խոստովմը, որ փողոցային պայքարը Ազգային ժողով պիտի տեղափոխեն՝ մեծ մասամբ յաջողած է:

Աւելին, երկրի ներկայիս եւ ապագայի վերաբերեալ մամուլի էջերուն մէջ տեւապէս տեղ գտած եւ Ազգային ժողովի ամպիոնէն հնչող մուսլ կանխատեսումները, յաճախ չափազանցուած կամ կեղծ տեղեկութիւնները մեծապէս կը նպաստեն հասարակութեան մէջ բարոյահոգեբանական ծանր մթնոլորտի ձեւաւորման եւ ապագայի նկատմամբ հաւատի կորուստին: Պարագայ մը, որմէ միակ օգտուողը Ատրպէյճանը կ'ըլլայ: Կարելի է ըսել, որ այսօր մենք դարձած ենք մեր մեծագոյն թշնամին, որովհետեւ քաղաքական նպատակներու եւ հատուածական շահերու հետապնդման ճանապարհին՝ պետութիւնն է որ կը տուժէ, բանակն է որ կը տուժէ եւ զինուորի մարտական ոգին կը կոտորուի:

Հ. - Ընտրութիւնները չլուծեցին երկրին մէջ գոյութիւն ունեցող հարցերը

եւ ապակառուցողական վարքագիծը կը շարունակուի: Ըստ ձեզի, ո՞րն է այս փապուղիէն դուրս գալու միջոցը:

Պ. - Պատերազմի աւարտէն ետք, երբ բողոքի ալիքը սկսաւ, մենք յաջորդական յայտարարութիւններով հանդէս եկանք եւ համախմբեան կոչ ըրինք, որովհետեւ անկախ այն հանգամանքէն, որ ով կը կրէր պատերազմի նման ընթացքի եւ ելքի պատասխանատուութիւնը, երկիրը տակաւին լուրջ վտանգի առջեւ կը գտնուէր եւ հետեւաբար առաջին եւ միակ հրամայականը պիտի ըլլար պետականութեան շուրջ համախմբումը: Այսինքն, երբ կայ հրդեհ, առաջինը՝ կրակը պէտք է մարել եւ ապա մեղաւորը փնտրել: Դժբախտաբար, ճիշտ հակառակը տեղի ունեցաւ եւ պատերազմի աւարտի առաջին իսկ օրէն, մեղաւորներու եւ դաւաճաններու փնտուտուքը գերագոյն նպատակ դարձաւ, նաեւ գործիք՝ իշխանափոխութեան հասնելու համար: Նոյնիսկ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններէն ետք, տակաւին կը շարունակուի նոյն երեւոյթը, հակառակ անոր, որ ժողովուրդը իր ընտրութիւնը կատարեց եւ կը թուար, որ խորհրդարան անցած ուժերը պիտի լծուէին երկրի առջեւ ծառայած խնդիրներու լուծման, այլ ոչ թէ անիմաստ եւ անպտուղ բանավէճերու: Այսօր, տարածաշրջանային լուրջ վերադասաւորումներ տեղի կ'ունենան, որոնք Հայաստանի եւ Արցախի համար հնարաւորութիւններ եւ վտանգներ կը պարունակեն: Իսկ այդ հնարաւորութիւններէն առաւելագոյնս օգտուելու եւ վտանգները վանելու միակ գրաւականը, արտաքին ճակատին վրայ՝ քաղաքական բոլոր ուժերու համերաշխ եւ ներդաշնակ համագործակցութիւնն է, մէկ կողմէն նաեւ ցոյց տալու, որ հակառակ ներքին տարակարծութիւններուն, երբ հարցը կը վերաբերի դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման, երկրի սահմաններու անձեռնմխելիութեան եւ Հայաստանի պետականութեան պահպանման, մենք միակամ ենք: Մէկ խօսքով, գոյութեանական հարցերը երբէք պէտք չէ քաղաքականացնել եւ այս տեսանկիւնէն, միասնականութիւնը ոչ թէ բարի ցանկութիւն է, այլ բացարձակ ու կենսական անհրաժեշտութիւն:

Հ. - Կառուցողական եւ համախմբութեան սկզբունքներով առաջնորդուող ՍԴՀԿ-ը մենք տեսանք վարչապետին առաջարկած՝ արտախորհրդարանական ուժերու հետ ժողովներուն: Կը կարծե՞ք որ այդ որեւէ դրական ներդրում պիտի ունենայ:

Պ. - Նախ անգամ մը եւս կ'ողջունենք վարչապետի այս նախաձեռնութիւնը, որ հնարաւորութիւն կ'ընձեռն արտախորհրդարանական կուսակցութիւններուն՝ երկիրը չուզող կարեւորագոյն հարցերու վերաբերեալ իրենց մտայնութիւններն ու պատկերացումները ամենաբարձր մակարդակով ներկայացնելու եւ քննարկման առարկայ դարձնելու: Ինչպէս կը տեսնէք, ժողովները տեղի կ'ունենան կանոնաւոր կերպով եւ հոն հանգամանօրէն եւ կը քննարկուին օրակարգային հարցերը: Ու նկատի ունենալով, որ այդ ժողովները հրապարակային չեն, հնարաւոր կ'ըլլայ հեռու մնալ ամբոխավարութենէ՝ եւ զբաղիլ լուրջ եւ բովանդակային աշխատանքով: Անշուշտ, այս ժողովները խորհրդակցական բնույթ ունին եւ հիմնական նպատակը այն է, որ ժողովներէն բխող տեսակէտները եւ եզրայանգումները ծառայեն որպէս աղբիւր՝ վարչապետին եւ իր կառավարութեան՝ յառաջիկային առնելիք որոշումներուն կամ օրինագիծերուն:

Հ. - Վարչապետ Փաշինեանը վերջերս մասնակցեցաւ Ամերիկայի Գալաթիոնի հրաւիրած՝ «Յանուն ժողովրդավարութեան» առցանց համաժողովին: Այս մասնակցութիւնը ի՞նչ կը նշանակէ Հայաստանի համար:

Պ. - Մենք պիտի ընդունինք, որ Հայաստանին տրուած՝ դէպի ժողովրդավարութիւն ընթացող երկիրի գնահատականը, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան 2,6 միլիոն եւրոյի աջակցութեան տրամադրումը պերճախօս վկայութիւնն են այն փաստի, որ ժողովրդավարութեան առումով, Հայաստան կը գտնուի ճիշտ ուղիի վրայ: Այդ տեսանկիւնէն, Հայաստանի մասնակցութիւնը «Յանուն ժողովրդավարութեան» համաժողովին մենք դրական կը գնահատենք եւ այն մտավախութիւնը, որ մեր մասնակցութիւնը կրնայ բարդութիւններ առաջացնել մեր երկրին համար, տեղին չենք գտնէր, որովհետեւ մենք պէտք է առաջնորդուինք բացառապէս մե՛ր պետական շահերով, այլ ոչ թէ մտահոգուինք ուրիշ երկրի շահերը պաշտպանելով: Դժբախտաբար, երկար տարիներ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը գործած է Ռուսաստանին հաճոյանալու



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏՕՔԹ. ՀԱՄԲԻԿ ԵՒ ՆԱՅԻՐԱ
ՍԱՐԱՅԵԱՆ**

Հարցազրույց 135-Ամեայ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկեր Համբիկ Սարաֆեանի Հետ

Կամ չնեղացնելու տրամաբանութեամբ, երբ յատակ պիտի ըլլար, որ ոչ մէկ պետութիւն իր պետական շահը չի ստորադասեր այլ երկրի շահերուն: Նման մօտեցում միայն կը տանի դէպի աւելի մեկուսացում եւ աւելի կախեալ կը դառնանք ուրիշներէն, ինչ որ բացարձակապէս անընդունելի է: Անշուշտ, մեր յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, որպէս ռազմավարական դաշնակից, պէտք է շարունակեն ըլլալ շատ գործնական եւ անկեղծ: Երկկողմանի ակնկալութիւնները եւս շատ յատակ սահմանուած պէտք է ըլլան, բաց միեւնոյն ժամանակ պէտք է արժանապատիւ կերպով մեր քաղաքականութիւնը վարենք, միշտ նպատակ ունենալով պահպանել Հայաստանի ինքնիշխանութիւնը եւ պետութեան կենսական շահը:

3.- Վերջին շրջանին շատ կը հոլովուի թուրքիոյ կամ Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագրի շուրջ խօսակցութիւնը: Ինչքանով իրատեսական կամ իրականացաւի կը գտնէք այդ մէկը:

Պ.- Նշանաւոր խօսքը, որ չկան յաւերժ թշնամիներ եւ յաւերժ բարեկամներ, այսօր ալ ի գորտ է: Աշխարհի մէջ կան երկիրներ, որոնք որեւրեք թշնամիներ եղած են եւ իրար դէմ երկարամեայ պատերազմներ մղած են, պատճառելով ահաւելի մարդկային ու նիւթական վնասներ, իսկ այսօր անոնք կը համագործակցին: Օրինակ Ամերիկա եւ Վիեթնամ, կամ Իսրայէլ եւ արաբական երկիրներ: Անշուշտ որպէս հայ, բնական է, որ պատմական եւ ներկայիս իրողութիւններէն բխած շատ բուռն եւ բացասական զգացումներ ունինք անոնց հանդէպ, սակայն Հայաստան, որպէս պետութիւն չի կրնար զգացումը որպէս քաղաքականութիւն որդեգրել: Արաբը կրնայ հրեան համարել թշնամի, գործածելով այդ բառակապակցութիւնը, սակայն պետականօրէն հիմա արաբական շատ երկիրներ ջերմ յարաբերութիւններ ունին Իսրայէլի հետ, ինչպէս օրինակ Ծոցի երկիրները, որոնք միշտ եղած են պաղեստինեան պայքարին դրօշակակիրները եւ այդ պայքարը ֆինանսաւորողները: Սա մեզի համար ուսանելի պահ է: Այդ երկիրները այդ քայլը առին իրենց պետական շահերէն մեկնելով: Նոյնն ալ մեր պարագան պէտք է ըլլայ. եթէ մեր պետական շահերուն կը նպաստէ յարաբերութիւններու բնականոնացումը, ուրեմն մենք այդ քայլին ընդառաջ պէտք է երթանք: Այսինքն ելակէտը պիտի ըլլայ ոչ թէ պատմական յիշողութիւնը եւ անոր վրայ հիմնուած զգացումները, այլ՝ պետական, գործնական մօտեցումը: Ո՞րն է երկրին համար կարեւորը. ունենալ՝ ապրանքափոխանակութեան եւ տարանցիկ փոխադրութեան համար բաց ճանապարհներ բոլոր հարեւաններուն հետ, թէ՞ յաւերժ մնալ շրջափակուած եւ պատերազմական լարուած վիճակի մէջ գտնուիլ երկու հարեւաններու հետ: Յարաբերութիւնները բնականոնացնել անշուշտ չի նշանակեր մոռնալ ու անտեսել պատմութիւնը, այլ կը նշանակէ մեր հարեւաններուն հետ կանխատեսելի յարաբերութիւններ ունենալ:

3.- Երբ կը խօսուի թուրքիոյ հետ յարաբերութիւններու եւ հաւանական պայմանագրի մասին, անմիջապէս կիրքերը կը բորբոքին եւ դաւաճանութեան պիտակներ կը փակցուին: Ըստ ձեզի, կա՞յ եզր մը, երբ այլեւս դաւաճանութիւն չի համարուիր այդ քայլը:

Պ.- Դժբախտաբար, պիտակաւորումը տարիներով շահարկուած երեւոյթ մըն է, ոչ միայն մեր երկրին մէջ: Պիտակաւորումը միշտ կրցած է կանխել կամ զսպել որեւէ նոր մօտեցման ձգտում: Յստակ է, թուրքիոյ մասնակցութիւնը Ատրպէյճանի կողքին՝ Արցախեան պատերազմին ընթացքին թարմացուց այդ երկրի նկատմամբ մեր պատմականօրէն ձեւաւորուած ցասման եւ զայրոյթի զգացումները, սակայն ինչպէս վերը նշեցի, որպէս պետութիւն պարագան այլ է եւ կարեւոր է գտնել հետեւեալ հարցին պատասխանը՝ ո՞րն է թուրքիոյ շահը Հայաստանի հետ յարաբերութիւններու բնականոնացման մէջ եւ աւելի կարեւորը, որ՞ն է մեր շահը: Թուրքիոյ պարագային, ընդդիմացողներու առաջին պատասխանը կ'ըլլայ փանթուրանիզմը եւ այդպիսով հարցը կը փակուի: Սակայն, հարցը աւելի տնտեսական է քան քաղաքական: Քաղտնիք չէ, որ բոլոր երկիրները կը ձգտին հասնիլ տնտեսական առաւելութեան եւ հզօրացման, որովհետեւ հզօր տնտեսութիւն կը նշանակէ հզօր երկիր, մանաւանդ թուրքիոյ համար, որ կը յաւակնի տարածաշրջանի գերտէրութեան տիրողութիւն: Հայաստանի հետ յարաբերութիւններու բնականոնացումը թուրքիոյ համար լայն հնարաւորութիւն կը ստեղծէ ցամաքային ճանապարհով ապրանքաշրջանառութեան մէջ մտնել եւ Ատրպէյճանի, ե՛ւ Միջին Ասիոյ հետ: Քաղաքականապէս, այդ յարաբերութիւններու բնականոնացումը թուրքիոյ համար, բացի


Յեղասպանութեան ճանաչման գործընթացի ճնշման տակէն դուրս գալու նպատակ հետապնդելէ, որեւէ այլ նշանակութիւն չունի: Իսկ Հայաստանի համար կը ստեղծուի հնարաւորութիւն, աւելի կարծ ճանապարհով ունենալ ելք դէպի Սեւ ծով եւ ցամաքային ուղիով կապով բացուիլ միջին արեւելեան երկիրներու շուկաներուն հետ: Այսինքն, տնտեսական առումով ունինք հայելային պատկեր թուրքիոյ հետ: Ամենամեծ խնդիրը կը մնայ քաղաքականը եւ հոս է, որ մենք պէտք է մէկդի դնենք մեր նախապաշարումները եւ պատրաստակամ ըլլանք, ուղիղ եւ չմիջնորդաւորուած խօսելու թուրքիոյ հետ: Պէտք է նշել նաեւ, որ նախկին անյաջող փորձերը բաւարար պատճառ չեն կրնար ըլլալ կանխորոշելու հաւանական անբարենպաստ ելքը: Վերջ ի վերջոյ, երբ յարաբերութիւն գոյութիւն չունի, ուրեմն նաեւ կորսնցնելու ոչինչ կայ: Հետեւաբար, նոյնիսկ համեստ տեղաշարժ դէպի բնականոնացում ողջունելի կ'ըլլայ:

3.- Սահմաններու բացումը Ատրպէյճանի հետ սահմանագատման եւ սահմանագծման օրինակ մէ՞ջ կը գտնուի: Այս հոլովոյթը ծուղակ է, թէ՞ հնարաւորութիւն:

Պ.- Ատրպէյճան, դժբախտաբար, յաղթողի վեհանաճարութիւն չի ցուցաբերեր: Իր բոլոր քայլերը մէկ նպատակ կը հետապնդեն՝ պարտադրել Հայաստանին, որ իր ինքնիշխան տարածքէն միջանցք տրամադրէ: Նոյեմբեր 9-ին կնքուած պայմանագրին մէջ միջանցքի մասին խօսք չկայ, այլ՝ կը նախատեսուի բոլոր ճանապարհներու ապաշրջափակում: Սահմանագատման աշխատանքները ուզենք թէ՛ չուզենք տեղի պիտի ունենան: Հոս է նաեւ մեր թերացումներէն մին. անցնող 25 տարիներուն մենք հաւատացած էինք, որ այս իրավիճակը յաւերժ պիտի մնայ եւ երբէք չմտածեցինք մեր սահմանները մեր կողմանէ ձգել եւ այդ սահմանները պաշտպանելու աշխատանք տանիլ: Սահմանագատում չընել կը նշանակէ ընդմիշտ պատերազմական իրավիճակի մէջ գտնուիլ Ատրպէյճանի հետ, մանաւանդ, երբ հիմա շատ աւելի երկար սահմաններ ունեցանք անոր հետ: Յստակ է, որ երկու կողմերն ալ իրենց համար ամենանպատակաւոր քարտէզները պիտի ներկայացնեն եւ այդքան ալ հեզասահ պիտի չընթանայ այդ աշխատանքը, սակայն այս պարագային Ռուսաստանի դերակատարութիւնը, որպէս միջնորդ եւ իրաւարար կարեւոր պիտի ըլլայ: Ըստ իս, Ատրպէյճանին համար այսօր շատ աւելի հրատապ է միջանցքի հարցը քան թէ սահմանագատումը, որովհետեւ միջանցքը ռազմավարական եւ տնտեսական կարեւոր նշանակութիւն ունի Ատրպէյճանի եւ թուրքիոյ համար: Ե՛ւ ռազմագերիները ազատ չարձակելը, ե՛ւ անընդհատ սահմանային ոտնձգութիւնները մէկ նպատակ ունին՝ առաւելագոյն ճնշում բանեցնել Հայաստանի վրայ միջանցքը կորզելու համար, ինչ որ Հայաստանի ինքնիշխանութեան համար՝ չափէն աւելի մեծ վտանգ է:

3.- Նաեւ անդրադառնա՞նք «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին հանդէպ տեղի ունեցող հակափոփակական տնտեսական:

Պ.- Մենք բազմիցս այդ մասին արտայայտուած ենք, որ մեզի համար բացարձակապէս անընդունելի է հիմնադրամի քաղաքական շահարկումը: Հիմնադրամի ստեղծումէն ի վեր, անկախ Հայաստանի օրուայ իշխանութիւններուն հետ գործակցող կամ ընդդիմադիր դիրք ունենալէն, մենք գիտակցաբար երբեք թոյլ չենք տուած մեզի՝ քաղաքականացնել հիմնադրամը եւ շահարկել անոր անունը: Պատճառը շատ պարզ է, հիմնադրամը բացի համահայկական երեւոյթ ըլլալէ, նաեւ շղկապող օղակ է ամբողջ աշխարհի հայութեան եւ իր մէջ խորհրդանշական գեղեցիկ արժէք մը ունի: Իսկ անոնք որոնք, այսօր հիմնադրամին վստահելիութիւնը կասկածի տակ կը դնեն, անդառնալի վնաս կը պատճառեն անոր հեղինակութեան: Հիմնադրամը պետական կառույց մը չէ, հիմնադրամը հարիւր տոկոսով կամաւոր սկզբունքներու վրայ հիմնուած կառույց է եւ երբ վստահութիւնը կը կորսուի, երբ կասկածը կը սկսի մարդոց մէջ արմատաւորուիլ, որքան ալ յետոյ փորձենք հակառակը ապացուցել, վերականգնելը գրեթէ անհնար կը դառնայ: Անընդունելի է նաեւ այս հարցին հրապարակային արծարծումը, երբ գոյութիւն ունի շատ պատկառելի եւ լայն համահայկական ներկայացուցչութեամբ յագեցած հոգաբարձուներու խորհուրդ, որուն պարտականութիւնն է վերահսկել հիմնադրամի աշխատանքները: Եթէ նոյնիսկ գոյութիւն ունէին հիմնաւորուած մտահոգութիւններ, ապա ճիշտ



Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխաւոր Իրադարձութիւններուն

Մոսկուայի Մէջ Կայացաւ Փութին-Փաշինեան-Ալիեւ Զանդիպում



Յունուար 11-ին, Մոսկուայի մէջ կայացաւ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներու հանդիպում, որու ընթացքին ստորագրուեցաւ նոր յայտարարութիւն՝ փոխադրային միջանցքներու մասին: Հանդիպումի աւարտին կայացած համատեղ մամուլի ասուլիսի ընթացքին Իլհամ Ալիեւ շեշտեց, որ զարաբաղեան խնդիրը այսուհետ պատմութիւն է: Իսկ Նիկոլ Փաշինեան ընդգծեց, որ խնդիրը, ի հարկէ, կարգաւորուած չէ եւ հարցերէն մէկը Ղարաբաղի կարգավիճակի հարցն է, եւ որ Հայաստան պատրաստ է շարունակել բանակցութիւնները այս հարցի շուրջ՝ ԵԱՀԿ Մինսքի շրջանակի ծիրէն ներս: Հայաստանի վարչապետը նաեւ ընդգծեց, որ ցաւօք չէ յաջողուած կարգաւորել նաեւ գերիներու հարցը: Սակայն ասոր հետ մէկտեղ Փաշինեան ընդգծեց, որ Յունուար 11-ին ստորագրուած համաձայնագիրը չափազանց կարեւոր է: Այս պահուն կարելի է ըսել, որ երկրորդ եռակողմ յայտարարութիւնը կը վերաբերի Նախիջեւանի միջանցքին, մանրամասնութիւնները, սակայն, յայտնի չեն:

Քրեմլինին մէջ կայացած վլատիմիր Փութին-Փաշինեան-Ալիեւ եռակողմ հանդիպումը Հայաստանի վարչապետի եւ Ատրպէյճանի նախագահի առաջին հանդիպումն էր պատերազմէն յետոյ:

Բանակցութիւններու մեկնարկին, Ռուսաստանի նախագահ՝ վլատիմիր Փութին գոհունակութեամբ ընդգծեց, որ Նոյեմբեր 10-ին ստորագրուած հրադադարը կը պահպանուի, իսկ համաձայնագրի կէտերը հետեւողականօրէն կ'իրագործուին: Փութինի խօսքով, Մոսկուայի օգնութեամբ պատերազմէն յետոյ Ղարաբաղ վերադարձած է շուրջ 48 հազար փախստական: Ռուսաստանի օգնութեամբ տեղի ունեցած է գերիներու եւ գոհուած ներու մարմիններու փոխանակում: Հայկական կողմը այս բանակցութիւններու նախօրէին յայտարարած էր, թէ բանակցութիւններու հիմնական թեման գերիներու հարցն է:

Գարեգին Բ. Կը Շարունակէ Պահանջել Փաշինեանի Հրաժարականը

Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը դարձեալ պահանջեց վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը՝ միաժամանակ յայտարարելով, թէ եկեղեցին վերադառնալու մարմին է, որ կ'առաջնորդուի ազգային ու պետական շահերով, Յունուար 28-ին Եռաբլուրի մէջ լրագրողներու հետ հարց ու պատասխանի ժամանակ յայտարարեց Գարեգին Երկրորդը: «Ես այս նուիրական սրբավայրում չէի ցանկանայ որեւէ քաղաքական հարցերի անդրադառնալ, բայց քանի որ հարցը հնչեց, ասեմ, որ մեր համոզումներում, մեր դիրքորոշումներում որեւէ փոփոխութիւն չկայ», նշեց Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Լրագրողներու այն հարցին, թէ իր յայտարարութեանն յետոյ ի՞նչ հետեւութիւն ըրաւ, երբ տասնեակ հազարաւոր քաղաքացիներ դուրս չելան փողոց եւ չպահանջեցին օրուայ իշխանութեան հրաժարականը, կաթողիկոսը արձագանգեց. «Մենք որեւէ կերպով յորդոր եւ կոչ չենք ուղղել, որ ժողովուրդը դուրս գայ փողոց եւ համապատասխան գործողութիւններ իրականացնի, մենք յորդոր ենք ուղղել Հայաստանի

Հանրապետութեան վարչապետին: Մեր հիմնաւորումները առկա են մեր խօսքի թեքսթում»:

Լրագրողներու այն հարցին, թէ ստեղծուած իրավիճակին մէջ, կը տեսնէ՞ եկեղեցւոյ մեղքը՝ հաշուի առնելով, որ երկար տարիներ եկեղեցւոյ տարբեր հոգեւորականներ կը կապուէին ինչ որ քորուփցիոն գործարքներու հետ, վեհափառ հայրապետը արձագանգեց. «Իւրաքանչիւր անձի կարելի է մեղադրանք ներկայացնել, պէտք է այդ մեղադրանքները փաստուեն, պէտք է այդ մեղադրանքները հաստատուեն եւ այդ ժամանակ կարելի է խօսել եւ քննադատել, պատասխանատուութեան կանչել ընդհուպ նաեւ եկեղեցուն, եկեղեցու ղեկավարութիւնը»:

Արցախի Նախագահը Առաջին Անգամ Ըլլալով Հանդիպեցաւ Ատրպէյճանի Պաշտօնական Ներկայացուցչին Հետ

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան Փետրուար 12-ին առաջին անգամ ըլլալով հանդիպեցաւ Ատրպէյճանի պաշտօնական ներկայացուցչին հետ:



Հանդիպման ընթացքին քննարկուած են գերիներու վերադարձին, այնպէս կ'որոշուէր որոնման առնչուող եւ մարդասիրական հարցեր: Ներկայ էին նաեւ Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէն՝ Արմէն Աբաղբեանը եւ Արցախի մէջ Ռուսաստանի խաղաղապահ զօրակազմի հրամանատար՝ Ռուստամ Մուրատովը: «Ալիեւն ասել չեմ կարող: Հանդիպումը տեղի է ունեցել այն տարածքում, որը այս պահին ռուսական խաղաղապահների վերահսկողութեան տակ է», ըսաւ Արցախի նախագահի մամուլի խօսնակը: Հարցին, թէ Ատրպէյճանական կողմէն ով մասնակցած է հանդիպման, Լուսինէ Աւանեսեան արձագանգեց. «Այդ տեղեկութիւնը հրապարակելու իրաւասութիւնը արդէն Ատրպէյճանական կողմինն է, մենք հրապարակել ենք, թէ ով է եղել մեր կողմից»:

Քառակողմ հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ Արցախեան առաջին պատերազմի ընթացքին անհետ կորած համարուող Ատրպէյճանի քաղաքացիներու ճակատագիրը պարզելուն վերաբերող հարցեր: Ինչ կը վերաբերի հանդիպման ձեռք բերուած պայմանաւորութիւններուն, Լուսինէ Աւանեսեան մանրամասնութիւններ չներկայացուց:

Ամերիկեան Գոնկրետի Աւելի Քան 100 Անդամներ Պայտընի Վարչակազմին Կոչ Ըրին Սատարելու Հայաստանին Եւ Արցախին

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան աւելի քան 100 անդամներ երկկուսակցական նամակով Պայտընի վարչակազմին կոչ ըրին յստակ քայլերով սատարելու Արցախի գոյատեւման:

ԱՄՆ-ի պետական քարտուղարին եւ պաշտպանութեան նախարարին հասցեագրուած նամակով ընդգծուած էր Լեւոնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած ճգնաժամի լրջութիւնը, որ առաջացած է անցեալ տարուայ աշնան:

Գոնկրետիկները կ'առաջարկեն ԱՄՆ-ի կողմէ շտապ գործողութիւններ՝ հետեւեալ առաջնահերթութիւններով. ԱՄՆ-ի արտակարգ օգնութիւն, որ Արցախի ժողովուրդին հնարաւորութիւն տայ վերակառուցելու իրենց համայնքները եւ վերակազմակերպելու իրենց կեանքը՝ առանց հետագայ արիւնահեղուութեան վախի: ԱՄՆ-ի վերաներգրաւումը տարածաշրջանային կայուն կարգաւորման որոնման մէջ, որ հիմնուած ըլլայ ինքնորոշման հիմնարար իրաւունքի վրայ՝ պաշտպանելով Արցախի անվտանգութիւնը եւ բացառելով նոր պատերազմի բռնկումը: Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի եւ հակամարտութեան կարգաւորման գործով գայն՝ որպէս օրինական բանակցողի ճանաչում: ԱՄՆ-ի ղեկավարութեան կողմէ հայ գերիներու ազատ արձակման ապահովում: Ամերիկեան հաշուետուողականութիւն, ներառեալ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի բարձրաստիճան պաշտօնեաներու



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՌՈԶԻՆ

ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխաւոր Իրադարձութիւններուն

Նկատմամբ պատժամիջոցներու կիրառում, Պաքուին ԱՄՆ-ի օգնութեան կասեցում եւ 907-րդ բանաձեւի պահանջներու կատարում:

Մարտի 1-ի Տարելիցին Առօրէ Եղի Ունեցաւ Բազմահազարանոց Հանրահաւաք

Հայաստանի Ընդդիմադրութիւնը Վերսկսաւ Հանրահաւաքներ Ու Երթեր Կազմակերպել



Երկար դադարէ ետք, փետրուար 20-ին Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ «Հայրենիքի Փրկութեան Շարժում» անուան տակ հանդէս եկող ընդդիմադիր 17 կուսակցութիւններու հանրահաւաքը: Շարժման մէջ ընդգրկուած կուսակցութիւնները կը պահանջէին վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը:

Շարժման վարչապետի թեկնածու Վազգէն Մանուկեան յայտարարեց, որ Փաշինեանը ինքնակամ չի հեռանար եւ առաջարկեց երկու տարբերակ: Առաջինով, ըստ Մանուկեանի, «պէտք է ջարդել» եւ իրենց կողմէ գրաւել վարչապետի յենարանները, որոնց շարքին ժողովուրդը, ուժային կառույցներն ու իշխանական խմբակցութեան պատգամաւորները: Ան ըսաւ որ, ժողովուրդին պէտք է բացատրել, թէ ինչ իրավիճակի մէջ է երկիրը, իսկ ուժային կառույցներու ներկայացուցիչներուն ու «Իմ Քայլի» պատգամաւորներուն նկատմամբ պէտք է կոշտ ըլլալ, միեւնոյն ժամանակ համոզել անոնց: Նիկոլ Փաշինեանին հեռացնելու որպէս երկրորդ տարբերակ Մանուկեանը «կայծակնային ապստամբութիւն» առաջարկեց:

Յաջորդող օրերուն եւս տեղի ունեցան երթեր եւ ցոյցեր, որոնց ընթացքին փակուեցան մայրաքաղաք Երեւանի կարգ մը կեդրոնական ճանապարհները, սակայն ժողովուրդի մասնակցութիւնը փոքր ու ժամանակ մը ետք Շարժումը կորսնցուց իր թափը:

Հայաստանի Զինուած Ուժերու Աղմկայարոյց Յայտարարութիւնը՝ Վարչապետի Եւ Կառավարութեան Հրաժարականի Պահանջով

Հայաստանի Զինուած Ուժերու Գլխաւոր Շտապը փետրուար 26-ին հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, բողոք արտայայտելով «անհեռատես եւ չհիմնաւորուած պատճառներով ՀՀ զինուած ուժերի գլխաւոր շտապի պետի առաջին տեղակալին պաշտօնէն ազատման առնչութեամբ»:

«Երկրի համար այսպիսի ծանր պայմաններում նման որոշումը հակապետական եւ անպատասխանատու քայլ է: «ՀՀ վարչապետը եւ կառավարութիւնն այլեւս ի վիճակի չեն ընդունելու ատակ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային եւ ճակատագրական իրավիճակում: «ՀՀ զինուած ուժերը երկար ժամանակ համբերատար կերպով հանդուրժում էր գործող իշխանութեան կողմից զինուած ուժերը վարկաբեկելուն ուղղուած գործը սակայն ամէն ինչ ունի իր սահմանները»:

Այս յայտարարութեանէն ետք, վարչապետ Նիկոլ Փաշինեան որոշ կայացուց Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի պետ՝ Օննիկ Գասպարեանը պաշտօնէն ազատելու կապակցութեամբ:

Օննիկ Գասպարեան ժամանակ մը ընդդիմացաւ այդ որոշումին, սակայն աւելի ուշ հեռացաւ իր պաշտօնէն:



2008 թուականի Մարտ 1-ի իրադարձութիւններու տարելիցին առթիւ Նիկոլ Փաշինեանի հրաւիրած հանրահաւաքին՝ Հանրապետութեան հրապարակին վրայ ներկայ էր հազարաւոր ժողովուրդ: Վարչապետը անդրադարձաւ երկիրը յուզող շարք մը թեմաներու: Նախ ան յայտարարեց, որ կը մնայ իր կարծիքին, թէ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ՝ Օննիկ Գասպարեանը պէտք է լքէ այդ պաշտօնը: Աւելին ըսաւ, որ Գասպարեան, վարչապետի ու կառավարութեան հրաժարականը պահանջող յայտարարութիւնը ստորագրած է երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեանի դրդմամբ:

«Հայաստանի մէջ 2021 թուականի Մարտ 1-ը կը դիմաւորենք այնպիսի իրավիճակի մէջ, երբ առկայ են դարաբաղեան 2-րդ պատերազմի ծանր հետեւանքները, հազարաւոր զոհերու փաստը, անհետ կորածներու հարցը, բազմաթիւ գերիներու հանգամանքը, բռնութեան քարոզը, զինուած ուժերը քաղաքական գործընթացներու մէջ ներքաշելու գործընթացը», - ըսաւ Փաշինեան՝ նշելով, որ այդ ամէնը երկիրն ու ժողովուրդին նոր մարտահրաւէրներու առջեւ դրած է: Երկրի ղեկավարը նաեւ հրապարակաւ օրէն խոստացաւ երթալ արտահերթ ընտրութիւններու առաջնահերթ խորհրդարանական խմբակցութիւններու համաձայնութեան պարագային:

Փաշինեան Յայտարարեց Որ Որոշում Կայացուց Երթալ Արտաքին Ընտրութիւններու

Մարտ 28-ին, Արմաւիրի մարզ կատարած իր այցելութեան ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ յառաջիկային հրաժարական պիտի տայ՝ Յունիս 20-ին արտահերթ ընտրութիւններու պատրաստուելու համար: «Այդ առաջիկայում ես հրաժարական եմ տալու, Ապրիլին, հրաժարական եմ տալու ոչ թէ գնալու, այլ հրաժարական եմ տալու, որպէսզի տեղի ունենան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ՝ այդ ընթացքում շարունակելով լինել վարչապետի պարտականութիւնները կատարող: Եթէ դուք կը վերահաստատէք ձեր մանդատը, ես, մեր թիմը կը շարունակենք ծառայել ձեզ շատ աւելի լաւ, քան նախկինում, եթէ չէք վերահաստատի, մենք խոնարհաբար մանդատը կը փոխանցենք նրան, ում դուք կ'ընտրէք», յայտարարեց Փաշինեան:

Սահմանադրական Դատարանը Անվաւեր ճանչցաւ Մարտ 1-ի գործով մեղադրեալ Ռոպերթ Քոչարեան Դեմ Կիրառուած Օրէնքի Յօդուածը

Հայաստանի Սահմանադրական Դատարանը (ՍԴ) Սահմանադրութեան հակասող եւ անվաւեր ճանաչաւ Մարտ 1-ի գործով մեղադրեալ Ռոպերթ Քոչարեանին եւ անոր նախկին երկու ենթակառուցներուն առաջադրուած յօդուածը՝ սահմանադրական կարգը տապալելու մասին:

Բարձր դատարանը եզրայանգած էր, որ 10-15 տարուայ ազատազրկում սահմանող Քրէական օրէնսգրքի 300.1 յօդուածը կը հակասէ Սահմանադրութեան 78րդ եւ 79-րդ յօդուածներուն: Այս յօդուածները



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅՈՎՍԷՓ ԵՒ ՄԱՐԻ ՄԵԼԳՈՆԵԱՆ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխաւոր Իրադարձութիւններուն

օրէնքներու համաչափութեան եւ որոշակիութեան սկզբունքներու մասին են:

Միջազգային իրաւունքի մասնագէտ՝ Արա Ղազարեանի կարծիքով՝ Սահմանադրական դատարանը հաստատեց այս հարցով վեներիկի յանձնաժողովի եւ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի կարծիքները: Միեւնոյն ժամանակ, բարձր դատարանի որոշումը, որ չ'առնչուի Մարտ 1-ի մայր գործին, Ղազարեան շեշտեց, որ ասիկա չի նշանակեր, որ Մարտ 1-ի այդ գործը տապալուած է:

ՄԴ-ի որոշումէն յետոյ պաշտօնաթող նախագահի պաշտպան՝ Արամ Վարդեանեան յայտարարեց, որ Քոչարեանի նկատմամբ քրէական հետապնդումը պէտք է դադարեցուի անյապաղօրէն:

Ամերիկայի Նախագահ Ծօ Պայտըն Պաշտօնապետ Գանչցաւ Հայկական Յեղասպանութիւնը



Միացեալ Նահանգներու նախագահ ծօ Պայտըն պաշտօնապետ Գանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը եւ այդ բառերը երկու անգամ օգտագործեց Ապրիլ 24-ի իր պատգամին մէջ:

«Ամէն տարի այս օրը մենք կը չիշենք անոնց, որոնք զոհուեցան Օսմանեան ժամանակաշրջանի Հայոց Յեղասպանութեան ընթացքին, եւ մենք պարտաւոր ենք կանխել նման չարագործութիւններու կրկնութիւնը», ըստւած էր Սպիտակ Տան կողմէ հրապարակուած յայտարարութեան մէջ:

Այսպիսով Պայտըն կը դառնայ Ամերիկայի առաջին նախագահը, որը 1915 թուականի մէկուկէս միլիոն հայերու կոտորածները կ'անուանէ Յեղասպանութիւն: «1915 թուականի Ապրիլի 24-ին սկսած օսմանեան իշխանութիւններուն կողմէ կոստանդնուպոլսոյ հայ մտաւորականութեան եւ համայնքի առաջնորդներու ձերբակալութիւններէն յետոյ, մէկուկէս միլիոն հայեր տեղահանուեցան, կոտորուեցան կամ մահուան ուղարկուեցան՝ բնաջնջման նպատակով: Մենք կ'ոգեկոչենք Մեծ Եղեռնի զոհերը, որպէսզի նախկին սարսափները երբեք մոռացութեան մատնուած չըլլան պատմութեան համար: Եւ մենք կը չիշենք, որպէսզի մշտապէս զգօն մնանք ատելութեան կործանարար ազդեցութեան դէմ պայքարի ընթացքին՝ անոր բոլոր դրսեւորումներով», կ'աւելցնէր Միացեալ Նահանգներու 46րդ նախագահը:

Նոյն օրը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան նամակ յղեց Միացեալ Նահանգներու նախագահ ծօ Պայտընին՝ շնորհակալութիւն յայտնելով Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելուն առթիւ: Վարչապետը ընդգծեց, որ այն հօր քայլ մըն է ճշմարտութեան եւ պատմական արդարութեան ճանապարհին:


Նախագահ Պայտընի այս յայտարարութիւնը լայն արձագանք գտաւ Ամերիկեան եւ մի իջազգային լրատուամիջոցներու կողմէ:

Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեփ Էրտողան քննադատեց Պայտընին որոշումը եւ յայտարարեց որ, պատրաստ է Հայաստանի հետ յարաբերութիւններու Հաստատման: Ան կոչ ըրաւ իր ամերիկացի պաշտօնակից՝ ձոզէֆ Պայտընին վերանայելու Հայոց Յեղասպանութեան պաշտօնական ճանաչման որոշումը՝ գայն «սխալ քայլ» որակելով: Այս մասին Թուրքիոյ նախագահը յայտարարեց Ապրիլ 26-ի երեկոյեան Անգարայի մէջ կայացած ասուլիսի ժամանակ: Էրտողանի այս

յայտարարութիւններէն պարզ դարձաւ, որ պաշտօնական Անգարան առաջմ գերծ կը մնայ Ուաշինկթոնի նկատմամբ կտրուկ քայլեր առնելէ՝ հարկ համարելով միայն չիշենք երկու երկիրներու միջեւ տասնամեակներու ընթացքին ձեւաւորուած դաշնակցային յարաբերութիւններու մասին:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը Ողջունեց Նախագահ Ծօ Պայտընի Ուղերձը

ԱՄՆ Նախագահ ծօ Պայտընի կողմէ Հայոց Յեղասպանութեան փաստի ճանաչումին առթիւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ ողջունելով Սպիտակ Տան ուղերձին մէջ «Յեղասպանութիւն» բառի օգտագործումը:



«Պատմական փաստի ճշգրիտ բնութագրումը առաջին հերթին կը սրբագրէ ԱՄՆ նախորդ վարչակազմերու բացթողումը եւ ընդմիշտ վերջ կը դնէ Յեղասպանութեան հարցի շահարկման տխուր աւանդութիւն, ինչպէս նաեւ ամենամեայ սպասում-ներուն եւ յուսախաբուութիւններուն, որոնց կ'ենթարկուէին ամերիկահայ համայնքը եւ համայն հայութիւնը: Այս կարեւոր իրադարձութիւնը առաւել եւս կ'իմաստաւորուի այսօր՝ ի տես Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ սանձազերծուած վերջին պատերազմի ընթացքին Թուրքիոյ ունեցած դերակատարութեան եւ հայ ժողովուրդի դէմ դրսեւորած բացայայտ թշնամական վերաբերմունքին: Միաժամանակ, սա աներկբայ մերժումն է թրքական իշխանութիւններուն վարած ժխտողական քաղաքականութեան եւ յստակ ուղերձ, որ տասնամեակներ երկարող քաղաքական սպառնալիքներու եւ ապատեղեկատուութեան արշաւը ձախողած է եւ եկած է սեփական պատմութեան հետ առերեսուելու պահը», - ըստւած էր ՍԴՀԿ կեդրոնի յայտարարութեան մէջ:

Եւրոպական Խորհրդարանը Կոչ Ըրաւ Թուրքիոյ՝ Գանչնալու Հայոց Յեղասպանութիւնը



Մայիս 19-ին, Եւրոպական Խորհրդարանը ընդունեց բանաձեւ՝ կոչ ընելով Թուրքիոյ ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը, յայտարարելով որ այդ քայլը ինչ որ ճանապարհ կը հարթէ հայ եւ թուրք ժողովուրդներու հաշտեցման համար:

Եւրոպական Խորհրդարանի պատգամաւորները մտահոգութիւն յայտնեցին Թուրքիոյ թշնամական արտաքին քաղաքականութեան կապակցութեամբ՝ մասնաւորապէս Յունաստանի եւ Կիպրոսի նկատմամբ, ինչպէս նաեւ Սուրիոյ, Լիպիոյ, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ Թուրքիոյ մասնակցութեան առնչութեամբ: Խորհրդատուական բնոյթ ունեցող բանաձեւը Եւրոպական Խորհրդարանի կողմէ ընդունուեցաւ 480 կողմ, 64 դէմ եւ 150 ձեռնպահ ձայներով:

» » »

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՐԱ ԵՒ ՍՈՆԻԱ ՊԱՊԱՅԵԱՆ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխավոր Իրադարձութիւններուն

Ատրպէյճանական Ուժերը Պէտք է Դուրս Գան Հայաստանի Տարածքէն. Ըսաւ Նախագահ Մաքրոն

Յունիս 1-ին այցելելով Փարիզ, Հայաստանի վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցաւ Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոնի հետ: Երկու երկիրներու ղեկավարները նախ յայտարարութիւն յայտարարութիւն ըրին լրատուամիջոցներուն համար: Մաքրոն մասնաւորապէս նշեց, որ Հայաստան այս պահուն ճգնաժամային իրավիճակի մէջ կը գտնուի եւ ՀՀ-ի համար դժուար փուլին կը կայանայ Փաշինեանի այցը: Ան շեշտեց, որ Ֆրանսան պատրաստ է աջակցել եւ առաջին հերթին ռազմագերիներու եւ այլ ձերբակալուածներու վերադարձի հարցով, ինչպէս նաեւ ընդգծեց, որ Ատրպէյճանը պէտք է ետ քաշուի մինչեւ Մայիս 11-ի ելման դիրքերը, եւ որ սահմանագծման գործընթացը պէտք է տեղի ունենայ բացառապէս խաղաղ բանակցութիւններու միջոցով:

Արտահերթ Ընտրութիւններուն Փաշինեան Արձանագրեց Տպաւորիչ Յաղթանակ



Յունիս 20-ին կայացաւ Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները, որոնց ընթացքին Նիկոլ Փաշինեանի գլխավորած «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը ստանալով ձայներու 53,92 տոկոսը արձանագրեց համոզիչ յաղթանակ ու ստացաւ նոր մանտաթ՝ կառավարելու երկիրը չաջորդ հինգ տարիներուն:

Ռոպերթ Քոչարեանի գլխավորած «Հայաստան» դաշինքը ստացաւ ձայներու 21,04 տոկոսը, իսկ Սերժ Սարգսեանի աջակից «Պատիւ Ունեմ» դաշինքը՝ 5,23 տոկոս: Միայն այս երեք ուժերն են, որ ստացան բաւարար տոկոսներ՝ յաջորդ խորհրդարանէն ներս ներկայացուած ըլլալու համար:

Նոր խորհրդարանը կազմուեցաւ պիտի ունենայ 107 պատգամաւորներէ: «Քաղաքացիական Պայմանագիրը» ստացաւ 71 աթոռ, Քոչարեանի գլխավորած դաշինքը՝ 29 աթոռ, իսկ «Պատիւ Ունեմ» դաշինքը՝ 7 աթոռ:

Նիկոլ Փաշինեանի յաղթանակը տպաւորիչ էր նաեւ այն առումով, որ ան առաւելութեան հասաւ Հայաստանի բոլոր մարզերուն եւ մայրաքաղաք՝ Երեւանի մէջ: Երջաններուն մէջ Փաշինեանի ստացած տոկոսները 50-60-ի միջեւ էին, սակայն Երեւանի մէջ 41 տոկոս: Ընդհանուր առմամբ Հայաստանի ամբողջ տարածքին Փաշինեան ստացաւ 687251 ձայն, իսկ Քոչարեան՝ 268165 ձայն:

Նոր խորհրդարանէն դուրս մնացին Գագիկ Մառուկեանի գլխավորած «Բարգաւաճ Հայաստան» եւ Էտմոն Մարուքեանի ղեկավարած «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնները, որոնք չկարողացան յաղթահարել 5 տոկոսի նուազագոյն շեմը:

Եւրոպական Միութիւնը 2.6 Միլիար Եւրո Գումար Կը Յատկացնէ Հայաստանին

Եւրամիութիւնը պատրաստակամութիւն յայտնեց յառաջիկայ 5 տարիներուն 2,6 միլիար Եւրոյի գումար յատկացնել Հայաստանի մէջ հինգ առանցքային ծրագիրներու, որոնց շարքին՝ Սիւնիքի մարզի

զարգացման համար: Փաստաթուղթը ներկայացուեցաւ Յուլիս 2-ին, Պրիւքսէլի մէջ:

Եւրոպական Յանձնաժողովը կը ծրագրէ.

1. Աջակցել 30,000 մանր ու միջին պիզնեսներուն՝ կայուն, նորարար եւ մրցունակ տնտեսութեան համար.

2. Խթանել սոցիալ-տնտեսական զարգացումը եւ հաղորդակցութիւնը՝ աջակցելով Հիւսիս-հարաւ միջանցքին.


3. Ներդրումներ կատարել տեղեկատուական տեխնոլոգիաներու, գիտութեան ու տեխնիկայի ոլորտներէն ներս.

4. Ամրապնդել հարաւային շրջաններու դիմադրողականութիւնը.

5. Ներդրումներ կանաչ Երեւանի համար՝ ուժանիւթի արդիւնաւէտ օգտագործման եւ բնութեան աւելի քիչ վնաս հասցնող աւտօբուսներու գործարկման ուղղութեամբ:

Արեւելեան գործընկերութեան ծիրէն ներս Հայաստանը Հարաւային Կովկասի մէջ Եւրոպական Միութեան կողմէ ամենալայնածաւալ աջակցութիւնը ստացած երկիրն է, այս մասին յայտարարեց փոխվարչապետի պաշտօնակատար՝ Մհեր Գրիգորեան, Եւրոպական Յանձնաժողովի հարեւանութեան եւ ընդլայնման հարցերով յանձնակատար՝ Օլիվըր Վարհէիի հետ կայացած հանդիպումէն յետոյ:

ՍԴՀԿ Կեդրոնի Անդամներու Հանդիպումը Վարչապետ Փաշինեանի Հետ



Օգոստոս 10-ին վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներ՝ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեանը, Կեդրոնական վարչութեան անդամ՝ Խաչիկ Քեշիշեանը եւ Հայաստանի վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը:

Ողջունելով ՍԴՀԿ ներկայացուցիչները՝ վարչապետ Փաշինեան նշեց. Ողջունում եմ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պատուիրակութեանը եւ շատ ուրախ եմ այս առիթի համար: Մենք միշտ կապի մէջ ենք եղել կուսակցութեան հետ՝ ե՛ւ կեդրոնական մարմնի, ե՛ւ հայաստանեան մարմնի: Ուրախ եմ արձանագրել, որ կուսակցութիւնը՝ նաեւ հայաստանեան կազմակերպութիւնը մասնակցում է արտախորհրդարանական ուժերի նոր ձեւաւորուած ձեւաչափին, որտեղ մենք արդէն երկու հանդիպում ենք ունեցել: Նաեւ փորձում ենք այնպէս անել, որ որոշումներ ընդունենք եւ յստակ քայլերով առաջ շարժուենք: Ի հարկէ, այս համագործակցութիւնը եւ երկխօսութիւնը շատ կարեւոր է մեզ համար՝ հաշուի առնելով կուսակցութեան շատ կարեւոր եւ բացառիկ դերը Սփիւռքի մեր համայնքներում, ներգրաւուածութիւնը եւ ներդրումն ընդհանրապէս հայ ժողովրդի քաղաքական մշակոյթի ձեւաւորման գործում:

Ընկ. Սարաֆեան իր պատասխան խօսքին մէջ ըսաւ. «Շնորհակալ ենք, պարոն վարչապետ: Մենք շնորհակալ ենք, որ կը հիւրընկալէք մեզ այստեղ: Նախ թող տուէք, որ համայն Հնչակեան ընտանիքի անունով շնորհաւորեմ ձեզ՝ վերանշանակման առիթով: Մեր պատմութեան կ'երեւի ամենաճակատագրական շրջանին, անշուշտ, դուք մեզմէ բոլորէն լաւ կը



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԱՀԱՆ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխաւոր Իրադարձութիւններուն

Կատկերացնէք եւ տեղեակ էք բոլոր մարտահրաւէրներուն մասին ե՛լ ներքին, ե՛ւ արտաքին: Ինչպէս տեսանք, նաեւ ընտրութիւններէն յետոյ ձեր կատարած քայլերը, մանաւանդ միասնականութեան եւ համախմբուածութեան ուղղուած մտեցումները ե՛լ խորհրդարանական, ե՛ւ արտախորհրդարանական ձեւաչափով, կը կարծենք, որ շատ ճիշդ են: Որովհետեւ եթէ նախապէս միասնականութեան, համագործակցութեան եւ համերաշխութեան մասին կոչները ցանկութիւններ էին, այսօր ուղղակի բացարձակ անհրաժեշտութիւն:

Նորընտիր Ազգային ժողովի Նախագահ Ընտրուեցաւ Ալան Սիմոնեան



Օգոստոս 2-ին մեկնարկեց Հայաստանի 8-րդ գումարման Ազգային ժողովի աշխատանքները: Մինչեւ խորհրդարանի ղեկավարութեան ընտրութիւնը նիստը կը վարէր ամենատարեց պատգամաւոր՝ ազգութեամբ Եգիպտի Կնեսազ Հասանովը:

Խորհրդարանի առաջին նստաշրջանը սկսաւ տէրուական աղօթքով, զոր հնչեցուց Ամենայն Հայոց կաթողիկոս՝ Գարեգին երկրորդը:

Ապա նախագահ Արմէն Սարգսեան առաջին նիստի առիթով շնորհակտրեց խորհրդարան անցած պատգամաւորները եւ մաղթեց յաջողութիւն եւ արդիւնաւէտ աշխատանք:

Փակ գաղտնի քուէարկութեամբ Աժ նախագահ ընտրուեցաւ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան կողմէ առաջադրուած Ալեն Սիմոնեանը: Քուէարկութեան մասնակցեցաւ 71 պատգամաւոր, որոնք բոլորն ալ քուէարկեցին Ալեն Սիմոնեանի ի նպաստ:

Ըստ Սահմանադրութեան 149րդ յօդուածի Ա. մասի՝ Հանրապետութեան նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազօրութիւններու ժամկէտը սկսելէ յետոյ վարչապետ նշանակեց խորհրդարանական մեծամասնութեան ներկայացուցած թեկնածուին՝ Նիկոլ ֆաշինեանին:

Փաշինեան Մասնակցեցաւ Իրանի Նախագահի Երդմնակալութեան Արարողութեան

Վարչապետ՝ Նիկոլ ֆաշինեան թեհրանի մէջ մասնակցաւ Իրանի նորընտիր նախագահ՝ Իպրահիմ Ռայիսիի երդմնակալութեան պաշտօնական արարողութեան:

Միջոցառումը տեղի ունեցաւ Իրանի Մեծ խնայններ: Իրանի նախագահը ողջունեց պատուիրակութիւններու ղեկավարները եւ համատեղ լուսանկարման արարողութենէն ետք անոնց ուղեկցեցաւ դահլիճ:

Իպրահիմ Ռայիսիի երդման արարողութեան ներկայեղան աշխարհի 73 պետութիւններ ներկայացնող աւելի քան 100 պաշտօնեաններ, անոնց կարգին՝ 10 պետութեան ղեկավար, խորհրդարաններու 20 նախագահ եւ 11 արտաքին գործոց նախարար:

Աշխատանքային այցով Թեհրան գտնուող Նիկոլ ֆաշինեան Օգոստոս 5-ին նաեւ հանդիպում ունեցաւ նորընտիր նախագահ՝ Իպրահիմ Ռայիսիի հետ:

Հայաստան Թոքիոյ Ողիմպիական Խաղերուն Նուճեց Չորս Մետալ

Հայաստան Թոքիոյ մէջ կայացած 32-րդ Ամառնային Ողիմպիական Խաղերուն նուաճեց 4 մետալ: Ծանրորդ՝ Սիմոն Մարտիրոսեանը եւ յունահռոմէական ոճի ըմբիշ՝ Արթուր Ալեքսանեանը տիրացան արծաթեայ, իսկ մարմնամարզիկ՝ Արթուր Դաւթեանն ու բռնցքամարտիկ՝ Յովհաննէս Պաշկովը՝ պրոնզեայ մետալներու:

Ընդհանուր դասաւորման մէջ Հայաստան գրաւեց 69-րդ տեղը՝ 206 երկիրներու մէջ:

Հայաստանի եւ Արցախի Մէջ Նշուեցաւ 44-օրեայ Պատերազմի Առաջին Տարեկիցը

Սեպտեմբեր 27-ին, 44-օրեայ պատերազմի մեկնարկի տարեկիցը Լեռնային Ղարաբաղի մէջ նշեցին լիշատակի միջոցառումներով: Արցախի բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան կարգ մատուցուեցաւ, Մայր Տաճարէն ներս ներկայ էր Ղարաբաղի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանը:

Ժամը 11-ին, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ մէկ րոպէ լուծիւն յայտարարուեցաւ, ապա Արցախի նախագահի առաջնորդութեամբ երթ կատարուեցաւ Ստեփանակերտի յուշահամալիր՝ Եղբայրական գերեզմանատուն, ուր ամփոփուած են Արցախեան պատերազմներու զոհերու աճիւնները:

Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ Պատուոյ պահակախումբի կողմէ պահպանուող ծառերուն մօտ վարչապետ Նիկոլ ֆաշինեանին ներկայացուեցաւ Երեւանի բուսաբանական այգիին մէջ հիմնուելիք «Կեանքի Պուրակի» նախագիծն ու յառաջիկային նախատեսուող աշխատանքները:

Արհ. Տ. Ռաֆայէլ Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպս. Մինասեան Ընտրուեցաւ Կաթողիկէ Հայոց 21-րդ Պատրիարք



Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Սինոտիը Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց 21-րդ Կաթողիկոս-Պատրիարք ընտրեց Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպս. Մինասեան:

Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքը ստացաւ Ամենապատիւ եւ Գերբերջանիկ Տ. Ռաֆայէլ Պետրոս 21-րդ Մինասեան անունը, ինչպէս կը տեղեկացնէ Սուրբ Աթոռը:

Արհ. Տ. Ռաֆայէլ Արքեպս Մինասեան 2011-էն մինչեւ օրս Առաջնորդն է Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուքրանիոյ եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց, կը հանդիսանայ «Հայկական Քարիտաս» բարեսիրական եւ հասարակական կազմակերպութեան նախագահ: Տ. Ռաֆայէլ Արքեպս. Մինասեան երկար տարիներ ծառայած է Լոս Անճելըսի մէջ, ուր իր օրով կառուցուեցաւ Կլէնտէլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկէ եկեղեցին:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԱՐԺ. Տ. ՏԱԹԵՒ ԱԲ. ՔՀՅՆ. ԵՒ ԵՐԷՑԿԻՆ ԱՐԱՔՍԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխաւոր Իրադարձութիւններուն

Ղարաբաղի Հակամարտութիւնը Կը Սպասէ Իր Արդարացի Կարգաւորման. Ըսաւ Նիկոլ Փաշինեան ՄԱԿ-ի Նստաշրջանին Առջեւ



ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին առջեւ իր ունեցած հեռակայ ելոյթի ընթացքին Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, Հայաստան պատրաստ է կառուցողական երկխօսութեան, որ պէտք է հանգեցնէ տարածաշրջանէն ներս կայուն եւ յարատեւ խաղաղութեան հաստատման: Այս առումով ՀՀ-ն կ'առաջարկէ իրականացնել ռազմագերիներու, պատանդներու եւ այլ պահուող բոլոր անձանց վերադարձը, ինչպէս նաեւ վերսկսել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման խաղաղ գործընթացը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահութեան հովանիին տակ: «Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը չի կարող կասեցուել ուժի կիրառման միջոցով, եւ հակամարտութիւնը չի կարող լուծուած համարուել ուժի կիրառման արդիւնքում: Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը սպասում է իր արդարացի կարգաւորմանը», յայտարարեց Փաշինեան՝ աւելցնելով, որ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու միջնորդութեամբ իրականացուող շփումները կողմերուն հնարաւորութիւն կու տան գտնելու ընդհանուր եզրեր եւ ասպարէզ բանալու շատ հարցերու պատասխանները գտնելու համար: Ըստ Փաշինեանի՝ խաղաղութեան օրակարգին դէմ ուղղուած գործելակերպ է այն, որ Ատրպէյճան չի կատարեր Նոյեմբեր 9-ի Ղարաբաղի Հակամարտութիւնը Կը Սպասէ Իր Արդարացի Կարգաւորման,- ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Ան ընդգծեց, որ կան քաղաքացիներ, որոնց գերեզմարուած ըլլալու փաստը Ատրպէյճան մինչեւ օրս չի հաստատեր, հակառակ որ, անոնց գերութեան մէջ գտնուելու մասին կանյստակ ապացոյցներ: Փաշինեան անդրադարձաւ նաեւ տարածաշրջանային ճանապարհներու բացման, ինչոր եւս եռակողմ յայտարարութեան կէտերէն է: Ըստ Փաշինեանի՝ այս խնդրի լուծումը հնարաւորութիւն կը ստեղծէ տնտեսական կապերու ձեւաւորման համար, ինչպէս որ, խաղաղ զարգացման կարեւորնախապայմաններէն է: «Տարբերակներ կան, որոնք տարածաշրջանային մեկուսացման եւ թշնամութեան միջոցով արձանագրման նպատակ ունեն, բայց կան նաեւ այնպիսի տարբերակներ, որոնք ընդգծում են տարածաշրջանային փոխկապակցուածութիւնը եւ թշնամութեան միջոցով քայլ առ քայլ յաղթահարման միջոց կարող են դառնալ: Մենք հենց այս վերջին տարբերակի կողմնակից ենք: «Եթէ բացուի նաեւ Թուրքիան Հայաստանին կապող երկաթուղին, տարածաշրջանային կո-մունիկացիաների բացման թեման շատ աւելի մեծ մասշտաբներ կ'ունենայ», յայտարարեց Նիկոլ Փաշինեան:

Հայաստանի Մեջ Նշուեցաւ Անկախութեան 30-Ամեակը

Սեպտեմբեր 21-ին Հայաստան նշեց անկախութեան 30-ամեակը: Առաւօտեան, վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան, նախագահ՝ Արմէն Սարգսեան, Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ ԅարութիւնեան, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ՝ Ալէն Սիմոնեան եւ իշխանութեան այլ ներկայացուցիչներ այցելեցին «Եռաբլուրի» զինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելով Արցախեան 44օրեայ եւ քառօրեայ պատերազմներու հերոսներու յիշատակին: Այս

առթիւ վարչապետ Փաշինեան ծաղիկներ գետեղեց Սպարապետ Վազգէն Սարգսեանի, Անդրանիկ Օզանեանի շիրիմներուն եւ ծաղկեպսակ՝ յանուն Հայրենիքի կեանքը նուիրաբերած հայորդիներու յիշատակը յաւերժացնող յուշահամալիրին:

Օրուայ ընթացքին տեղի ունեցաւ ոստիկանական զօրքերու եւ նուագախումբի քայլերթը՝ Երեւանի փողոցներով: Երեկոյեան Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ գլխաւոր միջոցառումը, որը ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ Երեւանի բուսաբանական այգիէն ներս պիտի հիմնադրուի Կեանքի պուրակ՝ կենաց պուրակ, ուր արցախեան բոլոր պատերազմներու բոլոր զոհերու կենդանութիւնն ու ներկայութիւնը խորհրդանշող ծառեր պիտի սնկուին: «Պուրակի կուլմիացիան կը լինի կենաց ծառը՝ մեր բոլոր



նահատակներին եւ հայրենիքին տուած նրանց կեանքը խորհրդանշող: Դա չի լինելու յուշակոթող, լինելու է կենաց պուրակ, որտեղ վազվզելու, աղմկելու, խաղալու են երեխաները, երիտասարդները ժամանց են ունենալու, մեծահասակները ձեմելու են ու գրուցելու, եւ այդ պուրակը լինելու է նրա մասին, որ ահա այդ բոլոր մարդկանց, Հայաստանի ու Արցախի ապրելու համար են զոհուել նրանք», ըսաւ Փաշինեան:

Ամերիկահայ Արտեմ Փաթափութեան Դարձաւ Առաջին Հայ Նոպէլեան Մրցանակակիրը

Բժշկագիտութեան ոլորտի 2021 թուականի Նոպէլեան մրցանակը շնորհուեցաւ Ամերիկահայ հետազոտող՝ Արտեմ Փաթափութեանին եւ Տէյլիտ ձուլիւսին:



Նոպէլեան կոմիտէի հաղորդագրութեան համաձայն՝ մրցանակը շնորհուած է ջերմութեան եւ շօշափելիքի ընկալիչներու յայտնագործութեան համար:

54-ամեայ Արտեմ Փաթափութեան ծնած է Լիբանան: Ան աւարտած է Պէյրութի ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանը: Քաղաքացիական պատերազմի ընթացքին ընտանիքն ին հետ փոխադրուած է Միացեալ Նահանգներ:

Այսպիսով ան կը դառնայ առաջին Հայը որ անուանական կ'արժանանայ այս բարձր մրցանակին: Ներկայիս կը ղեկավարէ SCRIPPS գիտական հաստատութեան «Փաթափութեան փորձագիտական տարրալուծարանը»: Արտեմ Փաթափութեանին առաջին շնորհաւորողներէն եղաւ Հայաստանի նախագահ՝ Արմէն Սարգսեանը: Արտեմ Փաթափութեան օրդին է Լոս Անձելըսահայ յայտնի գրող եւ յօդուածագիր Սարգիս Վահագնի:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ՄՀԵՐ ՊԱՊԵԱՆ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխաւոր Իրադարձութիւններուն

Եւրոպական Յանձնաժողովը Հրապարակեց Ձեկոյց՝ Արցախեան Պատերազմին Թուրքիոյ Մասնակցութեան Մասին

Եւրոպական Յանձնաժողովը հրապարակեց զեկոյց՝ Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան գործընթացի վերաբերեալ: Հոն տեղ գտած են որոշ շեշտադրումներ Հայաստանի եւ Արցախի, ինչպէս նաեւ Թուրքիա բնակող հայերու վերաբերեալ:

«Թուրքիան առանցքային դերակատարում ունեցած է Լեւոնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի ռազմական ջանքերուն աջակցելու գործով՝ տրամադրելով ռազմական օգնութիւն, հետախուզական տուեալներ ու զէնք, եւ, ինչպէս կը հարորդուի, աջակցութիւն օտարերկրեայ զինեալներու տեսքով», նշուած էր Եւրոպական յանձնաժողովի զեկոյցով:

Կ'ըսուի նաեւ, որ Արցախեան պատերազմին Ատրպէյճանի կողմէ գանատական ճարտարագիտութիւններու օգտագործման պատճառով Գանատան չեղեալ համարած է ռազմական ապրանքներու եւ ճարտարագիտութիւններու՝ Թուրքիա արտահանման թոյլտուութիւնը:

Եւրոպական յանձնաժողովի զեկոյցին մէջ անդրադարձ կը կատարուի նաեւ 2007 թուականի Թուրքիոյ մէջ հայ լրագրող՝ Հրանտ Տինքի սպանութեան: Այդ մասին փաստաթուղթին մէջ նշուած է. «Սպանութեան մասնակից պետական պաշտօնեաներու դէմ դատական գործը աւարտեցաւ 2021 թուականի Մարտին՝ 77 մեղադրեալներէն 37-ի արդարացումով»:

Կալանաւորուեցաւ Պաշտպանութեան Նախկին Նախարար Դաւիթ Տոնոյեանը

44-օրեայ պատերազմի օրերուն ՀՀ Պաշտպանութեան նախկին նախարար՝ Դաւիթ Տոնոյեան կալանաւորուեցաւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) միջնորդութեամբ:




Սեպտեմբեր 30-ի հրապարակուած որոշումով 54-ամեայ Տոնոյեանը կը մեղադրուի առանձնապէս խոշոր չափերով վատնում կատարելու համար:

Նոյն գործով մեղադրեալ էր նաեւ բանակին զինամթերք մատակարարած ընկերութեան տնօրէն՝ «Պատրոն Դաւօ» մականունով յայտնի Դաւիթ Գալստեանը:

Հարցը կը վերաբերի բանակին ժամկէտը անցած հրթիռներ վաճառելու մասին:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Արմէն Սարգսեան Պատմական Այցեալութիւն Կատարեց Սէուտական Արաբիա



Հայաստան անկախութենէն ի վեր դիւանագիտական

յարաբերութիւններ չունի Սէուտական Արաբիոյ հետ եւ Հայաստանէն որեւէ պաշտօնեայ երբեւիցէ չէր այցելած այդ երկիր, նախագահի գրասենեակը Արմէն Սարգսեանի այցը որակեց պատմական քայլ:

«Այս աննախադէպ իրադարձութիւնը միանշանակ շրջադարձային է Հայաստանի միջազգային յարաբերութիւններում», յայտնեց նախագահականը:

Սէուտական Արաբիոյ մայրաքաղաք՝ Ռիատի օդակայանին մէջ Հայաստանի նախագահին դիմաւորեց այդ երկրի արտաքին գործոց պետական նախարար՝ Ատէլ Ալ Ճուպէյրը, իսկ պաշտօնական արարողակարգի համաձայն՝ օդակայանը բարձրացուած էր Հայաստանի պետական դրօշակը:

Ռիատի մէջ Սարգսեան մասնակցաւ Ապագայ Ներդրումներու Նախաձեռնութեան համաժողովին, որուն առնդեր քննարկումներ ունեցաւ Սէուտական Արաբիոյ գահաժառանգ՝ իշխան Մուհամմէտ Պին Սալմանի հետ:

ՀՀ նախագահը աշխատանքային այցով ուղեւորուեցաւ նաեւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ:

Մայիսի 12-էն Ասդին Ատրպէյճան Բռնագրաւած Է Հայաստանի Շուրջ 41 Քառակուսի Քմ. Տարածք. Յայտարարեց Փաշինեան

Նոյեմբեր 16-ին, ՀՀ Պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդեց, որ Ատրպէյճանական ՁՈՒ ստորաբաժանումները յարձակում գործած են արեւելեան սահմանագօտի տեղակայուած հայկական դիրքերուն վրայ եւ հայկական կողմը դիմած է համարժէք գործողութիւններու: Հայաստանի Ձինուած ուժերու 12 զինծառայող՝ 7 պայմանագրային եւ 5 ժամկէտային զերեվարուած են, յայտնեց Հայաստանի Պաշտպանութեան նախարարութիւնը:

Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ տեղի ունեցող իրադարձութիւններու լոյսն տակ, յաջորդական երկրորդ օրը ըլլալով տեղի ունեցաւ ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի նիստ, որու ընթացքին բացման խօսքով հանդէս եկաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Երեքշաբթի, Նոյեմբեր 17-ի նիստին Փաշինեան մասնաւորապէս, ըսաւ. «Մայիսի 12-ին մեկնարկած յարձակողական գործողութիւնների հետեւանքով Ատրպէյճանն բռնագրաւած է Հայաստանի շուրջ 41 քառակուսի քմ. ինքնիշխան տարածք: Միջազգային հանրութեան մեր գործընկերների լուծութեան պայմաններում Ատրպէյճանը շարունակում է իր յարձակողական գործողութիւնները: Իմ գնահատականը միանշանակ է, Ատրպէյճանը եւ նրան քաջալերող ուժերը թիրախաւորում են մեր ինքնիշխանութիւնը, մեր պետականութիւնը, անկախութիւնը: Այո, մենք այսօր ծանր օր ենք ունեցել, ծանր ժամանակներ ենք ապրում, բայց այսօր նաեւ ցոյց ենք տուել, որ մենք այստեղ ենք, կանք, պետութիւն ենք, մենք պետական ազգ ենք եւ պարտադրանքի լեզուն մեզ համար անընդունելի է: Մենք կարող ենք բանակցել, կարող ենք փնտուել եւ գտնել փոխընդունելի լուծումներ, մենք մեզ պահում ենք որպէս միջազգային հանրութեան պատասխանատու անդամ, բայց մենք թոյլ չենք տալ մեզ հետ խօսել անբարտաւանութեան լեզուով: Միջազգային հանրութեանը կոչ ենք անում Ատրպէյճանի յարձակողական դատապարտող հասցեական յայտարարութիւններ ընդունել», - ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Սոչիի Սեջ Կայացաւ Փութին-Ալիեւ-Փաշինեան Հերթական Հանդիպումը

Նոյեմբեր 26-ին Սոչիի մէջ տեղի ունեցաւ Փութին-Ալիեւ-Փաշինեան եռակողմ հերթական հանդիպումը, որու աւարտին հրապարակուեցաւ մի քանի կէտերէ բաղկացած յայտարարութիւն:

«Յաջորդ շաբաթ Հայաստանի, Ռուսաստանի ու Ատրպէյճանի փոխվարչապետները պիտի հանդիպին Մոսկուայի մէջ եւ յայտարարեն որոշակի պայմանաւորութիւններու մասին, որոնց շուրջ երեք երկիրներու առաջնորդները այսօր համաձայնած են»: Այդ մասին յայտարարեց Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութինը՝ իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինեանի հետ մօտ երեք ժամ շարունակուած բանակցութիւններէն ետք:

Փութին նշեց, որ բանակցութիւնները անցած են կառուցողական մթնոլորտի մէջ: «Մենք շատ մանրամասն խօսեցանք տնտեսական միջանցքներու, առաջին հերթին՝ երկաթուղային եւ ճանապարհներու



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ՀՄԱՅԵԱԿ ՄԱԹՈՍԵԱՆ

Ակնարկ՝ 2021-ի Հայկական Գլխավոր Իրադարձություններուն

ապաշրջափակման մասին», ըսած է Փուլիսը: Ռուսաստանի նախագահը յոյս չապրանք է, որ այսօրուայ՝ Նոյեմբեր 26-ի բանակցութիւններէն յետոյ տարածաշրջանի բոլոր կապերը եւ ճանապարհները բացուին: «Հաղորդակցութեան ուղիները, փոխադրային երթուղիները, որոնք այսօր եռակողմ ձեւաչափով քննարկեցինք, ծայրայեղ կարեւոր են, ընդ որում՝ կարեւոր տարածաշրջանի բոլոր երկիրներուն, անոնց կարգին՝ Ռուսաստանի համար, քանի որ մենք շահագրգռուած ենք, որ մեր ռազմավարական գործընկեր Հայաստանի հետ հաղորդակցութեան ուղիները ըլլան յուսալի, բազմակողմ, հեշտ գործածուող եւ ամբողջ տարին աշխատող», ըսած Ռուսաստանի նախագահը:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գոհաբանութեան Օրուան Թելեթրոնի Ընթացքին Հանգանակուեցաւ 12 Միլիոն Տոլար

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գոհաբանութեան Օրուայ 24-րդ տարեկան Միջազգային Թելեթրոնը ի մի բերաւ աշխարհասփիւռ հայութիւնը, կոչ ուղղելով շարունակական աջակցութիւն ցուցաբերել հայրենիքի վերականգնման, միաժամանակ հաշուետուութիւն ներկայացնելով անցեալ 12 ամիսներուն իրականացուած ծրագիրներու մասին:

«Վերակառուցել հայրենիքի հեռուոր համայնքները» նշանաբանով, Թելեթրոնը օժանդակութիւն ապահովեց 44-օրեայ պատերազմէն տուժած Հայաստանեան ու Արցախեան բազմաթիւ համայնքներու, ներառեալ մօտ 100,000 տեղահանուած ու բռնազաղթուած անձերու համար:

Թելեթրոնը տեղի ունեցաւ Նոյեմբեր 25-ին, Լոս Անճելըսի մէջ: Չորս-ժամեայ ձեռնարկի ընթացքին ելոյթ ունեցան համայնքային ղեկավարներ եւ դպրոցներու ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, եւ սիրուեցան կարճ վաւերագրականներ՝ ամբողջացուած ծրագիրներու, հայրենիքի մարդասիրական շարունակուող կարիքներուն, ու զանոնք հոգալու կոչուած նոր ծրագիրներու մասին: Մինչեւ Թելեթրոնի աւարտը, հաւաքուեցաւ \$12,351,000 գումարը:

Պրիւքսի Մէջ Կայացաւ Փաշինեան-Ալիեւ-Միշել Եռակողմ Հանդիպումը



Դեկտեմբեր 14-ին Պրիւքսի մէջ կայացաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը՝ մասնակցութեամբ Եւրոպական Խորհուրդի նախագահ՝ Շառլ Միշելի:

Նախքան եռակողմ հանդիպումը, Շառլ Միշել առանձին խորհրդակցութիւններ ունեցաւ Ատրպէյճանի եւ ապա Հայաստանի ղեկավարներուն հետ:

Ատրպէյճանի նախագահը եռակողմ հանդիպումէն առաջ դարձեալ խօսեցաւ «Զանգեզուրի Միջանցքի» մասին: ՆԱԹՕ-ի գլխավոր քարտուղար՝ Ենն Սթոլթեմյուրկի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, Ատրպէյճանի նախագահը յայտարարեց, թէ ան «պէտք է գործէ Լաչինի միջանցքին պէս»:

««Զանգեզուրի միջանցքի» բացման մասին կէտը նախատեսուած է Ատրպէյճանի, Ռուսաստանի եւ Հայաստանի ղեկավարներու 2020 թուականի

Նոյեմբեր 10-ի եռակողմ յայտարարութեամբ: Այդպիսով, սա պարտաւորութիւն է Հայաստանի համար» յայտարարեց Ալիեւ:

«Ատրպէյճանը փորձում է փակուղի մտցնել տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացման հարցը», դիմատետրեան գրառումով արձագանգեց Հայաստանի վարչապետը՝ շարունակելով. «Ատրպէյճանի նախագահի փորձերը տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացումը զուգահեռել Լաչինի միջանցքի հետ՝ որեւէ աղերս չունի մինչ օրս այդ թեմայով տեղի ունեցած քննարկումների, ստորագրուած յայտարարութիւնների հետ եւ անընդունելի է Հայաստանի համար»:

Երեւան Եւ Անգարա Նշանակեցին Իրենց Բանագնացները



Երեւանի եւ Անգարայի կողմէ նշանակուած բանագնացներ՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալ՝ Ռուբէն Ռուբինեան եւ Ուաշինկթընի մօտ Թուրքիոյ նախկին դեսպան՝ Սերտար Քըլըճ շուտով կը հանդիպին, այս մասին յայտնեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Մեւլութ Չաուշօղլուն:

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը տեղեկացուց որ, երկու երկիրներու յատուկ ներկայացուցիչներու հանդիպման ժամկէտներու վերաբերեալ հանրութիւնը պատշաճ կերպով կը տեղեկացուի ապագային:

Ընդհանուր առմամբ հայ-թրքական երկխօսութեան գործընթացի մասին հայկական կողմը բանագնացի նշանակումէն բացի, այլ տեղեկութիւն տակաւին չի յայտնէր: Գործընթացի մասին շարունակ տեղեկութիւններ կը հրապարակէ պաշտօնական Անգարան: Մասնաւորապէս, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Չաուշօղլուն յայտնեց, որ Հարաւային Կովկասի հարցերով զբաղող «3+3» խորհրդատուական հարթակի յաջորդ հանդիպումը տեղի կ'ունենայ Թուրքիոյ մէջ:

Առայժմ կողմերը չեն յստակեցուցած քննարկուելիք օրակարգերը:

Հայաստանը Ներկայացնող Մալենան Մանկական Եւրատեսիլի Յաղող Դարձաւ

Հայաստան երկրորդ անգամն ըլլալով, դարձաւ Եւրատեսիլի մանկական երգիչներու յաղթող՝ Հայաստանը ներկայացնող Մալենան՝ «Քամի Քամի» երգով գրաւեց առաջին տեղը:



14ամեայ երգչուհին առաջին տեղը գրաւեց ընդհանուր 224 միաւորով: 218 միաւորով երկրորդը Լեհաստանն է, 187 միաւորով երրորդ հորիզոնականը գրաւեց Ֆրանսան: Հայաստանը երկրորդ անգամն է, որ կը յաղթէ մանկական Եւրատեսիլին՝ առաջին յաղթողը Վլատիմիր Արզումանեանն էր՝ 2010 թուականին:

www.massispost.com

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԵՕՐՕՂԼԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԳԻՄՆԱՒՈՐԵՆՔ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ, ՀԱՄԱԽՈՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀԱՆԳՈՒՐԺՈՂՈՒԹԵԱՄԲ




ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԳԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ ՔԵՕՐՈՂԼԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ



Նկարագիր եւ ճակատագիր ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

«Նկարագիրը ճակատագիր է»: Գերակլիդոս (Ն.Ք. 540-475)
«ճակատագիրը պատահականութեան հարց չէ, այլ՝ ընտրութեան: Այն սպասելու բան չէ, այլ՝ նուաճելու»: Վիլհելմ Ժենինկա Պրայնը (1860-1925)



Հովհաննես Թումանյան

Երկար ամիսներու ինքնակամ դադարէ ետք, յուսախաբ սրտով կը նստինք գրելու այս խորհրդածութիւնները: Եւ հարցումը, որ կը տանջէ մեր միտքը՝ «ինչո՞ւ պատմութիւնէն դասեր չենք քաղեր եւ յաճախ կը կրկնենք նոյն սխալները»: Չենք խորհիր, որ խնդիրը կը կայանայ դարերու վրայ երկարող մեր պատմութեան մանրամասնութեանց անտեղեակ ըլլալուն մէջ: Ո՛չ: Տեղեակ ենք: Եւ ճիշդ այդ է, որ կը զարմացնէր մեզ, որ ինչո՞ւ կը թերանայինք դասեր քաղել անկէ: Ու վերջերս եկանք այն եզրակացութեան, որ խնդիրը պատմութեան հարց չէ, այլ՝ մշակոյթի: Մշակոյթը, որպէս համագումարը մարդուս զգացական, մտային ու գեղարուեստական կարողութեանց, կ'ազնուացնէ անոր հոգին, նպաստելով անոր նկարագրի կերտման եւ հոսակ ճակատագրի սահմանման: Հակառակ անոր, որ մենք կը դաւանինք բարձր մշակոյթի տէր ազգ մը ըլլալ, բայց եթէ ազնուօրէն հարց տանք թէ որքանո՞վ կը կիրառենք այդ մշակոյթը մեր աւօրեայ կեանքին մէջ, պիտի տեսնենք, որ մեր պատասխանը երբէք գոհացուցիչ պիտի չըլլայ:

Եթէ մեր բարձր մշակոյթը կիրառէինք մեր գործնական կեանքին մէջ, ապա փոխանակ մեր անձնական ու հատուածական շահերը հետապնդելու առաջնահերթութեան, պիտի գերադասէինք հետապնդել մեր հաւաքական ու ազգային շահերը: Պիտի չխեղաթիւրէինք մեր ազգի պատմութիւնը յօգուտ հատուածի մը շահերու: Պիտի չդիմէինք եղբայրասպան արարքներու, մեր ազգակիցը վերացնելով անոր տեղը գրաւելու համար: Պիտի ճիշդ դասերը քաղէինք մեր պատմութիւնէն ու չկրկնէինք նոյն սխալները պիտի չհասնէինք այն շատ համեստ վիճակին, որուն մէջ կը գտնուինք ազգովին: Փոխանակ «փոքր ածու» մնալու, հետեւելով Խորենացիի խորհուրդներուն, պիտի վերագտնէինք մեր հզորութիւնն ու դիրքը աշխարհի յառաջագէտ ժողովուրդներու կարգին: Երբ ակնարկ մը կը նետենք աշխարհի ժողովուրդներու պատմութեան վրայ, կը տեսնենք թէ ինչպէ՞ս ազգի մը իրարամէջ կռուական մասնիկներ գիտակցեցան ամբողջի բերելիք օգուտներուն եւ յաջողեցան միասնական ուժ դառնալ: Անոնք կարողացան այդ ընել, շնորհիւ ժողովուրդի մեծամասնութեան կողմէ գիտակցուած բարձր մշակոյթին, որ մղեց զիրենք այդ յաջողութեան: Կը տեսնենք թէ ինչպէ՞ս աղետալի պատահարներէ ետք, անոնք կարողացան ոչ միայն վերստին ոտքի կանգնիլ, այլ նուաճել նոր բարձրունքներ: Երկրորդ Աշխարհամարտէն ետք աւերակուած Գերմանիան եւ Ճաբոնը հրաշալի օրինակներ են միասնական ուժով, ջանասիրութեամբ, կարգապահութեամբ եւ ազգային շահի գերադասմամբ աննախադէպ նուաճումներու հասնելու:

Իսկ մենք ի՞նչ ըրինք երբ Խորհրդային Միութեան փլուզման հետեւանքով տիրացանք մեր անկախութեան: Փոխանակ Արցախեան հիանալի առաջին ազատամարտը հիմք դարձնելու յառաջիկայ նուաճումներու, շարաշահեցինք այդ յաղթանակը ներքին ընդհանրումներով իրար չհօգքացնելու եւ աւարը բաժանելու համար: Որ յանգեցաւ այս խաչատուակ վերջին պարտութեան, չար եւ նման հարիւրամեակ մը

առաջուայ կարսի խաչատուակութեան: Շատ իրաւացի էր Թումանեան երբ ատենին կը գրէր թէ «ներսից ենք փչացած» ու կը թելադրէր, որ «աշխարհի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր (այս) դժբախտութիւնը» եւ որպէս դարման մշակենք «ազգային իմաստութիւն, հոգու արիութիւն եւ առողջ բնագոյներ»: Յատկանիշեր, որոնք ամուր նկարագրի հիմնական արժէքներ են:

«Մասիս»ի 2 Յունուար 2016 թիւով լոյս տեսած մեր «Գնայունը եւ Մնայունը» յօդուածին մէջ, անդրադառնալով Թումանեանի «հոգու արիութիւն եւ առողջ բնագոյներ» բնութագրումին, մեր յօդուածը կ'եզրափակէինք հետեւեալ խօսքերով. «Ահաւասիկ «Մնայուն» արժէքներու եւս երկու օրինակ, որոնք պիտի նպաստեն մեր ինքնկատարելագործման ու յանգին «ազգային իմաստութեան», մեր մասամբ այլանդակուած ինքնութիւնը մաքրագործելու: Նիւթէն ու մակերեսէն անդին, հոգին ու խորքը գնահատելու: Բարի սրտեր, բարձր ոգիներ ու ազնիւ մարդիկ ծնելու: Շինարար աշխատանքէն անդին, ստեղծարար աշխատանքի կարեւորութեան գիտակցելու: Անձնական խրճիթէն անդին, ազգային շէնքի անհրաժեշտութեան հաւատալու: Արիութիւնը պէտք է ունենանք ամբոխին դէմ ծառանալու, ճանչնալու եւ խոստովանելու մեր թերութիւններն ու դժբախտութիւնները եւ Պարոյր Սեւակի համարձակութեամբ գոչելու՝ «Յանուն վաղուան ճշմարտութեան, թող որ այսօր լինեմ սխալ»:»

Հազարամեակներու մեր պատմութիւնը լի է հիանալի «դաս»երով, Արտաշէս Աշխարհակալի օրերէն մինչեւ մեր օրերը: Զարմանալին այն է, որ մենք թերացած ենք այդ դասերուն համապատասխան մշակոյթ ստեղծել եւ ըստ այնմ սերունդներ դաստիարակել համազգային տարողութեամբ: Երջապատուած ըլլալով բռնի ուժը գերադասող պետութիւններով, մեր ներքին կեանքի մէջ ալ որդեգրած ենք բռնի ուժի կիրառումը, անգիտանալով, որ «փոքր ածու»ներու պարագային, արժանապատիւ կեանք մը ունենալու բանալին կը կայանայ մշակոյթի մը ստեղծման մէջ, ուր համերաշխ ոգիի եւ հաւաքական ուժի գիտակցութիւնը հիմնական տեղ կը գրաւէ: Այդ գիտակցութեան կը հասնինք ազնիւ եւ ամուր նկարագրի տէր դառնալով: Որմէ ետք արդէն կը դադրինք ճակատագրապաշտ անհատներ ու հաւաքականութիւն դառնալէ եւ կը լծուինք մեր ճակատագրի կերտման, ըստ մեր հայեցողութեան, ոչ թէ որպէս արդիւնք պատահականութեանց:

Երբ ազնիւ նկարագրի տէր ես, չես գողնար մայրուղիի վրայ տեղադրուած ցուցանակը, քու անձնական թոնիրիդ կափարիչ սարքելու համար: Չես կործաներ լեռնազնացութիւնը զարգացնելու համար տեղադրուած ազգանշանները, մարդիկ քու անձնական ծառայութիւններդ կախեալ պահելու համար: Չես մեղադրեր ուրիշը քու ձախողութիւններուն համար եւ կ'ընդունիս սխալներդ ու թերութիւններդ ու կը սրբազրես զանոնք: Երբ ազնիւ նկարագրի տէր ես, օժանդակութեան ձեռք կ'երկարես խոստմնալից ու մանաւանդ տաղանդաւոր բայց կարեկից պատանիներու, զարգացնելու իրենց գիտութիւնը եւ նպաստելու ազգի բարգաւաճման: Կ'աջակցիս ազգանպաստ ծրագիրներու իրագործման, գիտակցելով անոնց համատարած բազմաբնոյթ օգուտներուն: Քու համապատասխան տուրքը կը ներդնես պետութեան գանձին, այդպիսով նպաստելով երկրի տնտեսական աճին, ժողովուրդի կենցաղի բարելաւման, սերունդներու դաստիարակութեան ու զարգացման, բանակի հզօրացման, եւ այլ համընդհանուր օգուտներու:

Պիտի հետեւի՞նք Գերմանիոյ եւ Ճաբոնի օրինակին, ընտրելու այն ճակատագիրը, որուն արժանի կը գտնենք ինքզինքնիս որպէս ազգ, թէ՞ պիտի շարունակենք մնալ գերին պատահականութեանց: Եղեռնի նախօրեակին, Օսմանեան Թուրքիոյ 18 միլիոն բնակչութեան 2 միլիոնը հայ էր եւ նշանակալից դերակատար մըն էինք: Պոլսոյ, ինչպէս նաեւ Թիֆլիսի եւ Պաքուի մէջ առաջատար դիրքի վրայ էինք: Բայց... չարողութեանց: Այսօր 3 միլիոն իսկ չկանք 84 միլիոննոց Թուրքիոյ եւ 10 միլիոննոց Ազրպէյճանի միջեւ: Հաւանականութիւնները մեր օգտին չեն: Որ պէտք է ստիպէ մեզի բազմապատկելու մեր ջանքերը հասնելու համար մեր նպատակին: Հայրենի ժողովուրդի կողքին ունինք 7 միլիոննոց սփիւռքահայութիւն, որ հաւանականութեանց նժարին մէջ զգալի տարբերութիւն մը կրնայ ընել: Բայց միայն եթէ միասնականութեան, ջանասիրութեան, կարգապահութեան եւ ազգային շահի գերադասութեան մշակոյթը ազգովին տիրապետող դառնալ մեր գործունէութեանց մէջ:

Պիտի տնօրինենք մեր ճակատագիրը, թէ՞ պիտի սպասենք ճակատագրի տնօրինման: «Լինել, թէ՞ չլինել»:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԿԱՐԻՆԷ
ԳՕՃԱՊԱՊԵԱՆ

Համառոտ Ակնարկ՝ 2021 Թուականի Միջազգային Տարին ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ

ՅՈՒՆՈՒՄ



Թրամբը պաշտօնազրկելու գործընթացն սկսաւ Գոնկըէսին մէջ: Երկու հայեր նշանակուած նախագահ Պայտընի վարչակազմին մէջ՝ ձէֆ Մարութեան եւ Ալք Հաճի Նազարեան: Ռուս ընդդիմադիր ղեկավար Ալեքսի Նավարնին Գերմանիայ վերադարձաւ հոն բուժուելէ ետք: Զանգուածային ցոյցեր Լիբանանի Թրիփոլի քաղաքին մէջ քովիտ-19ի դէմ: Ռուսիա արտակարգ զօրքեր կը մէկտեղէ Ուքրանիոյ սահմանամերձ շրջանը: Ափրիկեան ցամաքամասը հռչակուեցաւ ազատ առեւտրուի շրջան:

ՓԵՏՐՈՒՄՐԻՆ

ԱՄՆ-ի նախկին նախագահ Թրամփի դէմ դատավարութիւնն սկսաւ լսումներով: Մարիուանա թմրանիւթը ապաքրէականացաւ Նիու ձըրզի նահանգին մէջ, որով 21 տարեկանէն վեր եղողներն անպատիժ պիտի մնան: ԱՄՆ-ի Գոնկըէսի 100 անդամներ Պայտընի վարչակազմին կոչ ուղղեցին սատարելու Հայաստանին եւ Արցախին: ՄԱԿ-ը կոչ ըրաւ անյապող ազատ արձակելու Ղարաբաղի զինուորականներն ու այլ անձերը: 6-7 աստիճան երկրաշարժ Երեւանէն 8 քմ. հարաւ արեւելք: Կան նիւթական վնասներ: Ամերիկացի 54 ծերակուտականներ յորդերեցին Պայտընին ճնշում գործադրել թուրքիոյ վրայ:

ՄԱՐՏ

ԱՄՆ-ի Աթլանթա եւ Պոլտըր քաղաքներուն մէջ մահացու յարձակումներու զոհ գացին տասնեակ մը անձեր: Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Էրտողան կը յայտարարէ որ իր երկիրը դուրս կու գայ Իսթանպուլի Համագումարի որոշումներէն: 2 տարուան ընթացքին Իսրայէլի մէջ չորրորդ անգամ Քնէսէթի ընտրութիւններ: Էլիզապէթ Թագուհին թոռնիկը իշխան Հէրին եւ իր կինը Մէկանը կը հրաժարին արքայական ընտանիքի բոլոր իրաւունքներէն եւ կը տեղափոխուին Գալիֆօրնիա: Առաջին անգամ ըլլալով Հռոմի Պապը Նաթաֆի մէջ (Իրաք) կը տեսակցի մեծ Այաթոլլահ Ալի Ալ Սիսանիի հետ: Աւելի քան 500 միլիոն հոգի քորոնայի դէմ պատուաստուած աշխարհի մէջ:

ԱՊՐԻԼ

Մահացաւ Էլիզապէթ Թագուհին ամուսինը իշխան Ֆիլիպ 99 տարեկանին: Իսրայէլի 12 տարուան վարչապետ Բենիամին Նաթանիահու ընտրութեանց մէջ պարտուեցաւ եւ իր տեղը զիջեց Նաթթալի Պէնէթին: ԱՄՆ-ի նախագահ Ժօ Պայտըն պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը: Կարօ Փայլան Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու օրինագիծներ

կայացուց թուրքիոյ խորհրդարանի նախագահութեան: Նորոյթի աստղ Քիմ Քարտաշեան ընդգրկուեցաւ Forbes-ի միլիարտատերերու ցանկին վրայ: Ռուս Գասթրօ հրաժարեցաւ Գուպայի կոմունիստ կուսակցութեան առաջին քարտուղարի պաշտօնէն: Արդարեւ Գասթրօ եղբայներու 62 տարուան իշխանութիւնը վերջ կը գանչէր:


ՄԱՅԻՍ

Մէկ օրուան մէջ մօտ կէս միլիոն հոգի վարակուեցաւ քովիտին Հնդկաստանի մէջ: Մեթրոյի ահաւոր արկած Մեքսիքօ քաղաքին մէջ, 24 հոգի մահացած: Իրան կտրուկ կերպով դէմ արտայայտուեցաւ Հայաստանի սահմաններու փոփոխութեան: Մարօքի մէջ կին մը ծնունդ տուաւ իննորեակներու (9 նորածին): Այս դէպքն իր տեսակով երրորդն է աշխարհի մէջ: Գոլումպիայի մէջ հարկերու (tax) դէմ մէկ շաբթուան ցոյցերու ընթացքին 24 հոգի մահացաւ: Կենսոլորտի պաշտպան ամերիկեան գործակալութիւնը գործնական քայլեր առաւ ածխածինը 85% նուազեցնելու գալիք 15 տարիներուն: Հնդկաստանի մէջ օրական 4000 հոգի կը մահանայ քովիտին:

ՅՈՒՆԻՍ

Մրցանիչ եղող տաք օդ Գանատայի մէջ 121 աստիճան, նմանապէս տաք օդ Օրեկոն նահանգի եւ Գանատայի սահմանամերձ շրջաններուն մէջ: Նախագահ Պայտընի հրամանագրով Յունիս 10 կը յայտարարուի 1863-ին ցեղային խտրականութեան վերջ տրուելու տարեդարձ: Համաշխարհային առաջնորդներու 7 Գազաթափողովին քննարկեց քովիտ համավարակը, կլիմայական փոփոխութիւններու եւ միացեալ հարկերու (corporate tax) բազմազգ հարցերը: Քովիտ 19-ի վարակին դէմ պատուաստուածներու թիւը 3 միլիարդէն աւելի է: Զինաստան առաջին անգամ ըլլալով երեք տիեզերանաւորդներ առաքեց Թիանիօս տիեզերակայանէն: Նախագահ Պայտընի հանդիպումը Էլիզապէթ Թագուհին հետ:

ՅՈՒԼԻՍ



Ֆլորիտայի մէջ 12 յարկանի բնակարան մը փուլ եկաւ, 98 հոգիներ մահացան: Թուրքիոյ մէջ անտառային մեծ հրդեհներ: Ամառնային Ողիմպիական միջազգային խաղերն սկսան Թուրքիոյ մէջ, առանց մարզասէրներու ներկայութեան: Վենեզուէլլայի քաղաքական տագնապը կը շարունակուի: Երկիրն ունի 2 նախագահներ: ՄԱԿ-ի համար օրինաւոր նախագահն է Մատուօն: Իսկ իսլան կուսյածն նախագահի պաշտօնակատար հռչակուելով



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՐՓԻԱՐ ԵՒ ՀԵՐՄԻՆԷ
ՃԱՆՈՅԵԱՆ**

Համառօտ Ակնարկ՝ 2021 Թուականի Միջազգային Տարին

զինք կը ճանչնան աւելի քան 50 երկիրներ, ներառեալ ԱՄՆ-ը: Թունուզի նախագահ Քայս Սայիտը իր պաշտօնը ստանձնելէ ետք կ'առկախէ խորհրդարանը եւ պաշտօնէ կը հեռացնէ վարչապետը:

ՕԳՈՍՏՈՍ



ԱՄՆ-ի Լուսինայի, Ալյապամա եւ Միսիսիպի նահանգներուն մէջ հասարկութիւններու պատճառով 60 հոգի մահացաւ: Եղան նաեւ հողի սահանքներ եւ 60 մեռեալ: Քովիտ 19-ի համավարակի պատճառով ցարդ մահացած է 3 միլիոն 300 հազար հոգի: Օմիգրոն համավարակի տարածուիլը մեծ մտահոգութիւն պատճառեց աշխարհի բնակչութեան: Գաղթականներու մեծ հոսք Լատին Ամերիկայէն, Հիւսիսային Աֆրիկէն եւ այլ երկիրներէն: 7.2 տարողութեամբ մեծ երկրաշարժ Հայիթիի մէջ: Աւելի քան 2100 մեռեալ: Յարձակում Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի օդակայանին վրայ: Մեռելներու թիւն է 183, ներառեալ 12 ԱՄՆ-ի հպատակներ: Ամերիկայի Միացեալ Նահանգները իր վերջին զինուորներն ալ կը հեռացնէ Աֆղանիստանէն, 20 տարուան պատերազմին վերջ տալով:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքել հրաժարեցաւ: Սուրիացի վարձկաններու հեռացումը Լիպիայէն: Լիբանանի նորանշանակ կառավարութիւնն արժանացաւ խորհրդարանի վստահութեան քուէին: 8 ուսանողներ սպանուած եւ բազմաթիւ ուրիշներ վիրաւորուած Ռուսիոյ Բերմ քաղաքի համալսարանին մէջ: Անցնող մէկ տարուան ընթացքին Ռուսաստան 6775 թոն մարդասիրական օժանդակութիւն կատարած է Սուրիոյ: Կինիայի մէջ յաջող պետական հարուածով մը կը ձերբակալուի նախագահ Ալֆա Գօնտէն: Իշխանութեան գլուխը կ'անցնի Մամատի Տուսպան: Արժանիքի նախագահ Ալբերթո Ֆերնանտեսի դահիլիճի անդամներէն նշատ մը նախարարներ հրաժարեցան, քանի որ կառավարութիւնը պարտուած էր ընտրութեանց մէջ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Առաջին անգամ ըլլալով ԱՄՆ-ի քաղաքացի մը ձօնակա Պեգոս, դէպի տիեզերք թռիչք կատարեց եւ յաջող վերադարձ մը ունեցաւ անջրպետէն: 84 տարեկանին իր մահկանացուն կնքեց ԱՄՆ-ի առաջին սեւամորթ պետական քարտուղար Գոլին Փաուըրը: Արտեմ Փաթապուլեան առաջին հայն էր որ արժանացաւ 2021 թուականի բժշկագիտական նոպելեան միջազգային մրցանակին: G-20 գագաթաժողովի ծիրէն ներս Հոմի մէջ, ձօ Պայտըն հանդիպեցաւ Թուրքիոյ նախագահ Էրտողանին: Moderna-ի հիմնադիրներէն Նուպար Աֆէեան Forbes-ի ցանկին մէջ առնուեցաւ որպէս միլիարատէր:

ՆՈՅԵՄԲԵՐ

Հնդկաստանի մէջ արտակարգ անձրեւներու եւ ողողումներու պատճառով ջրհեղեղ յառաջանալով 60 հոգիներու մահուան պատճառ հանդիսացաւ: Հայաստան ընտրուեցաւ Իւնեսքոյի գործադիր խորհուրդի անդամ: Փութին եւ Մազրոն քննարկեցին Ղարաբաղի կարգաւորման հարցը: Աւստրիոյ երկրորդ մեծագոյն քաղաք Կրապ քաղաքի քաղաքապետ ընտրուեցաւ համայնավար մը: Կայացաւ կլիմայի փոփոխութեան համագումարը Կլասպոյի մէջ: ԱՄՆ-ի նախագահը 100 երկիրներու ղեկավարներուն հրաւեր ուղղեց մասնակցելու ժողովրդավարութեան միջազգային համագումարին:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Տօնական օրերուն Աւստրալիոյ մէջ արգիլուեցան ընկերային բոլոր հաւաքոյթները, քովիտ համաճարակի պատճառով: Նախագահ ձօ Պայտըն կոչ ուղղեց էրտողանին Հայաստանի հետ սահմանը բանալու: Եւրովիզիոնի մանկական երգերու առաջնութիւնը խլեց 14 ամեայ հայազգի երգչուհի Մարիանն: Դէպի Յունաստան գաղթականներ փոխադրող նաւ մը Եգէական ծովին մէջ շրջելով 13 հոգի մահացաւ: Տարեվերջի տօներուն առիթով հազարաւոր օդային թռիչքներ առկախուեցան օմիգրոն համաճարակի պատճառով: Յունաց Տիեզերական պատրիարք Բարթողոմէոս քովիտ-19 ժահրով վարակուեցաւ: 81 տարեկան պատրիարքը նախապէս պատուաստուած էր


135-Ամեայ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան

Շարունակուած էջ 5

պիտի ըլլար այդ հարցերը քննարկել հոգաբարձուներու խորհուրդին մէջ եւ գերծ մնալ հրապարակային յայտարարութիւններէ, որոնք անտեղի շահարկման դուռ բացին: 3.- 135-տարուայ կեանք ունեցող ՍԳՀԿ-ը իր պատմութեան ամբողջ ընթացքին եղած է ջատագովը Հայրենիքի շուրջ համախմբան եւ կառուցողական քայլերով հետապնդած է Հայրենիքին գերագոյն շահերը: Չնայած համաշխարհային առումով տակաւին շարունակուող անբարեմայաստ պայմաններուն, յառաջիկայ տարի ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ մշտնջենական կուսակցութեան յորելիմական տարեդարձը: Պ.- Յիշենք, որ այս տարին յոբելինական տարի էր նաեւ Հայ Մարմնամարզական Միութեան համար: Եթէ կուսակցական եւ յարակից միութիւններու գետնի վրայ մեր աշխատանքները սահմանափակուեցան եւ չկրցանք լայնամասշտաբ գործունէութիւն տանիլ, բաց զորոշ շրջաններու մէջ եւ ամենադժուար պայմաններու տակ հնարաւոր եղաւ նշել ՀՄՄ-ի հարիւրամեակը: Կը յուսանք, որ պիտի ունենանք հնարաւորութիւնը ըստ պատշաճի նշելու կուսակցութեան 135-ամեակը եւ մտադիր ենք Հայրենիքի մէջ կազմակերպել եզրափակիչ հանդիսութիւնը: Անշուշտ, մեզի համար մեծ հպարտութիւն է ժառանգորդը ըլլալ՝ հայ ժողովուրդի ծոցէն ծնած 135-ամեայ կուսակցութեան, որ հիմնադրութեան առաջին օրէն որդեգրեց «Ժողովուրդի մէջ, ժողովուրդի հետ եւ ժողովուրդին համար» նշանաբանը: Հնչակեան կուսակցութիւնը երբեք, եւ երբեմն նոյնիսկ ի վնաս իրեն, չէ առաջնորդուած նեղ ու հատուածական շահով, անսակարկ նուիրումով ծառայած է հայրենիքին եւ միշտ հաւատարիմ մնացած է իր դաւանած՝ սոցիալ դեմոկրատական գաղափարախօսութեան եւ սկզբունքներուն: Ինչպէս վերը նշեցի, մենք միշտ մեր հայեցողքը սեւեռած ենք դէպի հայրենիք եւ որպէս քաղաքական կուսակցութիւն կը յուսանք, որ կու գայ այն օրը, երբ Հայրենիքի մէջ քաղաքական պայքարը հիմնուած կ'ըլլայ գաղափարական մօտեցումներու վրայ, ի խնդիր հայրենիքի բարօրութեան եւ վերելքին: Մեր կուսակցական երգերէն մին կ'ըսէ. «Ուժ տանք ընկերներ մեր հայրենիքին, մեր հանգրուանը հոն պիտի լինի»: Բոլորիս ձգտումը այն է, որ հասնի այդ օրը, երբ Հայրենիքը դառնայ հզօր, բարգաւաճ եւ համայն հայութեան վերջին հանգրուանը:

Հարցազրոյցը վարեց՝
Լիւսի Տօքսնճեան

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՄԻՄԱ
ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԱՌԻԹՈՎ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ ԽԱՂԱՂ,
ԲԱՐԵԲԵՐ ԵՒ ԵՐՁԱՆԻԿ ՕՐԵՐ**

**ԴՈԿՏ. ՄԻԼՎԱ ԳԱՐԱՅԵԱՆ
ՏՕՔԹ. ԽԱՉԻԿ ԵՒ ՉԵԼԱ ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ
ԹԱՄԱՐ ԵՒ ՓԱԹԻԼ**



Massis Weekly

Volume 41, No. 50

Saturday, JANUARY 8, 2022

Prime Minister Nikol Pashinyan's Congratulatory Message On the Occasion of New Year and Christmas

Dear compatriots.

In these moments of the start of the New Year, our thoughts and hearts are first of all with our brothers and sisters and their families who sacrificed their lives for the homeland.

After the tragedy of the 44-day war of 2020, in many families that had lost their sons, babies were born: our martyrs fallen on the battlefield are being reborn.

They are reborn in the literal sense, because many newborns in 2021 bear the name, surname and patronymic of their martyred brother. Same name, surname, patronymic.

This is a profound revelation, the victory of life, the embodiment of mythology. born in 2001, dead in 2020, reborn in 2021.

I want to bow first to the fathers and mothers who have made such a decision, because they give a new impetus not only to their families, but also to our homeland, to live, to overcome despair, to believe in the future and to live for the future.

Encouraged by this process and taking into account the wishes of many families, the Government will launch a state program to restore reproductive health in the families of the victims starting from January 2022. And in all cases where it is not possible to fully restore reproductive health, the families of our martyred children will have the opportunity to apply to state-funded surrogate mothers.

From January 1, 2022, the program of state support for the third and each subsequent newborn starts, according to which each family, regardless of their social status, will receive 50 thousand AMD monthly state assistance for the third and each subsequent newborn until the age of six.

I am saying all this to show that the Revival is a state policy, and Revival should be the motto of 2022. I hope that in many of our families, babies named after martyrs that are relatives, friends, or even strangers will be born in 2022.

Such decisions, of course, are connected not only with financial, but also with more socio-psychological factors. Such decisions are made primarily by believing in the future, and restoring, strengthening and developing faith in the future is our greatest mission.

The success of the policy of opening an era of peaceful development for our homeland and the region is a way to strengthen faith in the future, and though we realize that it is not up to us alone, we will consistently pursue that path to change the situation and atmosphere around the Republic of Armenia and our region. Ensuring security is our biggest challenge today, and experience shows that peace is the most reliable way to ensure security.

Parallel to this, the key issue is the reform of our Armed Forces, the army. Armenia must have a professional army, moreover, with more and more involvement of women. In the strategic perspective, conscription should be significantly changed, transforming into mandatory combat training exercises, which should take place several times in a lifetime, with a certain frequency.

I want to emphasize that politically our army will not set a task of conquering territories, its task is to protect the security and territorial integrity of our country.

Dear people,

All the steps of the Government are aimed at revival and a peaceful future. The opening of regional communications, the delimitation and demarcation processes of the borders, yes, contain many risks, but also many opportunities, and our policy is aimed at managing and neutralizing the risks, and using the existing opportunities.

The settlement of the Nagorno-Karabakh conflict with the full protection of the rights of the Armenians of Artsakh is our strategic goal.

Our Government has always stood with Artsakh before and after the war. In 2021 alone, the Government provided more than 128 billion AMD (\$ 267 million) in assistance to Artsakh. According to the 2022 budget, we plan to allocate more than 144 billion AMD (\$ 300 million) to Artsakh, and we must also think about mechanisms to make these allocations and their use more effective.

Dear people,

2021 was a difficult year, which began with the socio-psychological and



political crisis caused by the horrors of war. At times, it seemed that post-war unrest would escalate into chaos and civil clashes. But I want to note also that 2021 became a proof of the viability of Armenia and the Armenian people, because to the surprise of many, we were able to return the process to a full political course, giving the citizens of the Republic of Armenia the opportunity to express themselves and make decisions of their own free will.

The early parliamentary elections in 2021 received great international attention because the international

community still finds it astonishing that Armenia was able to hold free, fair, and democratic elections in such conditions.

Today, yes, the international community sees Armenia as a leading force for democracy, and this is an achievement that we must not lose. Our task is to make democracy, the assessment of being democratic, a real factor for the security, prosperity and development of our country. Democracy should become the driving force of revival and the future. Armenia once again demonstrated its commitment to democracy and democratic values in the local elections in the period of October-December 2021.

Պոսթըն եկած առաջին հայն է գմիւռնիացի Ժողէֆ Իասիկի (Joseph Iasigi), 1835ին, որ տեղացիի մը հետ կը հիմնէ ներածումի արտածումի ընկերութիւն մը:

1867ին, Պոսթըն կու գայ Յակոբ (Jacob) Աւաքելեան, որպէս ծառայ՝ երկիր վերադարձող ուրիշ քարոզիչի մը: Ան հոն կը տեղաւորուի եւ կը

» » »

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ՉԱՒԷՆ ԱՍԼԱՆԵԱՆ

Հիւսիսային Ամերիկայի Սեջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Թեմի Հաստատունը

Հաստատէ Նիւ Ինկլընտ (New England) շրջանի ամենամեծ տպագրական ու գիրքի կազմարարական գործատեղին, որ յառաջիկային կը կոչուի Pilgrim Press:

Առաջին ամերիկահայ միլիոնատէրը Յակոբ Պոկրիկեանն է, ծնեալ իւրաքանչիւր՝ 1856ին: Ան Ուստր գաղթած է 1876ին: Ըստ իր պնդումներուն, իւրաքանչիւր Ուստր եկած առաջին հայն է: Ջրաղած է գորգավաճառութեամբ: Յակոբ 87 անգամ Ատլանտեանը անցած է՝ երբեմն իր հետ բերելով իր գիրքէն՝ Հիւսեյնիկէն, նոր գաղթականներ: Ան իրական սեռը քաջալերած է ուսանելու՝ անոնց յատկացնելով կրթութիւններ: Մահացած է 1931ին:

Ուստր մնացուն բնակութիւն հաստատած առաջին հայը՝ Յովհաննէս Ամիրխանեան Եագրճեան (John Writer), ծնեալ 1836ին կամ 1838ին՝ Ալեքսանդրապոլ (Գիւմրի), մեծցած կարնոյ խնուս գաւառը եւ ուսանած իւրաքանչիւր աստուածաբանական դպրոցը, դաւանափոխուած բողոքականութեան, Նիւ Եորք եկած է 1873ին, առանձինն, ապա Ուստր՝ 1877ին: Ան, մինչեւ իր հանգստեան կոչուելը, աշխատած է The Wire Mill մէջ: Յովհաննէս 1887ին կը դառնայ ԱՄՆի քաղաքացի:

Առաջին կինը, որ Ուստր կու գայ, Սարա Եագրճեանն է՝ Յովհաննէս Ամիրխանեան Եագրճեանին կինը, 1882ին:

Գաղթականներ Նիւ Եորքի, Ուստրի, Պոսթընի կողքին բնակութիւն հաստատած են նաեւ Լին (Lynn), Լոուել (Lowell), Փրովիտընս (Providence) եւ Նիւ Ինկլընտի (New England) շրջանները եւ գործաւորութիւն ըրած բամպակի, բուրդի, կոշիկի, կրկնակօշիկի, գէնքի գործատեղիներու մէջ:

Գաղթականներ, առհասարակ թիւով տասը կամ աւելի, բնակած են քաղաքի աղբար թաղամասերու տուններուն մէջ, ի մտի ունենալով առաւելագոյն խնայողութիւն՝ նիւթապէս օգնելու իրենց հարազատներուն, ազգականներուն եւ ծննդավայրի դպրոցներուն, ինչպէս նաեւ միասնաբար ապրելու պահանջքին հետեւանքով:

Սովորութիւններու եւ բարքերու տարբերութեան, տեղական օրէնքներու անգիտութեան, ծանր գործերը իրենց տրուելուն, մանաւանդ անգլերէնի տկարութեան պատճառով գաղթականներ ունեցած են զանազան դժուարութիւններ, նոյնիսկ ոստիկանութենէն:

Գաղթականներ ունեցած են նաեւ այլ դժուարութիւններ, յատկապէս հայ ընտանիք կազմելու եւ երկիր վերադառնալու հարցերով:

29 Սեպտեմբեր 1897 թուակիր նամակով մը Ուստրէն Մաշտոց անուանով վարդապետ մը Օրմանեան պատրիարքին կը տեղեկացնէ, թէ հայ աղջիկներու բացակայութեան պատճառով երիտասարդութիւնը կը սկսի օտար աղջիկներ փնտռել: Մեծ խումբերով գաղթող ասորի ընտանիքներն ալ իրենց հետ աղջիկներ կը բերեն հայերուն կնութեան տալու համար: Ան այս իրավիճակը «շատ վտանգաւոր» կը գտնէ: Կը խորհի որք աղջիկներ բերել տալ, որով կ'ուզէ ընկերակցութիւն մը կազմելով՝ անոնց ճանապարհածախսերը հայթայթել:

Մաշտոց վարդապետ Օրմանեան սրբազանին եւ Պատկ. Քաղաքական Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչութեան ուղղեալ իր 17 Փետրուար 1898 թուակիր նամակին մէջ կը գրէ. «Այստեղի հայ ժողովուրդը ինչ անել կացութեան մէջ է, մի կողմէ գարնան կը պատրաստուին իւրաքանչիւր հարիւրաւոր ընտանիքներ գաղթելու... երկիրը կը պարպեն, հոս թշուառներով կը լեցնեն, անլեզու, անարուեստ խեղճ գիւղացիներ կու գան, կը դիզուին իրարու վրայ, հոս գործերը բոլորովին ընկած են, տեղացիներն իսկ հազարաւոր թիւերով անգործ են. հասպա ընտանիք բերելը. քանինք տեսած եմ խորին թշուառութեան մէջ. փափուկ կիները, 12-13 տարեկան աղջիկներ կը ստիպուին չարաչար աշխատիլ գործարաններու, ապականեալ մթնոլորտի մէջ... ցամաք հաց մը ճարելու համար»:

Մաշտոց վարդապետ կը շարունակէ իր նամակը. «Եթէ չ'ենք ուզեր, որ այստեղի պանդուխտները իրենց ընտանիքները բերեն երկրէն, պարտաւոր ենք յորդորել եւ դիւրութիւն տալ, որ իրենք դառնան հայրենիք, իրենց ընտանեաց ծոցը. այդ դարձին դժուարութիւնները դուք ինձմէ քաջ գիտէք... Հարիւրաւոր անձեր պատրաստուած են գարնան հայրենիք վերադառնալ Ամերիկայէն, գայն ստուգեցի եւ կու գամ իմաց տալ Պատկ. Ժողովոյ: Ատոնք տասնեակ տարիներէ ի վեր Ամերիկայի մէջ՝ գործարաններու գարշահոտ անկիւնները փոստող թշուառներ են. մինչեւ ցարդ իրենց արիւն քրտինքէն մի քանի տոլար կ'աւելցնէին եւ իրենց ընտանեաց կը ղրկէին: Այժմ այդպիսի կեանքէ բոլորովին ձանձրացած եւ զգուած որոշած են ամէն դժուարութեանց տոկալով, նեղուելով, գաղտնիօրէն անպատճառ վերադառնալ, հոս իրենց ոյժը, կեանքը, բարոյականը, յամբօրէն կը ջլատուի, նախամեծար կը սեպեն իրենց ընտանեաց գրկին մէջ լինել եւ անոնց հետ նոյն իսկ իրենց հանգուցեալ դժբախտ եղբարց

վիճակին ենթարկուիլ: Ամերիկայի օսմանեան հիւպատոսները անցազիր չեն տար, Տաճկաստանի նաւահանգիստները նեղութիւն եւ բանտարկութիւններ, անոնց ճարը նայինք, եւ թէ քննութիւն մը կայ ընելիք, թող հոս հիւպատոսները ընեն եւ յետոյ անցազիր տան՝ որպէսզի ճամբան չնեղուին: Եթէ այդպիսի դիւրութիւններ ձեռք բերուի, վստահ եղէք, Պատկ. Ժողովականք, որ Ամերիկայէն հազարաւոր հայեր յետ պիտի դառնան: Ճամբաներու եւ անցազիր դժուարութիւնը անոնցմէ մեծ մասը լքած եւ յուսահատեցուցած է:

Նիւ Եորքէն Հայ Գաղթային Ընկերութեան տնօրէն, «Կոչնակ» շաբաթաթերթի խմբագիր վերապատուելի խաչատուր Կ. Պեննէեան 22 Յունուար 1914 թուակիր նամակով նորընտիր պատրիարք Զաւէն արք. Եղիայեանին (1913-1922) կը գրէ.

«Սրբազան Հայր, Ձեր Սրբազնութեան կու գանք յայտնել մեր խորին խնդակցութիւնները եւ շնորհաւորութիւնները ազգիս Պատրիարքութեան այդ նուիրական պաշտօնին գլուխը անցնելուն առթիւ եւ կը մաղթենք, որ բարձրեալն Աստուած Ձեզի պարգեւէ վերին իմաստութիւն եւ զօրութիւն, որպէսզի կարող ըլլաք ազգին նաւը ապահով տեղեր դեկավարել, մանաւանդ այս ամենափափուկ ժամանակներուն մէջ:

Կ'ուզենք այս առթիւ Ձեր Սրբազնութեան ուշադրութիւնը հրաւիրել մօտերս Ամերիկա գաղթող հայերու աննախանձելի վիճակին: Վերջին քանի մը ամիսներուն մէջ Ամերիկա տնտեսական տագնապալից վիճակի մէջէն կ'անցնի, որուն հետեւանօք շատ մը գործարաններ փակուած են եւ հազարաւոր գործաւորներ, ի շարս որոնց բազմաթիւ հայեր, անգործ կը թափանին շաբաթներէ ի վեր, ողորմելի դժբախտութեանց մատնուած: Նկատելով, թէ մեր հայրենակիցներէն շատեր հոս գալէ ետքը շարաչար յուսախաբ եղած կը գտնեն ինքզինքնին եւ շատեր, չդիմանալով անգործութեան տառապանքին, յետին թշուառութեան եւ յուսահատութեան մէջ կ'իջնան, կը խնդրենք Ձեր Սրբազնութենէն, որ Թուրքիոյ Առաջնորդարաններուն եւ տեղական թերթերուն միջոցաւ հրահանգ տալ ժողովուրդին, որ այս միջոցներուն Ամերիկա չգաղթեն:

Հայ Գաղթային Ընկերութիւնը մօտէն տեղեակ ըլլալով, թէ՛ այս երկրի գործերուն եւ թէ՛ հոս եկող նորեկ հայերու թշուառ վիճակին, պարտք կը զգայ այս խնդիրը ներկայացնել Ձեր Ամենապատուութեան, յուսալով, թէ գարժանն պիտի տնօրինէք»:

29 Յունիս 1919 թուակիր նամակով ամերիկահայոց առաջնորդական տեղապահ Շահէ ծ. վրդ. Գասպարեան պատրիարք Զաւէն արք. Եղիայեանին, անոր «ազգին կամքովն ու Աստուծոյ շնորհքովն յանձնուած ծառայութեան» վերադարձին առիթով իր եւ Ամերիկահայոց Ազգ. Կեդրոնական Վարչութեան կողմէ «Չերմագին խնդակցութիւններն ու շնորհաւորութիւններն» կը յայտնէ: Ապա կը շարունակէ.

«Այո՛, Սրբազան Տէր, Աստուծային Նախախնամութեան աներեւոյթ, հզօր ու կենդանի Աջը առաջնորդեց Ձեզ եւ կրկին բերաւ, որ Դուք Նոր Թարգմանիչն ըլլաք հայ ցեղին Անմահ Իրաւանց եւ Արդարագոյն վրիժաց՝ յԱնուն այն Աստուծուն գոր մեր փառաւոր նախնիք եւ հաւատացեալ հարք եւ հայոց ազգն պաշտեց ի բոլոր սրտէ, յանկեղծաւոր մնաց, ամբողջ քսան դարեր շարունակ:

Դուք, կը հաւատանք, թէ չպիտի դադրիք գործելէ, բարձրաբարբառ պահանջելէ, վկայելէ, պատմելէ՝ բողոքելով, որ ինչ գոր ճշմարտութիւն, արդարութիւն, դատաստանական իրաւունք եւ աներկմիտ վճիռ է ընդմէջ եւ իր շարժարեալ խաչեցեալ Նոր ՈրդոցնՅարութեան մէկ կողմէ, եւ անբարոյացած, փտած, զազանցած մեր մարդակերպարան թշնամի Թուրքաց՝ միւս կողմէ: Մինչեւ Չախճախուի խայտառակ լուծը կատարելապէս եւ մինչեւ ամբողջ աշխարհի հաւատացեալք եւ երկիւղածք նորէն ցնծան, մինչեւ յաւիտենական կորստեան սուգը, թախիծը պատէ անզգամներուն հոգին, եւ մինչեւ որ իրենց անբանացած, ճիւղաղային գիտակցութեան այժմ որդնոտած հիւլէներն բուժուին եւ գիտնան ու հրատարակեն Հայոց Անմեղութիւնն, իրենց անպատու ոճիրները եւ թէ «է Աստուած» եւ «Տէր է Յիսուս Քրիստոս...»»:

Ֆրեզնօ, Գալիֆօրնիայէն Յ. Մ. Նշկեան ստորագրութեամբ 1 Փետրուար 1905 թուակիր նամակ մը կը ղրկուի Օրմանեան պատրիարքին: Նշկեան կը գրէ. «Թերեւս ի լրոյ գիտէք թէ այժմ հայերու մեծ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԱՌՕ ԵՒ ԱԼԻՍ ՄԱԶՄԱՆԵԱՆ

Հիւսիսային Ամերիկայի Սէջ Հայաստանայց Առաքելական Եկեղեցւոյ Թեմի Հաստատումը

Գաղթականութիւն մը հաստատուած է տեղս ու արագապէս կ'աւելնայ անոնց թիւը: Մեր փափաքանաց հակառակ տակաւին չկարողացանք ճշգրիտ վիճակագրութիւն մը պատրաստել, բայց մօտաւորապէս 3.000ի կը հասնի այդ թիւը, որոնց կեսէն աւելին բողոքական հայեր են եւ մնացածը՝ լուսաւորչական, հաւանական հաշուով 1.000-1.200 անձինք, բայց ցաւալի է ըսել թէ մեր այս թիւը երթալով պակասած է ու կը պակսի այս 23 տարուան շրջանին մէջ, այնպէս որ այժմ իրապէս 200 անձինք հագիւ կը ճանչցուին իբր լուսաւորչական՝ շնորհիւ մեր անկարող ու ապիկար հովիւներուն: Բաւական տարիներ՝ իբր լուսաւորչական հայերն աննշան թիւ մը կը կազմէին, Ահարոն վրդ. Սահրոեանի հովանաւորութեանը ենթարկուած էինք որոյ մտաւոր եւ ֆիզիքական կարողութիւնն ըստ ամենայնի Ձեզ ծանօթ ըլլալով աւելորդ կը համարեմ բան մի ըսել, բայց երբ հետզհետէ բազմացաւ մեր թիւն, անհրաժեշտ հարկը տեսնուեցաւ կարող հովիւի մը: 3 տարի առաջ հովուութեան կոչեցինք՝ Վենետիկի վանքէն ելած եւ լուսաւորչական եկեղեցւոյ գիրկը դարձած Սահակ վրդ. Նազարէթեանը. Վենետիկի վանքին մէջ ուսում եւ կրթութիւն ստացած անձնաւորութեան մը վրայ մեծ էր մեր համարումն, բայց աւա՜ղ, տեսանք թէ խաբուած ենք եղեր ու անգամ մը եւս յայտնուեցաւ սա ճշմարտութիւնը թէ ամէն փայլուն բան ոսկի կամ ադամանդ չէ եւ վերջ ի վերջոյ սա եզրակացութեան եկանք թէ՛ Վենետիկի վանքը իւր վրայէն արագ մը սրբելու համար դուրս նետած է գայն ու փորձանք մը աւելցուցած մեր ժողովրդեան գլխուն: ... Աւելորդ կը համարեմ նորա մանրամասն նկարագիրն ներկայացնել, բաւական է ըսել թէ իւր վարքովն, ընթացքովն, գաղափարներովն ու սկզբունքներովը՝ եթէ երբէք սկզբունք ունի, ու ծայրայեղ թեթեւաբարոյութեամբն բացարձակապէս անյարմար է, ոչ միայն այստեղի այլ ո'եւէ տեղոյ մը հովուութեան պաշտօնը վարելու: Ու եթէ այսչափ ատեն գինքը պահեցինք, պատճառը այն էր, որ ստիպուած էինք, ու եթէ ճամբէինք պիտի պարտաւորուէինք գոցել եկեղեցին, քանի որ ուրիշ մը կարող չեղանք գտնել»:

Յ. Մ. Նշկեան իր երկարաշունչ նամակը կը շարունակէ. «...Իրաւ է թէ՛ այս երկիրը իբրեւ արտասահման, Ս. էջմիածնի գերիշխանութեան կ'ենթարկուի, բայց տեղոյս գաղթականութիւնը կազմուած է առանց բացառութեան, Տաճկաստանի գանազան քաղաքներէ եւ գիւղերէ, այնպէս որ շատ կը տարբերին իրարմէ սովորութեամբ, զարգացման աստիճանով եւ մտածման կամ դատելու եղանակով, հետեւապէս այնպիսի անձնաւորութիւն մը պէտք է, որ ոչ միայն զարգացած, այլ նաեւ նկարագրի ու կորովի տէր ըլլայ եւ մանաւանդ գաւառային բարքերուն ու կեանքին ծանօթ: ... Մեր նոր սերունդը իսպառ կորսուելու վտանգին մէջ ըլլալով, կարող ըլլայ գէթ Մայրենի լեզուի նախնական ուսումը տալ ու լեզուն կենդանի պահել: ... Քաջ գիտենք թէ՛ Տաճկաստանի մէջ իսկ շատ մը կարեւոր տեղեր կը կարօտին կարող հովիւներու, բայց անուրանալի է թէ անոնք գէթ կորսուելու վտանգին մէջ չեն: ... Աճեմեան անուն (որոյ բուն անունը չեմ գիտեր) վարդապետ մը, Արմաշի դպրավանքէն ելած, վերջին ատեններս եկած է Ամերիկա, արդեօք կարելի՞ է նորա մասին լիովին տեղեկութիւններ շնորհել մեզ»:

Նշկեան նամակը կ'աւարտէ հետեւեալ տողերով. «Պիտի խնդրեմ նաեւ որ բարեհաճիք մեզ տեղեկացնել թէ՛ Սահակ վրդ. Նազարէթեան իրօք դարձած է Մայր եկեղեցիին, այս մասին բաւական տարակուսելի գրոյցներ կը շրջին: Նաեւ եթէ կարելի է նորա անցելոյն վրայօք մեզ լուսաբանէք, ուրիշ աղբիւրներէ կարգ մը տեղեկութիւններ հասած են թէեւ, բայց լաւագոյնը կը համարենք Ձեր Սրբազնութենէն լսել եւ ճշմարտութեան վերահասու ըլլալ:

Մենք բոլոր պարագաներով քաջաւորջ ենք ու կը մատուցանենք մեր յարգալից համբոյրներն Ձեր Ս. Աջոյն:

Մնամ խորին յարգանքք Ձերդ»:

Այս նամակները «Թուրքիայի Հայոց պատրիարքարանի դիւանի փաստաթղթերը ԱՄՆի հայ գաղթականութեան մասին» խորագրով համացանցի միջոցով հրատարակած է Ք. Ռ. Աւագեան: Ան 1977ին Կ.Պոլսոյ մէջ ծանօթացած է այդ օրերու պատրիարք Մեսրոպ Բ. Մովսէֆեանին (1998-2008, մահ՝ 2019) եւ անոր բարեացակամ աջակցութեամբ տեղեկ դարձած է այս նամակներու գոյութեան:

Գործատեղիներու մէջ հայ եւ իրլանտացի գործաւորներու միջեւ յաճախ ծագած են հարցեր՝ հայերու նուազ վճարումով աշխատելուն, կամ երբ իրլանտացիներ գործադուլի կը դիմէին, անոնց տեղ աշխատելու իրենց պատրաստակամութեան հետեւանքով:

Դժուարութիւններու կուրծք տալու, կացութիւնները բարելաւելու նպատակով՝ 1891ի Սեպտեմբերին կը հիմնուի ArmenoAmerican Ameliorating and Protective League միութիւնը:

1894-1896ի ջարդերուն ընթացքին աղէտեալներու օգնութեան համար Պոսթընի մէջ, 1895ին, կը հիմնուի «Հայաստանի Բարեկամներու Միութիւն» կազմակերպութիւնը, որուն կ'անդամակցին նաեւ ոչհայեր՝ բանաստեղծներ, լրագրողներ, գիտնականներ...:

Միասնաբար աղօթելու առաջին քայլերը կ'առնուին 1881ին, ամէն Կիրակի, Եագրճեանի տան մէջ, առանց դաւանական խտրութեան: Երբ մասնակցողներու թիւը 25ը կ'անցնի, անոնք կը հաւաքուին մօտակայ եկեղեցիի մը մէջ, Կիրակի կէսօրէ յետոյ:

Մինչեւ 1888 Ուստր եկած հայերուն մէկ մասը Խարբերդէն անդամ էր The Congregational Churchին: Հայերէն լեզուով կանոնաւոր քարոզչութեան համար Ուստր կը հրաւիրուի Խարբերդի Հիւսէյնիկ գաւառի Աւետարանական եկեղեցւոյ հովիւը՝ Պատուելի Ասատուր Անդրէասեանը, որ 9 Յունուար 1888ին կու տայ իր առաջին քարոզը, ի ներկայութեան Պոսթընէն, նոյնիսկ Շիքակոյն եկած անձերու: Յաջորդական չորս տարիներու ընթացքին ան ամէն Կիրակի, օրը երկու անգամ կը քարոզէ, առաւօտները՝ Ուստր, եւ կէսօրէ յետոյ ալ՝ Փրովիտընս: Անդրէասեան հայերուն կը թելադրէ ապահովել հայաստանեայց առաքելական եկեղեցական մը ու վերադարձին իր հետ կը տանի զանգակ մը Հիւսէյնիկի առաքելական եկեղեցւոյն համար:

Գաղթականներ Հիւսէյնիկի եկեղեցիին եւ դպրոցին օգնելու նպատակով 1882ին Ուստրի մէջ պաշտօնապէս կը հիմնեն առաջին հայրենակցական միութիւնը՝ Illuminatorian Education Union of Hussening, զորս 1888ին Անդրէասեանի յորդորներով կը վերակազմեն:

1888ի Սեպտեմբեր 3ին, Ուստրի մէջ կը ճառախօսէ յայտնի ազգային գործիչ, Մարսիլիոյ մէջ «Արմէնիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալեան՝ ներկաներու ուշադրութեան յանձնելով ազգային ինքնութեան պահպանման համար կազմակերպել գործունէութիւն տանելու կարեւորութիւնը:

Կը հիմնուի Armenian Academy of the Armenian Gregorians of the City of Worcester - «Կաճառ Հայկական Ուստրի Լուսաւորչական Հայոց» միութիւնը, որուն առաջին անդամական ժողովը կը գումարուի 16 Սեպտեմբերին, մասնակցութեամբ 70 անդամի: Կաճառի կազմութեան գլխաւոր դերակատարը՝ Միքայէլ Թոբհանեւիեան, 1863ին Նիւ Եորք կու գայ: Ատամնաբուժութիւն ուսանելու համար կատարած երկու դիմումները մերժուելէ յետոյ Ուստր կը հաստատուի: Թոբհանեւիեան, այդ թուականին, Նիւ Եորքի մէջ կը հանդիպի միայն տասը հայու՝ երեքը բժիշկ եւ մին ալ բժիշկներէն միոյն կինը:

Կաճառին անդամներուն թիւը շուտով կը բարձրանայ 250ի՝ մասնակցութեամբ բողոքականներու ալ: 7 Հոկտեմբերին առնուած որոշումով՝ բողոքականները կը հեռացուին միութենէն:

3 Նոյեմբեր թուակիր նամակով մը կը դիմեն Կ.Պոլսոյ Պատրիարք Խորէն Աշրգեանին (1888-1894)՝ խնդրելով պատրիարքարանին հովանաւորութիւնը: Պատրիարքը իր 13 Դեկտեմբեր թուակիր նամակով կը տեղեկացնէ, թէ պատրիարքարանը կրնայ միայն եկեղեցական համայնքներ հովանաւորել: «Կաճառ»ի վարչութիւնը 27 Յունուար 1889 թուակիր նամակով պատրիարքին կը տեղեկացնէ, թէ պատրաստ են տարեկան 100 անգլիական փառնատ, մօտաւորապէս 500 տոլար, վճարել անգլերէն կամ ֆրանսերէն խօսող վարդապետի մը, որ քաղաքին մէջ, հոգեւորականի մը վայել պայմաններով, շաբաթական մէկ փառնատով կրնայ ապրիլ: Անոնք, նոյն նամակով, պատրիարքին կը տեղեկացնեն, թէ մօտակայ քաղաքներու մէջ ալ բաւական թիւով հայեր կան եւ վարդապետը կրնայ յաւելեալ



Խորէն Աշրգեան պատրիարք 1888և1894

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ՌՈՒՔԷՆ ԵՒ ՇՈՂԻԿ ԵԱՂՍՁԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2022

Հիւսիսային Ամերիկայի Սէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Թեմի Հաստատումը

Եկամուտ ապահովել՝ հոգալով անոնց ալ հոգեւոր կարիքները:
Ինքզինք գերադաս համարող 1886ին հիմնուած The Armenian Union of New York - «Նիւ Եորքահայերու Միութիւն»ը կը հակառակի հոգեւորականի մը նշանակման:

«Կաճառ»ը իր 8 Մարտ 1889 թուակիր նամակով դարձեալ կը խնդրէ աշխուժ, կորովի եւ ազգային ոգիի տէր վարդապետ մը:

Մի քանի թեկնածուներու մէջէն կ'ընտրուի Յովսէփ Ժ. վրդ. Սարաճեանը՝ 1849ին Կ.Պոլիս ծնած, Մշոյ Ս. Կարապետ ուխտի միաբան, Պուլանըի նախկին առաջնորդական փոխանորդը: «Կաճառ»ը Սարաճեանի ճամբորդական ծախսերու հոգացման համար կը հաւաքէ հարկաւոր գումարը ու գալն կը ղրկէ պատրիարքարան:

Յովսէփ Ժ. վրդ. Սարաճեան 25 Յուլիս 1889ին կը հասնի Ուստը եւ 28 Յուլիսին կը կատարէ եկեղեցական արարողութիւն, The Reform Club Hallին մէջ, ի ներկայութեան 324 հայերու, ուր յոտնկայս կ'ունկնդրուի Խորէն Աշրգեան պատրիարքի՝ Սարաճեան Ժ. վարդապետը «հեռաւոր աշխարհի մէջ գաղթական ժողովրդեան հոգեւոր հովուութեան» նշանակման 13 Յուլիս 1889 թուակիր կոնդակը, զոր կը կարգայ Միքայէլ Թորհանեւիսեան: Օրուայ քարոզը կը տեւէ 45 վայրկեան:



Յովսէփ արք. Սարաճեան Հիւսիսային Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Թեմին առաջին առաջնորդը

Սարաճեան, 3 Օգոստոսին, Շաբաթ երեկոցեան, ի ներկայութեան 75 հաւատացեալներու, կ'օծէ պատարագի վէժ քարը: Կիրակի, 4 Օգոստոսին, կը մատուցանէ իր առաջին պատարագը եւ ժողովուրդին կու տայ Ս. Հաղորդութիւն:

11 Օգոստոսին սկսեալ պատարագները կը մատուցուին The Grand Army of the Republic Hall Post #10ի մէջ: Այդ օրուան պատարագէն ետք, Սարաճեան կը նշանակէ 12 անձերէ բաղկացեալ Ուստըի ծուխին առաջին ծխական խորհուրդը, որ իր առաջին ժողովը կը գումարէ 20 Օգոստոսին, ի ներկայութեան ութ անդամի: Նշանակեալ վարչութիւնը, ի բացառեալ երեք անձի, - որոնց տեղ կը նշանակուին նորեր, - կը ծառայէ երկու տարի:

Սարաճեան Պոսթընի մէջ իր առաջին պատարագը կը մատուցանէ 4 Սեպտեմբերին եւ կը կատարէ մկրտութիւն՝ առաջինը ԱՄՆի մէջ: Փրովիտընսի մէջ առաջին անգամ կը պատարագէ 15 Սեպտեմբերին, իսկ Նիւ Եորք՝ 22 Սեպտեմբերին, վարագայ Ս. Խաչի տօնին առթիւ, Manhattan's Grace Episcopal Churchին մէջ, ուր կը մկրտէ ընտանիքի մը երեք աղջիկ գաւակները:

Սարաճեան առաջին յուղարկաւորութիւնը կը կատարէ 14 Սեպտեմբեր 1891ին, Jersey City Heightsի մէջ (New Jersey):

22 Փետրուար 1890ին, Ուստըի ծխական խորհուրդը կ'առնէ եկեղեցաշինութեան որոշում: Կը ստացուին Աշրգեան պատրիարքի ու Մակար Ա. կաթողիկոսի (1885-1891) օրհնութեան գիրերը: Սարաճեան բաւական դժուարութեամբ կը հաւաքէ 2,000 տոլար: Կը գնուի 1.275 տոլար արժէքով հողաշերտ մը, որուն վրայ 9,500 տոլար ծախսելով՝ կը կառուցուի Միացեալ Նահանգներու առաջին հայաստանեայց եկեղեցին: Ծախսերու հոգացման համար դրամատունէն կը կատարուի 4,000 տոլարի փոխառութիւն՝ 5 առ հարիւր տոկոսով եւ 20 տարուան պայմանաժամով: Յովսէփ Ժ. վրդ. Սարաճեան երկարկանի, փայտաշէն, 240 հոգինոց այս եկեղեցին՝ Ս. Փրկիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, կ'օծէ 1891ի 18 Յունուարին՝ Յուլեան տոմարով Ս. Ծնունդի օրը: Արարողութիւնը կը սկսի առաւօտեան 8ին եւ կը տեւէ հինգուկէս ժամ:

Մակար կաթողիկոս, 1891ի Փետրուար 2ին, Յովսէփ Ժ. վրդ. Սարաճեանը կը պարգևատրէ ականակուռ լանջախաչով: Յառաջիկային, 5,500 տոլարով կը գնուին նաեւ եկեղեցւոյ երկու կողմի կալուածները: Տուներէն մին կը գործածուի որպէս հաւաքատեղի ու թեմի հաստատումէն մինչեւ 1923՝ որպէս առաջնորդարան:

Եկեղեցւոյ կառուցումով տեղացիներուն հայերու հանդէպ ցուցաբերած վատ վերաբերումը կը դադրի:

Սարաճեան, ի մտի ունենալով իր ծուխի անդամներուն մշակութային



Սուրբ Փրկիչ հայց. եկեղեցի, Հիւսիսային Ամերիկայի առաջին հայաստանեայց եկեղեցին, կառուցուած՝ Ուստը, օծուած՝ 18 Յունուար 1891-ին, այժմ՝ ռուս ուղղափառ եկեղեցի

գարգացումը, կ'որոշէ եկեղեցւոյ սրահին մէջ հաստատել գրադարան մը: 22 Մայիս 1892ին կը գումարուի ժողով եւ 230 անձեր կ'արձանագրուին որպէս գրադարանի անդամ: Կը կազմուի վարչութիւն: Կը պատրաստուի գիրքերու եւ թերթերու ցանկ, որոնք պիտի ապսպրուին Կ.Պոլսէն: Սարաճեան կ'արգիլէ կարգ մը գիրքերու գնումը եւ որոշ թերթերու բաժանորդագրութիւնը: Հակառակ այս արգելքին՝ այդ թերթերն ու գիրքերը սրահէն ներս կը մտնեն, ինչ որ անհասկնալի կացութիւններու ծնունդ կու տայ: 27 Մարտ 1893ին սրահին մէջ տեղի կ'ունենան արիւնալի կռիւներ, որոնք արձագանգ կը գտնեն յաջորդ օրուան թերթերուն մէջ: Նիւ Եորքէն կու գան երեւելի անձեր՝ քննելու կացութիւնը եւ հանդարտեցնելու ժողովուրդը: Իրենց որոշումները կը հակառակին Սարաճեանի տեսակէտներուն: Սարաճեան, չորս տարուան ծառայութենէ ետք, հրաժարականը կը ղրկէ Կ.Պոլսոյ Պատրիարքութեան, վերջին պատարագը կը մատուցանէ 15 Օգոստոս 1893ին եւ 22 Հոկտեմբերին ալ կը հեռանայ ԱՄՆէն:

Կ.Պոլսոյ պատրիարքարանին կարգադրութեամբ, 1894ի Մարտին Ուստը կու գայ 1844ին Տիգրանակերտ ծնած Մաղաքիա Տէրունեան վարդապետը: Նոյն օրերուն Ամերիկա կու գայ ու Ֆրեզնօ՝ իր որդւոյն քով կը հաստատուի Պիթլիս ծնեալ տ. Ահարոն քհնյ. Մելգոնեան: Յաջորդական երեք տարիներու ընթացքին Ամերիկա կու գան վեց կղերականներ, երեքը կուսակրօն, ծառայելու Նիւ Եորքի եւ Նիւ Ինկլընտի շրջաններուն: Մաղաքիա Տէրունեան վարդապետ դէմ չանդիման կու գայ այն դժուարութիւններուն, որոնց պատճառով հրաժարած էր Սարաճեան: Մաղաքիա վրդ. Տէրունեան կը հրաժարի 1896ի Սեպտեմբեր 17ին:

Ծուխը այս անգամ կը դիմէ Մկրտիչ Խրիմեան ամենայն հայոց կաթողիկոսին՝ իրմէ խնդրելով Ս. Էջմիածինէն վարդապետ մը՝ ոչօսմանեան հպատակ:

Խրիմեան Հայրիկ կը ղրկէ Արմաշ Դպրեվանքի առաջին սերունդէն գործուն, կորովի, վարչական կարողութիւններու տէր Մաշթոց վրդ. Փափագեանը, որ Ուստը կու գայ 1897ի Մայիսին:



Սկրտիչ Խրիմեան (Հայրիկ) ամենայն հայոց կաթողիկոս

▶▶▶

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԿԱՐԻՆԷ ՏԵՓՈՅԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2022

Հիւսիսային Ամերիկայի Սէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Թեմի Հաստատունը

Անհամաձայնութիւնները կը շարունակուին: Փափագեան վրդ. հարցեր կ'ունենայ թէ՛ Ս. Փրկիչ եկեղեցւոյ ծխական խորհուրդի անդամներուն եւ թէ՛ շրջանի երկու կուսակրօն կղերականներուն հետ: Մաշթոց վրդ. Փափագեան 1898ի Յուլիսին կը հրաժարի ու կ'երթայ Շիքակօ:



Մաղաքիա արք. Օրմանեան պատրիարք, 1896և 1908

Այդ օրերուն, Կ.Պոլսոյ Պատրիարքութեան գահը կը բարձրանայ Մաղաքիա արք. Օրմանեան: Սուլթան Համիտ իրմէ կը պահանջէ պատրիարքարանի իշխանութեան ենթակայ Եւրոպայի եւ ԱՄՆի հայ համայնքներուն հակաթուրք, հակասուլթանական գործունէութիւնը հակաշուրի տակ առնել:

Օրմանեան, սուլթանին ստեղծած անհաճոյ կացութեան որպէս բարուք լուծում, իրիմեանին կը թելադրէ ստանձնել Եւրոպայի ու Միացեալ Նահանգներու հայոց հոգեւոր իշխանութիւնը: Իրիմեան 2 Յուլիս 1898 թուակիր կոնդակով կը հաստատէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ԱՄՆի թեմը: Եպիսկոպոս կը ձեռնադրէ ու նորահաստատ թեմին առաջնորդ կը նշանակէ 1893էն ի վեր Պարսկաստանի մէջ որպէս Ատրպատականի թեմի փոխառաջնորդ պաշտօնավարող Յովսէփ Ծ. վրդ. Սարաճեանը, որուն Պարսկաստանի Շահը շնորհած է բարձր կարգի շքանշան՝ առ ի գնահատանք անոր դիւանագիտական կարողութեան:

Սարաճեան եպիսկոպոս, 7 Հոկտեմբեր 1898ին, Ուրբաթ օր, գիշերուան ուշ ժամերուն կը հասնի Նիւ Եորք, ուր գինք կը դիմաւորեն երեք կղերականներ եւ աւելի քան չիսուն աշխարհականներ: 9 Հոկտեմբերին, Կիրակի օր, կը նախագահէ Chrysostom Episcopal Churchին մէջ մատուցուած պատարագին, ուր կը ներկայացուի որպէս առաջնորդ: Սարաճեան եպիսկոպոս, որպէս թեմակալ առաջնորդ, իր առաջին պատարագը կը մատուցանէ Նիւ Եորք, վերոյիշեալ եկեղեցիին մէջ, Հոկտեմբեր 16ին, եւ պատարագի ընթացքին կը կարդացուի իրիմեան Հայրիկին կոնդակը:

Սարաճեան եպիսկոպոս, 23 Հոկտեմբերին, Կիրակի առաւօտեան կանուխ ժամերուն, շոգեկառքով կը հասնի Ուստրի կայանը, ուր հարիւրաւոր հայեր գինք կը դիմաւորեն: 35 ձիաքարշ կառքերու թափօրով առաջնորդ սրբազանը կ'առաջնորդուի եկեղեցի, ուր ան կը նախագահէ պատարագին՝ որուն ընթացքին կը կարդացուի կաթողիկոսական կոնդակը:

Սարաճեան որպէս առաջնորդ Ուստրի մէջ եպիսկոպոսական առաջին պատարագը կը մատուցանէ 30 Հոկտեմբեր 1898ին, Կիրակի օր: Իր քարոզին մէջ ներկաներուն կը յիշեցնէ եկեղեցւոյ պարտքը՝ 3.000 տոլար, եւ տեղւոյն վրայ կը հաւաքէ 830 տոլար: Կաթողիկոսէն իր ստացած 200 ռուբլիով, դէպի Ամերիկա ճամբորդութեան ընթացքին Փարիզէն ստացած 500 ֆրանքով եւ Մանչեսթրէն հաւաքած 100 անգլիական փառնետով՝ գումարը կը հասնի 2.500 տոլարի: Սարաճեան Փրովիտընսի մէջ 13 եւ 20 Նոյեմբերին կը մատուցանէ պատարագ եւ կը հաւաքէ 250 տոլար՝ ի նպաստ Ուստրի եկեղեցիին:

Նորահաստատ թեմէն ներս դպրութեան առաջին տուչութիւնը Սարաճեան կը կատարէ 2 Յուլիս 1899ին՝ Ս. Էջմիածնի տօնին առթիւ: Չորս անձերու կու տայ դպրութեան չորս աստիճաններ, անոնցմէ միոյն նաեւ շնորհելով ուրար կրեյլու եւ ճաշու Աւետարան կարդալու իրաւունքը:

Թեմէն ներս առաջին անգամ հոգեւորական մը կը վախճանի 13 Յուլիս 1899 թուականին, որուն թաղման կարգը կը կատարուի 17 Յուլիսին:

Թեմի քահանայական առաջին ձեռնադրութիւնը կը կատարուի



Այժմու Սուրբ Փրկիչ հայց. եկեղեցին՝ ԱՄՆ-ի մէջ հայկական ոճով շինուած առաջին եկեղեցին, օծուած՝ 19 Հոկտեմբեր 1952-ին, ձեռնամբ՝ առաջնորդ Տիրան արք. Ներսոյեանի

Ուստրի մէջ 14 Հոկտեմբեր 1899ին՝ ձեռամբ Սարաճեան սրբազանի: Թեմի հոգեւորականաց առաջին ժողովը, չորս վարդապետ եւ մէկ սարկաւազ, կը գումարուի 1901ի Յունիս 17-18 թուականներուն, Ուստրի մէջ, նախագահութեամբ Սարաճեան սրբազանի: Այդ թուականներուն թեմէն ներս կը գործեն նաեւ երեք քահանաներ, որոնք ժողովի կա՛մ չեն հրաւիրուած եւ կա՛մ ալ հեռաւորութեան պատճառով չեն մասնակցած:

Թեմական առաջին ժողովը կը գումարուի 1902ի Յունիս 12ին, մասնակցութեամբ չորս կղերականի՝ ներառեալ առաջնորդը եւ 18 աշխարհական: Սարաճեանի նախագահած այս ժողովը կ'ընդունի պատրաստուած թեմական կանոնադիրը, զորս իրիմեան կաթողիկոս կը վաւերացնէ 6 Սեպտեմբեր 1902 թուականին:

Թեմի առաջին առաջնորդը՝ Սարաճեան սրբազան, 25 Հոկտեմբեր 1903 թուականէն ի վեր արքեպիսկոպոս, ութ տարուան (1898-1906) ծառայութենէ ետք, 13 Օգոստոս 1906ին իր հրաժարականը կը ներկայացնէ իրիմեան կաթողիկոսին: Սարաճեան, մինչեւ վանի առաջնորդ նշանակումը (1911), Ամերիկայի մէջ հինգ տարի կը ծառայէ որպէս հոգեւոր հովիւ՝ թեմի զանազան ծուխերուն:

ԱՄՆի արեւմտեան թեմը կը հաստատուի 1927ին, Գէորգ Ե. Սուրէնեան (Տփղեցի, 1911-1930) կաթողիկոսին կոնդակով: Թեմին առաջին առաջնորդը կ'ըլլայ Գարեգին եպս. Խաչատուրեան, ապա՝ Կ.Պոլսոյ պատրիարք (1951-1961):

Օգտագործուած աղբիւրներ

- «Հայկական Սովետական Հանրագիտարան» Երեւան, 1979
- «Համառօտ Պատմութիւն Հայ Գաղթավայրերու», Յակոբ Աթիկեան Անթիլիաս, 1985
- «Հայերն Աշխարհուն», Ամալիա Պետրոսեան, Ալբերտ Իսոյան, Կոստանդին Խուրաւերդեան, «Յայգիտակ» Երեւան, 1995
- «Ազգապատում», Դ. Խատրո, Ա. գիրք, դոկտ. Ջաւէն աւագ քնյ. Արզումանեան եւ Վարդապետ Փիլիսոփայութեան, «Ս. Վարդան» մատենաշար Նիւ Եորք, 1995
- «Էջեր Հայ Գաղթավայրերի Պատմութեան», փրոֆ. Վ. Բ. Բարխուդարեան եւ դոկտ. Ջաւէն Եկաւեան, Իրատ.՝ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Երեւան, 1996
- «Հայ Սփիւռք Հանրագիտարան» Երեւան, 2003
- “Worcester Is America”, Dr. Hagop Martin Deranian, Bennate Publishing Worcester, 1998
- “An Armenian Monks Ministry on Two Continents & The Story of Archbishop Hovsep Sarajian”, Fr. Arsen Ashjian, St. Vartan Press New York, 2006

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՄԻՀՐԱՆ ԵՒ ԹԱՄԱՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ



**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ
ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ
ՄԱՂԹԱՆՔՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ
ՍՓԻՒՌԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ**

ՏԻԱՐ ՆԱԶԱՐԷԹ ԳԵՒՈՆԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2022

Ինչ Գնով Լինի Հայրենիքի Շահը Վեր...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Հայաստանեան վերջի շուրջ երեք տարիների իրադարձությունները նոր իշխանութեան գլուխ հաստատուելուց ի վեր դարձաւ ներքին եւ արտաքին քննութեան, մեկնութեան եւ վերլուծութեան նիւթ եւ դեռ շարունակուած է այլ եւ այլ միջոցներով նաեւ սօս ցանցերում: Քաղաքական այդ շնչառութիւնը նոր վարչակարգի իշխանութեան գլուխ գալուց ի վեր զգալի նկատուած է այստեղ Լոս Անջելէսեան մամուլի, հանդիպումների եւ ընտանիքներում օր ըստ օրէ շրջան արևող լուրերի բերումով: Մտահոգութիւն, հայրենիքի ապագայի նկատմամբ յուսատեսութեան մտքեր, թէ ինչ պիտի լինի մեր հայրենիքի վիճակը, երբ թշնամին Արցախի հողատարածքները գրաւելուց յետոյ մտել եւ գրաւել է Հայաստանից ընջաններ:

Հայաստանը մեր ընհանուր հայրենիքն է յոյսն ու հաւատքն է՝ մեր ազգային ինքնութիւնը ապահովող ու պաշտպանող հիմնաքար-կռուանը: Իրաւամբ ինչպէ՞ս կարելի է հաշտուել այն մտքի հետ, որ հայկական տարածքների 73 տոկոսը բռնագրաւուի թշնամու կողմից: Մեր անմահ հերոսները պատգամել են՝ եթէ Արցախը գնայ Հայաստանն էլ կը գնայ, որը զգոնութեան եւ խոր մտածումների տեղիք է տալիս:

Վտանգաւոր ժամանակներ, պէտք է պատրաստ լինել հետագայ զարգացումների ի նպաստ հայրենիքի ինքնիշխանութեան եւ տարածքների պահպանման տարբեր միջոցների դիմելով, պետականութեան վտանգը հայրենիքի գոյութեան վտանգն է:

Կեանքի ճակատագրական դէպքերն ու պատահարները չեն մոռացուած, նրանք տպուած են մեր մտապատկերում եւ շարունակ յիշատակուած են, ինչպէս 2020 թուականի 44 օրեայ սանձագերծուած պատերազմը, որը կատարուեց ատրէյշլան-թուրքիա իրենց միացրած ահաբեկիչներ եւ մուջահիդներ ու տարբեր երկրներից ստացած զէնքի եւ մարդուժի միջոցով, նրանք գինուած հսկայածաւալ գինամթերքով, բանակով, դրոներով ներխուժեցին Արցախի տարածքներ, ինչպէս անհամար մոլեգնած գալլերի վոհմակ կատարելով աներեւեկայելի ահաւոր աւերածութիւններ եւ մարդասպանութիւններ, նրանք արգելուած զէնքերով անխնայօրէն ու մեղաւորեցին քաղաքներ, բնակելիք շէնքեր, եկեղեցիներ, հիւանդանոցներ, դպրոցներ, թանգարաններ եւ կենսաերակային կառուցներ, հազարաւոր աննման երիտասարդներ զոհուեցին եւ վիրաւորուեցին: Նրանց ծաւալուն յարձակումի դիմաց Արցախն ու Հայաստանը մենակ ու անպաշտպան կուռուծ էին անձնուրացաբար, եթէ մութ եւ ծածուկ միջամտութիւններ չլինէր, հայ գինուորը կը պաշտպանէր իր հայրենիքը եւ հաւանաբար պատերազմն այլ կերպ ստացուէր: Ինչո՞ւ մեր դաշնակիցը «պասիւ» գտնուեց, քալլեր չձեռնարկեց իրեն բարեկամ ու դաշնակից Հայաստանին օգնելու, հարցը պէտք է խորապէս քննուի եւ հրապարակաւ իմաց տրուի: Յաւոք հայի հաւատարմութիւնը եւ ծառայութիւնները անտեսուած են:

Թուրք-Ատրայէյճան ծրագրուած յարձակումը Հայաստանի վրայ ապացոյցն է թշնամութիւն Հայաստանի եւ Ռուսաստանի դէմ իրենց հեռաւոր ծրագրերը իրականացնելու համար: Թուրքի կողմից խաղաղասիրութեան առաջարկները այս պայմաններում սուտ ու խափկանք են, թուրքը երբեք չի ուզի Հայաստանը հզօրանայ եւ խաղաղ երկիր դառնայ, ուրեմն թող մեր իշխանաւորները քաջ գիտակցեն, որ Հայաստանն ու Արցախը իրենք են որ խաղաղութիւն պիտի ստեղծեն իրենց ուժերով, միասնական ու մէկ ճակատով՝ Արցախ, Հայաստան եւ

Սփիւռք: Սփիւռքի դերակատարութիւնը շատ կարեւոր է ներկայ պայմաններում, միշտ էլ կարեւոր է եղել, բայց ցաւօք ընթացք չի տրուել:

Թուրք-ատրայէյճանական յարձակման հետեւանքները տեսնելով մարդ կարող է աչքերը փակել եւ աշխարհով մէկ չբողոքել:

Ի տես հազարաւոր երիտասարդ զոհերին, վիրաւորներին եւ հաշմանդամներին ինչպէս կարելի է չբողոքուել եւ հոգեպէս հանդարտուել կամ լուռ մնալ:

Ի տես այդ բերրի ու հարուստ պայպենական տարածքների բռնագրաւման ինչպէս կարելի է անտարբեր լինել եւ չմտածել դրանք յետ բերելու համար:

Ի տես այն հազարաւոր ընտանիքների մայրերին եւ հայրերին, որոնք տուայտուած են իրենց գուրգուրած ու փայփայած նահատակ զաւակների համար, ինչպէս կարելի է չկսկծալ, նրանց ցաւին ու սուգին սպեղանի եւ միտիթարիչ չլինել տարբեր տեսակի օժանդակութիւններով, չէ որ նրանք յանուն հայրենիքի իրենց կեանքն նուիրաբերեցին:

Ի տես այն հազարաւոր տնագուրկ ու անօթեւան դարձած արցախցիներին քշուած իրենց սեփական տներից արդեօ՞ք պիտի թողնել իրենց յոյսին, ո՞չ, աշխարհով մէկ ձայն բարձրացնել, բողոքել եւ պահանջել ՄԱԿ-ից օգնութեան ձեռք, ինչպէս ատրայէյճանը 1991-1994 պատերազմին գալլերի ունոց էր բարձրացրել թէ՛ Հայաստանը մեր տարածքները գրաւել եւ թափառական է դարձրել իբր մէկ միլիոն ժողովրդի, ինչո՞ւ մեր իշխանաւորները չեն աշխատում այդ ուղղութեամբ:

Ահա այսպիսի տագնապալից վիճակում կանգնած ենք 2022 տարեթուի սեմին, տագնապը գալիս է 2020-ից իր մէջ ունենալով նաեւ 2021-ը, այս տարուայ ընթացքում տեղի ունեցաւ թշնամու յառաջխաղացումը դէպի Հայաստանի տարածքներ եւ բաւական թուով զոհեր հայերի կողմից: Ամենայնդէպս ճակատագրական պայմաններում ենք գտնուած, որի համար կուռ միասնական շարքերում առանց «սեւ ու սպիտակ»-ի պահենք ու պաշտպանենք Արցախը եւ Հայաստանը, որը ամէն մէկ հայի անխուսափելի ազգային պարտականութիւնն է:

Ահա մէկ տարի մեր կեանքից անցնում է, բայց ինչ անցնել, 2020-ի հոկտեմբեր ամսից մինչեւ ահա 2021-ի վերջաւորութիւնը ամէն օր ապրել ենք յուզումնալից պահեր այդ մեր զոհուածների, վիրաւորների, աղէտեալների եւ կորցրած տարածքների համար: Երկրներ պատերազմում զոհեր-նահատակներ են տալիս երկիր ազատագրելու կամ իրենց արդար իրաւունքներին հասնեն, մերը հակառակն եղաւ:

2021-ի ամանորն դարձաւ սուգի եւ ողբի ամանոր, հանդէսներ չկազմակերպուեցին հազարաւոր զոհերի ընտանիքների սուգին մասնակից լինելու եւ նրանց հետ կիսելու ցավն ու վիշտը:


2022-ի ամանորն եւս այնքան ոգեւորիչ չի, քանի որ 2021-ի ընթացքում բազմաթիւ զոհեր եւ գերիներ ունեցանք: Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի թշնամու միջոցով մեր գինուորների սպանութիւնը եւ տարածքային կորուստները:

Յոյսով գալիք տարին թող բոլորիս սիրով ու նուիրուածութեամբ կապի հայրենիքի (Հայաստան եւ Արցախ) հետ պաշտպանելու եւ յետ բերելու մեր կորուստները:

Չեմ իմանում, արդեօ՞ք յոյսով պիտի սպասենք մեծ աւետիսին, թէ էլի գլխակոր ու մտածկոտ:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ՖԼՈՐԱ
ՊԱՐՏԱԳՃԵԱՆ**



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԼՈՒՍՏ ԵՒ ԼԵՆԱ
ՏԷՐՏԷՐԵԱՆ**



**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ ՉԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԷ ՄԱՂԹԵԼՈՎ ՈՐ
ԻՐԱԿԱՆԱՆԱՆ ՉԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆՉՆԱԿԱՆ
ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԻՂՉԵՐԸ**

ՄԻ ՈՄՆ




Վերապատուելի Աբրահամ Յարթունեանի Յուշերը

Աբրահամ Յարթունեան իր յուշերը հրատարակած է անգլերեն յուշագիրքով մը, որուն հրատարակչական տունը ԵՄ-ն է։

Աբրահամ Յարթունեան, «Ո՛չ Խնդալու է, Ո՛չ ալ Լալու»- Հայոց Յեղասպանութեան Մասին Յուշագրութիւն», Հայագիտութեան եւ Հետազոտութեան Ազգային Ընկերակցութիւն, Քեմպրիճ, Մասաչուսեց 02138, Բ. Հրատ., Ա.Ս.Ն.,

1986, 206 էջ:

Neither to Laugh, Nor to Weep- A Memoir of the Armenian Genocide- National Association for Armenian Studies and Research, Cambridge, Mass. 02138, Second Edition, USA, 1986, 206 pages.



Աբրահամ Յարթունեան ծնած է Սեւերակ (Թրքերէն՝ Սէւէրէկ- Յ.Ի.), 1872-ին: Փոքր տարիքին կորսնցուցած է մայրը ու ապրած՝ հօրը եւ անոր առաջին կնոջ մէջ քրոջ ու երեք եղբայրներուն հետ: Տեղւոյն երկրորդական վարժարանը աւարտելէ ետք, ան հինգ տարի հօրը հետ կ'աշխատի կաշեգործութեան մէջ: Ապա կը մեկնի Այնթապ եւ այնտեղի Այնթապի կեդրոնական Թուրքիոյ

Գոլէճը կ'ուսանի, որ ամերիկեան հաստատութիւն մըն էր: Աւարտելէ ետք, Աբրահամ վերադառնալով Սեւերակ, տեղւոյն երկրորդական վարժարանին մէջ ուսուցչութեամբ կը զբաղի:

1895-ի ջարդերուն Աբրահամ Յարթունեան մագապուրծ կ'ազատի սպաննուելէ: Երկու տարի շարունակ հայերը կը հալածուին: Սպաննուողները կ'անհետան, իսկ վերապրողները թշուառութեան կը մատնուին: Շատեր փողոցները կը թափառին եւ կը մուրան, որովհետեւ կտոր մը չոր հացի կարօտ կը մնան: 1886-ի գարնան սկիզբը Այնթապի Ամերիկեան Առաքելութեան միսիոնար Սենտրոյ Սեւերակ կու գայ, հայ թշուառներու վիճակին մօտէն հետեւելու: Սենտրոյ իբր օգնութիւն Աբրահամին փոքր գումար մը կը յանձնէ:

Աւելի ուշ, Այնթապի եւ Եղեւնիոյ ամերիկեան միսիոնարութիւնները իբր օգնութիւն յաւելեալ գումար կը դրկեն Աբրահամ Յարթունեանին: Այնթապի միսիոնարութիւնը Աբրահամին Սեւերակի մէջ կարիքաւորներուն օգնութիւն բաշխող պատասխանատուի պաշտօն կու տայ: 1896-ի ամառը անգլիացի հայասէր Փրոֆ. Բժ. Ռենտըլ Հերրիս Սեւերակ կ'այցելէ: Անոր օգնութեամբ

Աբրահամ 1897-ի Սեպտեմբերին իր աստուածաբանական ուսումը կը շարունակէ Այնթապի մէջ: 1895-ի ջարդերուն ան կորսնցուցած էր իր հայրն ու երկու ամուսնացած եղբայրները, որոնց ընտանիքներուն կարիքները հնարաւորին չափ ինք կը հոգար: 1895-ի կտորածներուն ստեղծուած ծանր մթնոլորտին մասին Աբրահամ Յարթունեան դառնութեամբ կ'արտայայտուի: 1899-ին Այնթապի օգնութեան կոմիտէի բոլոր հայ անդամները կը ձերբակալուին օսմանեան իշխանութեան կողմէ: Կառավարիչը անոնցմէ կ'իմանայ, թէ Աբրահամ Յարթունեան կոմիտէի մեծաւորն էր, ուրեմն կը հրամայէ վերջինիս ձերբակալութիւնը: Ամերիկացի միսիոնարներ Դոկտ. Ֆուլլըր եւ Տոքթ. Շեփըրտ կը միջամտեն ի նպաստ Յարթունեանի եւ ձերբակալութիւնը մէկ ամիսով կը յետաձգուի: Այս միջոցին ան կ'աւարտէ Աստուածաբանական գոլէճը: Տիգրանակերտի մութասարրիֆը գոլէճի անօրէնին գաղտնի նամակ մը կը գրէ, որուն մէջ կը թելադրէ, որ Աբրահամ Յարթունեան փախուստ տալով ազատի ձերբակալութենէն: Աբրահամ կը մտածէ փախուստի

մասին, սակայն իր խիղճը զինք կը տանջէ ձերբակալուած իր 11 պաշտօնակիցներուն համար, որոնց կացութիւնը պիտի բարդանար անոր փախուստով: Ուստի Աբրահամ կ'որոշէ Տիգրանակերտ մեկնիլ ու յանձնուիլ իշխանութեան: Ան կը բանտարկուի եւ 13 ամիս բանտ մնալէ ետք, անգլիական հիւպատոսին միջամտութեամբ եւ միսիոնարութեան ջանքերով ազատ կ'արձակուի:

Աբրահամ Յարթունեան 1900-ի Սեպտեմբերին Այնթապ կը մեկնի: Ան աստուածաբանական բազմաթիւ գիրքեր կ'ուսումնասիրէ ու կը խորանայ այդ ոլորտին մէջ, ապա Մարաշի Աստուածաբանական ճեմարանը կը յաճախէ: 1902-ին կ'աւարտէ ճեմարանը ու կը դառնայ քարոզիչ, կը նշանուի Շուշան Գազանճեանի հետ: Սեւերակի մէջ երբ երկու թուրք աւատապետեր իրար դէմ կը պայքարին եւ հոն ապրելու մթնոլորտը անբարենպաստ կը դառնայ, հայերէն շատեր Տիգրանակերտ, Ջերմուկ եւ Չնքուշ կը գաղթեն: Յարթունեան իր ընտանիքին հետ Այնթապ կը մեկնի, ուր 10 Ապրիլ 1904-ին կը բախտաւորուին առջինեկ մանչ զաւակով մը: Ան Մարաշի մէջ տարի մը կը պաշտօնավարէ իբր Եւ հոգեւոր հովիւ: 1905-ին ընտանեօք կ'անցնի Ջէյթուն ու հոն կը պաշտօնավարէ, ուր 1907-ին պատուելի կը ձեռնադրուի: 1913-ին կը փոխադրուի Մարաշ, ուր 40 հազար հայեր կ'ապրէին, նոյնքան ալ շրջակայ գիւղերուն մէջ: Կիրակի, 2 Օգոստոս 1914-ին, Մարաշի մէջ խաղաղ օր մըն էր: Յաջորդ օրը Ա. Համաշխարհային պատերազմը կը յայտարարուի: Վերապատուելի Աբրահամ Յարթունեան այդ դառն օրուան մասին հետեւեալը կը գրէ. «Ինչպէս ամբողջ աշխարհի վրայ, հայութեան սիրտը համարուող Մարաշի մէջ եւս խաղաղութիւնը եւ ուրախութիւնը յօդս ցնդեցան, յոյսերը խամրեցան, եւ նախկին եռանդը չմնաց» (էջ 53): Ան գինուորացիութեան եւ ճակատ երթալու մասին կ'ըսէ. «Մէկ կողմէ հայ գինուորները խումբ առ խումբ կը հաւաքուէին եւ հոս ու հոն կը դրկուէին իսլամ գինուորներու հետ: Տուններու եւ եկեղեցիներու բնակիչները կը պահսէին: Լացն ու կոծը ամէն տեղ էին: Աշխատանքները գործնականապէս դադարած էին: Եկամուտի աղբիւրները կը չորնային եւ ժողովուրդը յուսահատութեան կը մատնուէր: Միւս կողմէ, եկեղեցին եւ դպրոցը կը գործէին եւ պէտք էին շարունակել: Թուրքերը պատերազմի մէջ մտած էին:

Ամէն կողմ բռնատիրութիւն կար» (էջ 53):

Վերապատուելի Աբրահամ Յարթունեան Ջէյթունի մասին լսած դէպքերը կը նկարագրէ, ուր կ'ըսէ, թէ օսմանեան բանակի թուրք հրամանատար հազարապետ Ֆախրի փաշա իր երկու օգնականներով՝ Հիւսէյն եւ Սիւլէյման պէյեր, ու հազար գինուորներով կը հասնի Ջէյթուն եւ քաղաքին երեւելիները ժողովի կը հրաւիրէ: Ան հայոցմէ կը պահանջէ, որ բոլոր հայ յեղափոխականները գէնքերը յանձնեն ու պետութեան յանձնուին, խոստանալով զանոնք իբր գինուոր բանակին կցել: Քառասուն հայ յեղափոխականներ հրամանին կ'ենթարկուին: Միւս կողմէ, 20 յեղափոխականներ Չոլաքեան եղբայրներու առաջնորդութեամբ կը մերժեն յանձնուիլ եւ լեռները քաշուելով կը պատրաստուին իրենք գիրենք եւ ժողովուրդը պաշտպանել թուրքերուն դէմ: Դիմադրողները վանքի մը մէջ դիրք կը բռնեն եւ 24 ժամ կը պայքարին իրենց կեանքին համար: Անոնք թրքական զօրաւոր ուժէն 500 գինուորներ գետին կը տապալեն եւ ենթահրամանատար մը կը սպաննեն: Յեղափոխականներ գիշերուան մութէն օգտուելով վանքը կը պարպեն ու կրկին լեռները կ'ապաստանին: Վերապատուելի Յարթունեան նախապէս յանձնուած քաջերուն համար հետեւեալը կ'ըսէ. «Վերջապէս Ջէյթունի աղաները յաջողեցան համոզել քաջերը յանձնուելու: Սակայն թուրքերը զանոնք փոխանակ բանակ տանելու, ինչպէս խոստացած էին, զանոնք անմիջապէս ձերբակալեցին իրար կապուած արջառներու պէս ու Մարաշի բանտը նետեցին» (էջ 54):

Թրքական «տիպար գործելակերպ»ի իբրեւ արդիւնք, ձերբակալութեան կարգը կու գայ Ջէյթունի երեւելիներուն, որոնց հետ կարճատեւ մը առաջ Ֆախրի փաշա «սիրալիր» հանդիպումի ընթացքին խոստացած էր յանձնուողները զերծ պահել բանտարկութենէ եւ սպանութենէ: Թրքական բանակը Ջէյթունը կը պաշարէ: Թուրքերը կը կատարին ի տես 20 հայ յեղափոխականներու փախուստին: Անոնք Նազարէթ չառու Նորաշխարհանը կը ձերբակալեն:

Ֆախրի գայն բրտօրէն ծեծի կ'ենթարկէ որ անգզայ վիճակով Մարաշի բանտը կը նետուի: Բանտին մէջ թուրք ասկեարները Նազարէթ չառուը կրկին կը ծեծեն, նախքան գայն թունաւորելը: Նազարէթ չառուը այդպէս կը նահատակուի:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԹՈՐԳՈՄ ԵՒ ՌՈՒԹՂ ՓՈՍՏԱՃԵԱՆ

Վերապատուելի Արրահամ Յարթունեանի Յուշերը

Շուտով Ձէյթունի հայոց բռնագաղթը կը սկսի: Անկէ ետք Ֆրնտրճագի եւ Տէրէքէօյի հայերը կացութեան լրջութեան կը գիտակցին եւ կը մերժեն բռնա գաղթուիլ: Անոնք դիրք կը բռնեն Ֆրնտրճագ գիւղին մէջ եւ կը պատրաստուին ինքնապաշտպանութեան: Շրջակայ գիւղերու հայերն ալ, մերժելով բռնագաղթը, Ֆրնտրճագի մէջ կը հաւաքուին: Բոլորն ալ թրքական վտանգը նախատեսած ըլլալով դիրք կը բռնեն թուրքերու դէմ: Միւս կողմէ, թուրքերը նոյն տարուան Մայիսին, Յունիսին եւ Յուլիսին Ձէյթունի հայերը խուճապ կը հեռացնեն բռնի միջոցներով:

Թրքական իշխանութիւնը Մարաշի մէջ 1915-ի Ապրիլ ամսուան սկիզբը Վեր. Աբրահամ Յարթունեանն ու 10 հայ հոգեւորականներ կը ձերբակալէ:

Մարաշի ձերբակալուածները թուրքերը սրահի մը մէջ կը հաւաքեն, անոնց կը հրամայեն Ֆրնտրճագ մեկնիլ ու ըմբոստ հայերը համոզել, որ յանձնուին թուրքերուն: Թուրքերը Վեր. Յարթունեանէ, Տէր Արսէն Յովհաննէսեանէ եւ Տէր Սահակ Տէր Պետրոսեանէ կազմուած յանձնախումբ մը ճամբայ կը հանեն թուրք գինուորներու հսկողութեան տակ: Պատգամաւոր յանձնախումբը ճերմակ դրօշակ պարզած 31 Յուլիս 1915-ին կը մտնէ Ֆրնտրճագ: Իրենց առաքելութեան մասին Վեր. Յարթունեան կ'ըսէ, թէ իրենք ոչ միայն չեն փորձեր համոզել ըմբոստ հայերը գէնքերը յանձնելու, այլ կը քաջալերեն զանոնք կռուելու մինչեւ վերջ, որովհետեւ յանձնուելու պարագային այսպէս կամ այնպէս թուրքերը զանոնք մահուան պիտի դատապարտէին, ուստի նախընտրելի էր, որ անոնք կռուելով մեռնէին:

Ֆրնտրճագի մէջ պատսպարուած 1500 հայերէն միայն 300-ը կռուողներ էին, իսկ մնացեալը՝ կիներ, մանուկներ ու ծերեր: 3000 թուրք գինուորներ կը պաշարեն գիւղը եւ հետգհետէ կը խեղդեն հայերը, նեղցնելով պաշարման օդակը կրակոցներու տակ: Հայ քաջերը հերոսաբար կը դիմադրեն, սակայն դիմացը գտնուող ուժը անհաւասար էր: Չոլաքեան եղբայրներու ղեկավարութեամբ հայ կռուողները բազմաթիւ թուրք ասկերներ կը սպաննեն ճակատի վրայ, արհամարելով վախն ու մահը: Թրքական ուժերը հետգհետէ կը յառաջանան գիւղին խորը եւ կը գրաւեն գայն: Անոնք գիւղը կրակի կու տան: Երկինքը ծուխով լեցուած էր եւ Մարաշէն գիւղին վրայ բարձրացող մուխն ու ծուխը պարզ աչքերով կ'երեւար:

Չոլաքեան եղբայրներու առաջնորդող խումբերը ժողովուրդին օգնութեան կը հասնին ու կիներն ու ծերերը լեռները կը քաշուին: Գիւղին մէջ մնացած ժողովուրդը, որ չէր յաջողած լեռները ապաստանիլ, ոչխարներու հօտին պէս կը տարուին Մարաշ: Յարթունեան մեծապէս օգտակար կը դառնայ Ֆրնտրճագի հայ գաղթականներուն, անոնց ուտելիք եւ հագուստ ապահովելով: Այս գործը ան կը յաջողի գլուխ հանել շնորհիւ տեղուցի հայանպաստ կառավարիչ՝ Իսմայիլը Քեմալ փաշայի բարեհաճութեան:

Վերապատուելի Յարթունեան կառավարիչին մասին կ'ըսէ, թէ ան խղճամիտ, ազնիւ եւ արդարադատ մարդ մըն էր, որ բոլոր կարելի միջոցներով փորձած էր ազատել հայերը: Քեմալ փաշա յաճախ վերապատուելիին ցոյց կու տար Կ. Պոլսէն եկած Թալաթի եւ էնվերի հրահանգ հեռագիրները, որոնցմով անոնք կը հրամայէին իրեն կոտորել հայերը, սակայն ինք կ'անտեսէր այդ հրահանգները: Սոյն յուշագիրքին հեղինակը կը յիշէ նաեւ Կ. Պոլսոյ մէջ ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորկընթաուի հայանպաստ կեցուածքն ու գործունէութիւնը:

Ականատես վկայ վերապատուելի Աբրահամ Յարթունեանի վկայութեան կը մէջբերենք հատուած մը, որ կը նկարագրէ օրուան կացութիւնը. Սպան նուած « 1915-ի Օգոստոս 5-ին, Ֆրնտրճագ գիւղերու բռնագաղթէն եւ իրենց գիւղը մոխիրի վերածուելէ ետք, սպաննուած թուրք գինուորներուն դիակները կը թաղուին, իսկ հայ նահատակներու դիակները վայրենի անասուններուն եւ գիշատիչ թռչուններուն կեր կը դառնան: Ատանայի գինուորական կառավարիչ ձեմալ փաշա յաղթականօրէն Մարաշ կը մտնէ » (էջ 63): Հայ կրօնաւորներն ու Մարաշի երեւելիները ձեմալ փաշայի քով կ'երթան եւ անոր բարի գալուստ կը մաղթեն: Վերջինս հակահայ ճառ մը կը խօսի եւ հայերը սրտմտած իրենց տունները կը վերադառնան:

6 Օգոստոս 1915-ին օսմանեան իշխանութիւնը Մարաշի հայոց կը հրամայէ յանձնել իրենց քով եղած գէնքերը: Թուրքերը կը պատրաստուին յաջորդ օրն իսկ հայերը աքսորելու: 7 Օգոստոս 1915-ին բանտին դռները կը բացուին եւ ձերբակալուած հայերը խուճապ առ խուճապ իրար կապուած կ'աքսորուին դէպի սուրիական անապատները, սակայն տեղ չհասած զանոնք կը սպաննեն: Ոմանց Մարաշի մէջ կախաղան կը բարձրացնեն:

Գաղթականներուն առաջին հանգրուանը Աղուր լեռան ստորտը կ'ըլլայ, ուր թուրքերը հայերէն ոմանց կը գնդակահարեն: Հոն ներկայ կ'ըլլայ գերմանացի միսիոնար Պրն. Սփիքըր, որ պատահող գնդակահարութիւններուն համար իր ընդվզումը կ'արտայայտէ թուրքերուն ըսելով. « Այս անմեղներուն արիւնը ո'չ թուրքիան եւ ո'չ ալ Գերմանիան կրնայ փրկել » (էջ 64): Վերապատուելի Աբրահամ Յարթունեան կ'ըսէ, թէ այլեւս գաղտնիք մը չէր, որ թուրքերը որոշած էին հայերը բնաջնջել: Մարաշի մէջ մնացած հայերը խուճապ առ խուճապ կը բռնագաղթեցուին:

Կարգը կու գայ ութ հարիւր հոգինոց բողոքականներու խումբի մը աքսորման, որոնց հովիւը վերապատուելի Յարթունեանն էր: Իշխանութիւնը զանոնք ճամբայ կը հանէ: Նոյն օրը երեկոյան կառավարիչ Քեմալ վերապատուելիին իր քով կը կանչէ եւ անոր կ'ըսէ, թէ Կ. Պոլսէն նոր որոշում մը եկած է, ըստ որուն, բողոքականները զերծ պիտի մնային բռնագաղթուելէ: Վերապատուելիին կը խնդրէ կառավարիչէն, որ 800 հոգինոց բողոքականներու խումբը ետ դարձնէ: Սկիզբը կառավարիչը կը մերժէ, սակայն ետքը կը համակերպի եւ սպաններ կը դրկէ կարաւանը վերադարձնելու եւ կարաւանը ետ կը դառնայ ու ամէն ոք իր տունը կ'երթայ: Քանի մը օր ետք թրքական իշխանութիւնը սատանայական նոր հնարք մը կ'ընէ, որով ան հրաման կու տայ կասկածելի անձերը բռնագաղթի ենթարկել անկախ անոնց չարանուանութենէն: Այսպիսով թուրքերը կը յաջողին քանի մը բողոքական հարուստ ընտանիքներ բռնի գաղթի հանել: Թուրքերու գործելակերպը Մարաշի հայոց ամէն օր վտանգ կը սպառնար: Քաղաքին հայութիւնը հետգհետէ կը նօսարանայ: Մարաշի մէջ գոյութիւն ունէր Երիտթուրքերու յատուկ գրասենեակ մը, ուրկէ ուղղակի բռնագաղթի հրաման կ'արձակուէր, ինչպէս հայկական բոլոր քաղաքներուն մէջ: Այս տեսակի գրասենեակները յատուկ առանձնաշնորհումներ ունէին, որոնք կը գերագանցէին կառավարիչին իրաւասութիւնները: Մարաշի երիտթուրքերու գրասենեակը վերապատուելի Յարթունեանը կ'ամբաստանէ իբրեւ պետական ապահովութեան վտանգաւոր տարր, ուստի հրաման կ'արձակէ գայն հեռացնել քաղաքէն: Զինուորական դատարանը կը վաւերացնէ այս որոշումը, սակայն կառավարիչ Քեմալ դէմ կը կենայ անոր եւ կ'ազատէ վերապատուելիին:

1916-ի Ապրիլին կառավարիչ Քեմալ վերապատուելի Աբրահամ Յարթունեանին կ'իմացնէ, թէ սպառնալիք ստացած է Իթթիհատի գրասենեակէն եւ այլեւս չի կրնար պաշտպանել գիւղը: Իթթիհատը որոշած էր բռնագաղթեցնել գայն: Վերապատուելիին իր ընտանիքը միսիոնարութեան մօտ կը ձգէ եւ կը հեռացուի քաղաքէն: Երկու օր ետք Ալպիստանէն անցնելով ան իր գաղթի ընկերոջ հետ կը հասնի Պաղչէ գիւղը:

Վերապատուելի Աբրահամ Յարթունեան 1916-ի Մայիսի կէսերուն Պաղչէի գերմանա-թրքական ղեկավարութեան կողմէ ջաղացպան կը նշանակուի:

Գերմանացի սպայ Քլաուս գայն քանի մը հայ բռնագաղթուածներու հետ ցորեն աղալու գործին կը լծէ հոն հասնելու առաջին օրէն իսկ: Անոնց աշխատանոցին հետիոտն ժամ մը հեռաւորութեան վրայ գանազան վայրերէ բռնագաղթուած հայ այրեր, կիներ ու մանուկներ ճանապարհաշինութեան վրայ կ'աշխատին: Ամբողջ շրջանին մէջ 12.000 հայեր կ'աշխատին ստրուկներու նման՝ օրական նկանակ մը հացի փոխարէն: Հեղինակը անոնց եւ օրուան վիճակին մասին կ'ըսէ. « Թէպէտ անոնք ստրուկներ էին, ամէն բանէ զրկուած՝ սաստիկ յոգնեցուցիչ աշխատանք կը տանէին, սակայն գոհ էին իրենց վիճակէն, որովհետեւ սուրէն, փամփուշտէն եւ բռնագաղթի չարչարանքներէն ու վտանգէն փրկուած էին: Առնուազն անոնք առանձնաշնորհումը կը վայելէին բնական մահով մեռնելու, սաստիկ սպառող աշխատանքի եւ ծայրայեղ չքաւորութեան տակ » (էջ 77):

Վերապատուելի Աբրահամ Յարթունեանի մնացած վրանին առջեւ օր մը Արամ չաւուշ Չոլաքեանի ազատամարտիկներէն գէյթունցի մը կու գայ: Արամ Չաւուշ իր կռուողներուն հետ Ֆրնտրճագէն եկած էր Ամանուսի լեռներուն վրայ Կեաւուր Տաղ կոչուած վայրը եւ կը կռուէր թուրքերուն դէմ: Զինեալները շրջակայ թուրք գիւղերը կ'իջնէին պարենաւորուելու համար: Յաճախ թուրք գիւղացիները իրենք կ'առաջարկէին սնունդ հայթայթել անոնց, զերծ մնալու համար կոխներէ:

Քլաուս երկու շաբաթ Վեր. Աբրահամ Յարթունեանը ջաղացպան աշխատեցնելէ ետք, գայն ճանապարհաշինութեան վրայ վերակացու կը նշանակէ: Վեր. Յարթունեան կ'իմանայ, թէ Մարաշի բոլոր հայերը պիտի բռնագաղթուին: Ան իր տիկնոջ եւ զաւակներուն մասին կը մտահոգուի



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿՎԱՐԳԱՎԱՌ ԵՒ ՈՍԿԻ ԱՆԹՈՍԵԱՆ

Վերապատուելի Արրահամ Յարթունեանի Յուշերը

ու գանազան միջոցներու կը դիմէ գանոնք իր քով բերել տալու: Քլաուսէն օգնութիւն կը խնդրէ, սակայն անոր թափած ճիգերը ապարդիւն կ'ըլլան: Մարաշէն լուր կու գայ, թէ թրքական իշխանութիւնը թոյլ չէր տար ռեւէ հայու տեղ երթալ, բացի միայն բռնագաղթելէ ըստ ծրագրին: Այս միջոցին Ամանուսի բոլոր հայերը բռնա գաղթեցնելու հրաման կու գայ: Յարթունեան իր ընկերներով ճամբայ կը հանուի:

Բռնագաղթի ճամբուն վրայ իր տեսածներն ու զգացածները Վեր. Աբրահամ Յարթունեան կ'արտայայտէ՝ ըսելով. «Կը լսենք երեխաներու ձիչերը եւ մայրերու հեծկլտանքը: Անոնք սաստիկ ցուրտին կը տառապին: Հանգիստ առնելու տեղ չունին: Անոնք կ'երեւակայեն յաջորդ օրուան բռնագաղթի ճամբուն տառապանքները եւ կը սոսկան: Դեռատի աղջիկներն ու հարսերը առեւանգուած են, որպէսզի թուրք սպաններն ու զինուորները իրենց անասնական կիրքերը յագեցնեն: Ոմանք, անկարող այդ տառապանքները տանելու, կը մահանան» (էջ 87):

Բռնագաղթի ճամբուն վրայ Այնթապի մօտերը միսիոնարներու կարգադրութեամբ ան իր կնոջ կը հանդիպի եւ ողջագուրուելէ ետք երկար կը գրուցեն:

Անոր տիկինն ու Մարաշէն ծանօթ միսիոնարուհի մը դրամ կը յանձնեն իր պէտքերը հոգալու համար: Թուրքերը շուտով գանոնք իրարմէ կը բաժնեն: Վեր. Յարթունեանի կարաւանը Այնթապ կը հասնի, ուր ան միսիոնար Մերիլ լի եւ տիկնոջ ջանքերով Այնթապ կը մնայ մինչեւ 4 Սեպտեմբեր 1918, 2 տարի եւ 2 ամիս: 1918-ի Սեպտեմբերին ան Մարաշ կը մեկնի եւ կը միանայ ընտանի քին: 1919-ի սկիզբը Մարաշի մէջ հայերը կը սկսին ուրախութեամբ իրենց տունները նորոգել, եկեղեցիները կը բացուին եւ կեանքը նոր թափ կ'առնէ: Անգլիական բանակի զինուորները Մարաշ կը մտնեն: Հայ վերապրողները խումբ առ խումբ իրենց տունները կը վերադառնան: Սակայն հայերը յանկարծ Հալէպի հայոց կոտորածին լուրը առնելով կ'այլալսին: Այդ կոտորածին համար Վեր. Աբրահամ Յարթունեան կ'ըսէ. «1919-ի 28 Փետրուարին ուրիշ ջարդ մը կազմակերպուած էր թուրքերու կողմէ, Հալէպի մէջ, գրեթէ բրիտանական բանակի աջակցութեամբ: Անգլիացիները մորթեցին փրկել հայերը, բայց շատ ուշ էր: Թէպէտ կոտորածը վերջ գտաւ, սակայն կը մնայ այն իրողութիւնը, թէ հայերը ջարդուեցան բրիտանական բանակի ներկայութեան: Մենք Մարաշի մէջ վախի ու շփոթի մատնուեցանք» (էջ 121): Բարեբախտաբար այդ ոճրալիս եւ վատ մթնոլորտը շուտով կը փարատի եւ անգլիական բանակը Մարաշ կը մտնէ: Հայերը մեծ յոյսեր կապած էին դաշնակիցներու օգնութեան: Վեր. Յարթունեան կ'ըսէ, թէ հայերը հոգեպէս եւ մարմնապէս կը վերականգնին եւ խանդավառութեամբ կը լեցուին, սակայն ան հայը դիւրահաւատ կը կոչէ, որովհետեւ սին յոյսեր կը փայփայէ օտարներու օգնութեան նկատմամբ:

Խաղաղութեան ժամանակաշրջանը շուտով վերջ կը գտնէ: Թուրք հրոսակախումբեր հայ ճամբորդներ կը կողոպտեն ու կը սպաննեն, մղուած քաղաքական մթնոլորտի շարժառիթներէն: Երբ հայերը անգլիական բանակի սպաններուն կը բողոքեն այս մասին, անոնք կը պատասխանեն, թէ շուտով պիտի քննեն այդ հարցերը եւ պատժեն պատասխանատուները: Հեղինակը անգլիացիներու մասին կ'ըսէ. «Անոնք ո'չ մէկ բան ըրին» (էջ 126): Վեր. Աբրահամ Յարթունեան իր ընտանիքին հետ կ'ապրի եկեղեցու շրջաբակին սենեակներէն մէկուն մէջ: Գերմանացի միսիոնարները վտարուած էին երկրէն դաշնակից ուժերու կողմէ: Գերմանական հաստատութիւնները կը կառավարուէին Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոց հիմնարկին կողմէ:

Անգլիացիները լարուած էին գերմանացիներու դէմ: Սակայն միւս կողմէ անոնք կը սկսին սիրալիւր յարաբերութիւններ մշակել թուրք պաշտօնատարներու հետ: Ասոր մասին հեղինակը կ'ըսէ. «Քաղաքական մթնոլորտը հիմնական փոփոխութիւններու կ'ենթարկուի: Բրիտանացի զինուորականներն ու բարձր պաշտօնեաները կը սկսին բարեկամական ու սերտ յարաբերութիւններու մէջ մտնել թուրք պաշտօնեաներուն եւ աղաներուն հետ: Ասկէ քաջալերուած թուրքերը անմիջապէս հայոց հանդէպ թշնամական կեցուածք կ'որդեգրեն: Քաղաքին մէջ լրջակայ գիւղերը թուրքերը կրկին կը կողոպտեն ու կը սպաննեն հայ ճամբորդները: Անգլիացիները, ի տես այս երեւոյթին, ո'չ մէկ գործնական քայլ կ'առնեն արգիլելու համար պատահող ոճիրները: Ամէն անգամ որ մենք բրիտանացիներուն կը դիմենք, խնդրելով որ մեզ պաշտպանեն, անոնք թուրքերէն քանի մը կտոր գէնք կը հաւաքեն առ երես եւ քանի մը օր ետք կը վերադարձնեն գանոնք» (էջ 125): «Շուտով թրքական կառավարութիւնը կը սկսի գէնք ու զինամթերք բաժնել Մարաշի եւ շրջակայ գիւղերու թուրքերուն: Իւրաքանչիւր թուրքի տուն զինամթերքի

ամբարանոց կը դառնայ: Անգլիացիները լուր կը մնան եւ պարզ դիտորդի դեր կը կատարեն: Մարաշի նոր կառավարչը՝ Աթապէյ, կը գինէ թուրքերը անգլիացիներուն հետ իր բարեկամական կապերը շահագործելով եւ ոչ միայն անոնց համամտութեամբ, այլ նաեւ՝ քաջալերանքով» (էջ 125), կ'ըսէ հեղինակը ու կ'աւելցնէ. «Բոլոր եւրոպական պետութիւնները միայն իրենց շահերուն ետեւէ էին եւ պատրաստ՝ զոհելու հայերը... բրիտանացին, ֆրանսացին, գերմանացին, իտալացին, ռուսը, բոլոր քրիստոնեայ պետութիւնները մեր ջարդարարներն են: Մենք կը կարծէինք, թէ եւրոպացիները մեր փրկարարները պիտի ըլլային, սակայն իրականութիւնը եկաւ փաստելու, թէ անոնք աւելի դաժան են քան թուրքերը: Անոնք պատերազմ յայտարարած են ոչ թէ փրկելու անօգնական ազգերը, այլ տիրանալու համար քարիւղի, հանքերու եւ հողերու, լքելով այդ թշուառ ազգերը: Մենք հասկցանք, թէ եւրոպացիները խաբէբայ են: Անոնք պատրաստ չեն աշխարհի խաղաղութիւնը պահպանելու, այլ ապահովելու իրենց կայսերապաշտական շահերը՝ խաղաղութեան հաշուոյն» (էջ 126): Վեր. Յարթունեան կ'եզրակացնէ. «Աշխարհի քրիստոնեայ ուժերը քրիստոնեայ հայ ազգին ջարդարարներն են» (էջ 127):

Վերապատուելի Աբրահամ Յարթունեանի երէց որդին՝ Ալպեո, Տարսոն կը մեկնի ուսանելու: Անգլիական ուժերը 1919-ի Նոյեմբեր 1-ին կը լքեն Մարաշը ու կը հեռանան: Անոնց կը փոխարինեն ֆրանսական ուժերը: 8 Նոյեմբերին թուրքերը Մարաշի մէջ մզկիթէ մը կրակ կ'արձակեն ֆրանսական ուժերու մէկ շրջուն ինքնաշարժներով խումբի մը վրայ եւ հայ կամաւոր մը կը նահատակուի:

Այս եղածը փորձ մըն էր թուրքերու կողմէ՝ շօշափելու համար ֆրանսացիներու տրամադրութիւնն ու հակազդեցութիւնը... Կ'ակնկալուէր, որ ֆրանսացիները հակադարձէին պատշաճ կերպով ու երեւան հանէին ոճրագործը: Սակայն այդպիսի բան մը տեղի չ'ունենար ու ֆրանսացիները մոռացութեան կու տան դէպքը: Ֆրանսացիները այլալսած հայերը կը յորդորեն քաջ կենալ ու չվհատիլ: Այս խաբէութիւն մըն էր անոնց կողմէ, ժամանակ անցընելու: Յաջորդ Ուրբաթ օրը թուրք խուժանը ֆրանսական կառավարական շէնքին վրայ կը յարձակի եւ կրակի կու տայ ֆրանսական դրօշակը: Քանի մը օր ետք, անոնք ֆրանսացի կառավարիչ Անտրէն ու հայ պատգամաւոր Վահանը կ'անարգեն ու վերջինս ծեծի կ'ենթարկեն: Թուրքերը կառավարիչ Անտրէն չեն դպչիր: Մուսթաֆա Քեմալի ուժերը օր ըստ օրէ կը գորանան ու կը ծաւալին: Ոճրագործ Քըլըճ Ալի փաշա Մարաշի շրջանի քեմալական պատասխանատու կը նշանակուի: Ան թուրքերը քիւրտերն ու չէրքէզները կը գինէ հայոց ու ֆրանսացիներու դէմ: Թուրք եւ իսասուրէն իրենց բռնի միացուած այլ իսլամ զինեալներ ֆրանսացիներու աջակցութեամբ առջեւ խրամատներ կը փորեն ու կը զինուին: 1919 տարին կասկածներու վրայ մտավախութեամբ լեցուն տարի մը կ'ըլլայ հայոց համար:

Ահեղի տարի մը կ'ըլլայ 1920-ը: Մարաշի մէջ հայոց սոսկալի կոտորած տեղի կ'ունենայ թուրք-իսլամներու կողմէ: Հաճոն հերոսաբար կը դիմադրէ եւ անոր 6000 զաւակները կը նահատակուին կամ կը բռնագաղթուին: 160 հայ աղջիկներ Հաճոնի Աղջկանց որբանոցէն կ'առեւանգուին, թրքական հարէմները կը տարուին եւ ապա կը խողխողուին: Քեմալականները Մարաշի հայերէն շատերուն կը ստիպեն որ զինուորագրուին, գանոնք սպաննելու միտումով: Այնթապի հայերը ինքնապաշտպանական կուրիւներ կը մղեն: 1921-ի վերջերը Զէյթունի հայութիւնը կոտորուելէ ետք քաղաքը հայութենէ կը պարպուի:

1922-ի սկիզբը հայերը Մարաշէն կը հեռանան: Վեր. Յարթունեան ընտանեօք այնտեղէն Այնթապ կ'երթայ, յետոյ կ'անցնի Քիլիս, Հալէպ, Պէյրութ եւ անկէ ալ Կ. Պոլիս ու Զմիւռնիա կը հասնի, որուն անկումով ընտանեօք նախ Փիրէա, Յունաստան կ'անցնի եւ ապա ԱՄՆ կը գաղթէ:

Այստեղ Վեր. Աբրահամ Յարթունեանի յուշագրութիւնը վերջ կը գտնէ: **ԲԱՅԱՌԻԿ 2022 19**

ԱՐԱՐԱՏ Տնտեսական «Տնտեսական աճի արդար բաշխումը ամենակարեւոր գործօնն է յաջող տնտեսութեան մը»:

Տէյվիտ Իկնաթիուս, 20-րդ դարու ամերիկացի լրագրող Վերջին տարիներուն համաշխարհային տնտեսութիւնը դիմագրաւեց շարք մը մարտահրաշխանքներ, որոնց ամենակարեւորները պիտի փորձենք ընդգրկել այս սերտորոշութեան մէջ: Աշխարհի տնտեսութեան մէջ կան կարգ մը հոլովոյթներ, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան եւ պիտի ունենան համաշխարհային տնտեսութեան զարգացումին վրայ:

Առաջին կարեւոր գործօնը, որ ի յայտ եկաւ համաշխարհայնացումի տարի ներուն, մանաւանդ 1990-ականներէն ետք, տնտեսական աճի



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՉԷ ԵՒ ՍՕՍԻ
ՍԷՄԵՐՃԵԱՆ**

Վերապատուելի Արբահամ Յարթունեանի Յուշերը

անարդար ձեռով բաշխումն էր: Ի՞նչ էր այդ անարդար բաշխումին հիմնական պատճառը: Միջին դասակարգը, որ կը կազմէր Արեւմուտքի դրամատիրական համակարգին ողնայարը եւ շարժիչը, մեծ հարուած ստացաւ, երբ սկսան Մայրագոյն Արեւելք եւ հարաւային արեւելեան Ասիա փոխադրել ճարտարարուեստական գործարանները: Միջին դասակարգը կը բաղկանար առաջին կարգի վարպետներէ եւ արհեստավարժ գործաւորներէ: Այդ արհեստաւորներուն մեծ մասը կորսնցուց իր գործը: Այդ արհեստաւորները անցան պարզ գործերու, իրենց եկամուտին մեծ մասը կորսնցուցին: Այսպիսով Արեւմուտքը կամաց-կամաց կորսնցուց իր ողնայարը կազմող այդ կարեւոր դասակարգին բաղկացուցիչ տարրերուն մեծ մասը: Բաց, առանց մաքսի սահմանները նաեւ իրենց ժխտական դերը կատարեցին: Երկիր սկսան մտնել Մայրագոյն Արեւելքի արտադրութիւն երող աւելի աժան ապրանքներ: Տեղական ճարտարարուեստը մեծ հարուած ստացաւ: Լիբանանի մէջ փակուեցան կամ նուազագոյն չափի հասան տեղական ճարտարարուեստի ընկերութիւններ: Այս հոլովոյթը շարունակուեցաւ մինչեւ 2019-ի տնտեսական տագնապը, որու հիմնական պատճառներէն մէկը այս սխալ, բաց սահմաններու քաղաքականութիւնն էր: Երբ երկիրն ճատարարուեստը եւ գիւղատնտեսութիւնը չկրցան ապահովել պէտք եղած եկամուտը, մանաւանդ Սուրիոյ տագնապէն ետք փակ սահմաններու պատճառով, կառավարութիւնը շարունակեց իր ձախող տնտեսական քաղաքականութիւնը, կուտակելով պարտք, որ վերջապէս Արեւելքէն դարձաւ անկառավարելի:

Պետական պարտքը դարձաւ նաեւ վտանգի աղբիւր բոլոր Արեւմուտքի դրամատիրական երկիրներուն եւ զարգացող ոչ-ճարտարարուեստական երկիրներուն համար: Այսօր Լիբանանի պետական պարտքը անցած է 80 միլիարտ տոլարի սահմանը: ԱՄՆ-ի պետական պարտքը շատոնց անցած է 23 հազար միլիարտ տոլարի սահմանը: Ամերիկեան ընկերութիւններու պարտքը անցած է 10 հազար միլիարտ տոլարի սահմանը: Իսկ ընտանիքներու պարտքը անցած է 7 հազար միլիարտ տոլարի սահմանը: Չինաստանի մէջ «Էվըրկրանտէ» շինարարական ընկերութեան պարտքը անցած է 300 միլիարտ տոլարի սահմանը եւ պարտքը անկառավարելի դառնալու մեծ հաւանականութիւն կայ: Վերջին տարիներուն, անշարժ գոյքի շուկան Չինաստանի մէջ աւելի կառուցեց, սպասելով գալիք պահանջարկին: Պէտք եղած պահանջարկը չեկաւ եւ պարտքը աւելցաւ, հասնելով անկառավարելի սահմանին: Ուրեմն, պարտքի չափը երբ կ'անցնի ընկերութեան կամ երկրի մը ունեցած եկամուտին կամ ունեցուածքին 60 առ հարիւրը, ան կը սկսի մօտենալ անկառավարելի սահմանին:

2008-ի տնտեսական տագնապէն ետք ԱՄՆ եւ Արեւմուտքի շատ մը երկիրներ սկսան դրամ տպել եւ շուկայ մտցնել պարտամուրհակ գնելու ձեռով եւ պարտքի տալով դրամատուններուն, փոխանակ պարտքի տալու ճարտարարուեստին եւ գիւղատնտեսութեան: Այս դրամին ծաւալը ուշ կամ կանուխ պիտի ազդէր շուկային վրայ, մանաւանդ երկար տեւելու պարագային, ու պատճառէր սղաճ (inflation), որ կրնար հասնիլ երկնիչ թուանշանի, այսինքն մինչեւ 10 առ հարիւրի կամ աւելի: Ներկայիս ԱՄՆ ականատես կը դառնայ այդ իրականութեան: Երկար տեւելու պարագային, այս հոլովոյթը կը կոչուի dragflation, այսինքն՝ բարձր սղաճ, բարձր պարտքի տոկոս եւ տնտեսական անկում:

Այս իրականութեան առջեւ կը գտնուի ներկայիս ԱՄՆ-ի տնտեսութիւնը: ԱՄՆ-ի դիմագրաւած որեւէ տնտեսական տագնապ կրնայ վարակիչ ըլլալ եւ ազդել ամբողջ դրամատիրական համակարգին վրայ: Սղաճի ուրիշ պատճառ մըն ալ ապրանքի արտադրութեան նուազումն է Գորոնա ժահրին պատճառով: Սակայն մէկ տարի փակումէ ետք պահանջարկը շուտ աւելցաւ եւ ընկերութիւններ չկրցան ճիշդ ժամանակին արտադրել, պատճառ դառնալով մեծ խանութներու մէջ պարագա դարակներու: Իսկ կիսահաղորդիչներու (microchip) արտադրութեան նուազումը պատճառ դարձաւ բջիջային հեռախօսներու, ինքնաշարժներու արտադրութեան նուազումին եւ գինի չաւելումին:

Գորոնա ժահրի համաճարակը տակաւին չէ աւարտած եւ այս հարցը մեծ բեռ կը դնէ պետութիւններուն վրայ: Հազիւ պատուաստում մը գտնուի, կարճ ժամանակ ետք ի յայտ կու գայ այս ժահրի մէկ նոր տարբերակը: Կը ստիպուի զարգացնել պատուաստում կատարել մարդոց պաշտպանութեան համակարգը գորացնելու համար: Յարգ երեք պատուաստում արդէն կատարուած է: Այս համաճարակին աւարտը տակաւին չ'երեւիր, իր բոլոր դժուարութիւններով:

Սակայն ան սկսած է դառնալ կրիփի համաճարակին մէկ աւելի ծանր տարբերակը: Մարդիկ սկսած են ընտելանալ նոր վիճակին: Սակայն շատ մը երկիրներ տակաւին որոշում կը կայացնեն երկրի կարգ մը քաղաքներ

պահել փակ կամ պատուաստումը դարձնել պարտաւորիչ, անոր դէմ դնողներու հակակրանքը շարժելով, շարժում մը, որ հակակառավարական ցոյցեր կը կազմակերպէ եւ փողոցներ կը փակէ:

Մեծ երկիրներու դրամանիշներ սկսած են փոխարինուիլ: Օրինակի համար, շատ մը երկիրներ, ինչպէս՝ Չինաստան, Ռուսիա, Հնդկաստան եւ այլ, սկսած են իրարու ապրանք ծախել եւ վճարել իրենց դրամանիշով, առանց ամերիկեան տոլարի օգտագործումին: Այս հոլովոյթը կամաց-կամաց պիտի վնասէ տոլարին եւ երկար ժամանակի վրայ ան պիտի չ'անայ պահեստի դրամանիշ: Ան կրնայ փոխարինուիլ ոսկիով, այլ դրամանիշով կամ թուայնացուած դրամանիշով (digital currency): Միջին տեղութեան վրայ ամերիկեան տոլարը իր փոխարժէքը կորսնցնելու մեծ հաւանականութեան առջեւ պիտի գտնուի վերոյիշեալ պատճառներով:

Վտանգաւոր հոսանք մը զարգացաւ մանաւանդ Աֆղանիստանի, Իրաքի պատերազմներէն ետք, «Արաբական Գարուն» կոչուած շինծու շարժումէն ետք եւ Ափրիկէի ժողովուրդները աղքատ պահելու հոլովոյթին պատճառով:


Այդ շարժումը գաղթականութեան այն հսկայ ալիքն է, որ մարդիկ կը մղէ ձգելու իրենց պայտեական հողերը եւ երթալու, նոյնիսկ կեանք վտանգելու գինով, նոր, աւելի յուսալից ապագայ ունեցող երկիրներու մէջ հաստատուելու:

Ձեռով մը նախկին գաղութատէր երկիրներ անկայուն պահելով, այդ երկիրներու հում նիւթը աժան գինով գնելով, պատճառ կը դառնան որ այդ երկրին բնակիչը իր մօտ գայ խոստմնալից ապագայի յոյսով: Սակայն, այդ երկիրներուն մէջ ալ անգործութեան բարձր տոկոսը պատճառ սկսած է դառնալ, որ տեղացիներ այդ գաղթականներուն ծուռ աչքով նային: Եւրոպայի, Աւստրալիոյ եւ այլ երկիրներու մէջ սկսած են երեւիլ ծայրայեղական շարժումներ, որոնք ապագային կրնան հասնիլ մինչեւ ֆաշիզմի, եթէ պետութիւններ նկատի չառնեն այս վտանգաւոր հոլովոյթը: Այսինքն, Արեւմուտքն էր պատճառը այդ պատերազմներուն եւ անոնց պատճառով այդ երկրի բնիկներ սկսան գաղթել դէպի այն երկիրները, որոնք պատճառ դարձած էին իրենց ողբերգութեան: Ու այս երկիրները սկսան գանգատիլ, թէ իրենց մօտ գաղթական կու գայ:

Վերջին տարիներուն, ըստ քաղաքական վերլուծաբաններու, մենք ականատես կը դառնանք քաղաքական իշխող խաւի մակարդակի անկումին, մանաւանդ Արեւմուտքի մէջ: Այն բախումը որ տեղի կ'ունենայ ԱՄՆ-ի մէջ՝ հանրապետականներու եւ ժողովրդավարներու միջեւ, անցած է ամէն պատշաճութեան սահմանը ու երկիրը կամաց-կամաց կը վերածէ քաղաքական կրկէսի մը, ուր իշխողը միւսին աւելի լաւ պախարակողն է եւ ոչ աւելի խելացին ու աւելի տրամաբանական լուծում առաջարկողը: Այս մէկը շատ լուրջ հարց է, որովհետեւ ականատես կը դառնանք տագնապներու, որոնք լուծումը ասկէ քսան կամ աւելի տարիներ առաջ տեղի կ'ունենան երկխօսութեան միջոցով:

Ներկայիս երկխօսութիւնը կը բացակայի եւ Արեւմուտքի իշխող դասակարգը սկսած է օգտագործել պատժամիջոցներու ճամբան՝ երկիրներ իրենց ուզածին պէս քալեցնելու համար: Այս պատժամիջոցները շատ անգամ հակառակ ազդեցութիւն կ'ունենան եւ կը տուժէ նաեւ այդ պատժամիջոցները պարտադրող երկրին բնակչութիւնը: Խօսինք օրինակներով: 2014-ի Խրիմի տագնապէն ետք Եւրոպական Միութիւնը պատժամիջոցներ սահմանեց Ռուսաստանի Դաշնութեան դէմ: Ռուսիա հակադարձեց եւ սկսաւ Լեհաստանէն խնձոր չգնել: Երբ լեհ հողագործներ պահանջեցին շուկայ գտնել իրենց արտադրութեան, կառավարութիւնը պատասխանեց ժխտական ձեռով: Ուրեմն, տուժողը եղաւ լեհ հողագործը առանց հատուցումի: Քուպա, Վենեզուելա, Իրան, Ռուսիա եւ շատ մը այլ երկիրներ, հակառակը, դարձան աւելի պինդ եւ հակառակեցան Արեւմուտքի բոլոր քաղաքականութիւններուն այդ պատժամիջոցներէն ետք: Նոյնիսկ ներքին քաղաքականութեան մէջ, իշխող դասակարգը սկսած է կայացնել ելեւմտական սխալ որոշումներ, պատճառ դառնալով մեծ պարտքի, որ ապագային դառնալով անկառավարելի, կը հիւծէ պետութեան հիմքերը:

Լիբանան, ԱՄՆ, հարաւային Եւրոպայի երկիրներ եւ շատ մը այլ երկիրներ ամենալաւ օրինակներն են այս ապիկար քաղաքական խաւի սխալ որոշումներուն: Ուրեմն, իրական ժողովրդավարական շարժումի մը կարիք կայ, ուր քաղաքայինը առիթ ունի ընտրելու լաւ ղեկավարներ: Պէտք է վերադարձ նախկին տնտեսական համակարգին, ուր կար տեղական ապրանքի պաշտպանութիւն, սենտիքաներ, որոնք կը պաշտպանէին գործաւորին իրաւունքը եւ կը սահմանէին յարմար աշխատավարձ: Պետութիւն մը, ուր խիստ ձեռով կը հսկուի պարտքին չափը եւ սահմանը չ'անցնիր, տնտեսական շինիչ քաղաքականութեամբ մը:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԻՄՈՆ ԵՒ ԺԱՆԵԹ
ՍԻՄԻԹԵԱՆ**



**ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
ՄԱՂԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ
ԵՐՉԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

**ՄԱՐԳԻՍ ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ
SARKIS PASTRY**

Երաբլուրին Պատգամը

ԴՈՎՏ. ԳՐԱՅԻ ԵՒՊԵՏԵԱՆ



Լիբանանի քաղաքացիական պատերազմը ապրեցա՛յ իր ամբողջութեամբ: Պատերազմին ժամանակ հետաքրքրական էր, թէ կեանքը երբեք չի կեցաւ: Մէկ խօսքով կեանքի պատմութեան սլաքը չի կասեցաւ: Ապրեցանք մեր կեանքերը անհատական, հաւաքական, գաղութային ու տակաւին, փորձեցինք կերտել ինչ որ կարելի էր: Եթէ այս երեւոյթը թուեցաւ անհասկնալի եւ նոյնիսկ տարօրինակ դուրսի մեր հարազատներուն կամ բարեկամներուն, բայց այդ բոլորը իրական էր:

Այո, կերտեցինք մեր կեանքերը: Դժուար եւ անապահով վիճակներու մէջ գացինք դպրոց, համալսարան, գործ ու տակաւին, ունեցանք գաղութային կեանք եւ պահեցինք հայկականը լիբանանեան իրականութեան մէջ: Եթէ ստիպուած էինք յարմարուիլ եւ կամ վերադասաւորել մեր կեանքերը անապահով վիճակներու մէջ ու տեղատարափ ուժեղացանք պատճառով, բայց այդ բոլորը նոյնպէս կեանքի շարունակականութեան մէկ մասն էին: Երեւի մինչեւ այսօր կը փորձենք ընել նոյնը լիբանանեան անվերջանալի թուակցող ու կրկնուող անորոշ եւ տագնապալի օրերուն մէջ: Նոյեմբեր 2021, Երեւան:

Քառասուն եւ չորս օրերու վրայ երկարած պատերազմէն ետք առաջին անգամն էր որ հայրենիք կ'այցելէի: Եթէ մէկ կողմէ կար կարօտը հողին, երկրին ու բարեկամներուն, բայց նոյնքան մատահոգութիւն եւ անձկութիւն: Ի՞նչ տեսակ Հայաստան մը պիտի տեսնէի քառասուն եւ չորս օրերու պատերազմէն ետք:

Երեւանի փողոցներուն մէջ կար նոյն աշխուժութիւնը: Կեանքը իր ընթացքը բռնած էր եւ մարդիկ կը շարունակէին իրենց առօրեան: Պէտք էր դարձնել վերջին Պէյրութի փորձառութիւնս: Իրավիճակը նոյնն էր Երեւանի մէջ: Կար տարբերութիւն մը սակայն: Երեւանի մէջ աւերուած շէնքեր ու փողոցներ չիկային ինչպէս էր պարագան Պէյրութ: Պատերազմը Արցախի մէջ էր եւ նիւթական վնասը հոն էր: Պէյրութի պարագային եթէ տեսանք եւ կերտեցինք կեանքի յառաջխաղացքը, բայց փլատակներու հետքերը միշտ պիտի յուշէին, թէ պատերազմը անցած էր մեր երկրէն:

Երեւանեան իրավիճակը զարմանալի չի թուեցաւ ինձի: Հայը, հայաստանցին պիտի շարունակէ ապրի ինչպէս ես եւ լիբանանցին: Եւ շարունակեցինք ապրիլ...:

Հապա պատերազմը:

Երաբլուր:

Բլուրին ամբողջ տարածքին շիրիմները, յիշատակի կոթողները ու տակաւին երազոյնները ծածկած էին ամէն տարածք: Քով-քովի մեր տղաքը: Կը հանգչի՞ն: Սկսայ անցնիլ իւրաքանչիւր շիրիմի քովին: Նկարներ մեր մատողաշ, երիտասարդ եւ անուշիկ տղոց: Հապա տարիքները: Մեծ մասամբ հագիւ նոր իրենց գարուն տարիքը բոլորած: Նահատակ տղոց հարազատներն ալ կային: Ուզեցի խօսիլ անոնց հետ մինչ իւրաքանչիւր շիրիմի առջեւէն կ'անցնէի:

«Եղբայրս է», ըսաւ երիտասարդ աղջիկ մը արցունքները սրբելով: Այդ շիրիմին քով ուրիշ հայր ու մայր մը կուլային իրենց գաւկին նահատակութիւնը: Նայեցայ տարիքին: Հագիւ քսան եւ մէկ տարիքը բոլորած: Սկսայ մտածել, թէ այս ծնողքը ինչպէ՞ս պիտի մխիթարուի: Ինչպէ՞ս պիտի կրնան տեսնել յոյսը, որ կեանքը կարելի պիտի ըլլայ շարունակել եւ առանց իրենց երիտասարդ գաւակին:

Խունկը լեցուցած էր Երաբլուրը: Ծաղիկները ձեռքս, կը փորձէի գետեղել զանոնք իւրաքանչիւր շիրիմի վրայ: Կ'ապրէի հարազատներուն

լացը, կսկիծը, ցաւը ու տակաւին երիտասարդ մեր տղոց երազը: Երազը, թէ անոնք պիտի ապրէին իրենց կեանքերը հայրենի հողին վրայ, պիտի ունենային իրենց ընտանիքը եւ տեսնէին իրենց գաւակները եւ իրենք ալ հպարտանային: Ցաւը շատ մեծ է...:

Շարունակեցի: Տարեց կին մը նստած էր քարի մը վրայ եւ կը նայէր հանդիպակած կողմը իր հարազատի շիրիմին եւ անոր վրայ տեղադրուած նկարին: Աչքերը կարմրած էին: Յայտնի էր, որ արցունքները չորցած էին: Իսկ կարմիր աչքերը քիչ մը աւելի կծկուած էին անոր դէմքին վրայ եւ կորած էին անոր նոյնքան տարապաճ եւ յոգնած մարմնին մէջ:

Չուշացաւ հարցումս: «Ո՞վ կ'ըլլայ», հարցուցի յարելով աչքերս շիրիմին վրայ տեղադրուած նկարին: «Եղբայրս է», ըսաւ տիկինը: Նայեցայ տարիքին՝ յիսունի մօտ էր: Ճիշդ է, որ տարիքով աւելի մեծ էր բաղդատած միւս նահատակներուն, բայց տիկնոջ եղբայրն է եւ երեւի իր միակ ընտանիքը: Ուրիշը չունէր եւ այլեւս ուրիշ տեղ ալ չունէր երթալու եւ պատճառ ալ չունէր ուրիշ տեղ ապրելու: Իր միակ հարազատ-ընտանիքն էր իր եղբայրը եւ ան այսօր չիկայ: Եւ ինք մնացած էր մինակ: Եւ մինակութիւնը պիտի անցնէր իր նոր տան մէջ, Երաբլուր: Եղբորը հետ ըլլալու համար իր այս յառաջացած տարիքին մէջ:

Բաւական երկար նայեցայ կնոջ: Իր այս տարիքին համար այս ցաւը շատ չէ՞: Բայց ինչպէս պիտի ամօքէ իր ցաւը: Ո՞վ է իր ընտանիքը ասկէ ետք: Ու հապա տո՞ւնը:

«Բաւական սխալներ գործեցինք»: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ յատուկ հանդիպումի մը ընթացքին, Վեհափառ Հայրապետը սկսաւ մէկ-մէկ քակել իր սրտին ու մտքին մէջ կուտակուած մտահոգութիւնները: «Ազգը, պետութիւնը եւ հայրենիքը անցան ու տակաւին դժուար պայմաններու մէջէն: Եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ այս բոլոր անցուղարձերուն նկատմամբ: Եկեղեցին վեր է ամէն կուտակուած թիւններէ եւ իմբաւորումներէ եւ կը գործէ հայրենիքին բարօրութեան համար: Բայց միեւնոյն ժամանակ եկեղեցին իր ըսելիքը եւ ընելիքը ունի», ըսաւ Վեհափառ Հայրապետը:

«Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները պէտք է վերականգնել»: Սփիւռքի աշխատանքներու գլխաւոր հանձնակատար Պրն Ջարեհ Սիւնանեանի հետ բաւական խօսեցանք Հայաստան-սփիւռք յարաբերութիւններուն մարտահրաւէրներուն մասին: «Անհրաժեշտ է, որ մեր տարբերութիւնները եւ տարակարծութիւնները վեր առնենք աւելի ուսանելի ձեւով եւ փորձենք հասարակ յայտարար մը գտնել բոլորին միջեւ», եղաւ ներդրումս: Պրն Սիւնանեան ունի ծրագիրներ եւ կը փորձէ կամրջել զանոնք սփիւռքի տարբեր գաղութներուն հետ:

Շարունակեցի: Կ'ուզէի տեսնել, հանդիպիլ, լսել եւ խօսիլ: Տիկ Աննա Չուլեան ազգային գրադարանի տնօրէնն է, որ աշխուժ աշխատանք կը տանի իր նոր ստանձնած պատասխանատուութեան մէջ:

Տիկ Ասողիկ Մարապեանը, որ կրթութեան նախարարութեան մշակութի եւ ազգային աւանդի պետն է: Ան կը գիտակցի մշակոյթի մեծ ժառանգին եւ անոր պահպանումին կարեւորութեան եւ հասանելի դարձնել զայն օտար շրջանակներու մէջ:

Պրն Գրիգոր Արշակեանը, ազգային արխիւի տնօրէն, որ մեծ աշխատանք կը տանի հայ ժողովուրդի պատմութիւնը պահպանելու համար:

Լուսինէ Թանաճեանը եւ Սոնա Ներսիսեանը սփիւռքի հետազոտութիւններու բաժնի հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի երկու երիտասարդ գիտաշխատողները, որոնք այնքան մասնագիտական աշխատանք կը տանին հաւաքելու եւ ուսումնասիրելու հայկական սփիւռքի տուեալները ու աւելիով ճանչնալու զանոնք: «Պէտք է աւելի գիրար ճանչնանք եւ հասկնանք», Լուսինն է խօսողը: «Եւ այս տեսակի հանդիպումները մեծապէս կ'օգնեն, որպէսզի մեր յարաբերութիւնները զարգանան եւ հաղորդակցութիւն ստեղծուի», ըսաւ ան:

Երեւանի մէջ շատ բան կայ ընելու: Հարցազրոյցներս տեղեկատուութեան եւ հեռատեսիլի ցանցերու մէջէն՝ Նոյեան Տապան, Երկիր Մետիա, Սիւլիլնեթ ու տակաւին: Ինչքան ուժ եւ կարողականութիւն կայ Հայաստանի մէջ: Ու տակաւին ներդրում մտքի եւ կարողականութեան եւ նոյնիսկ սփիւռքէն:

Հայաստանը քառասուն եւ չորս օրուայ պատերազմէն ետք: Կեանքը կը շարունակուի եւ պատմութեան սլաքը կարելի չէ կասեցնել: Բայց այդ շարունակութեան մէջ կայ ահաւոր ցաւը: Ցաւը Երաբլուրի որ շատ ցայտուն է: Մեր մատողաշ տղոց եւ անոնց գարուն տարիքի ընդհատումը: Եւ այս ցաւը չի մոռցուի: Պատմութեան եւ կեանքի սլաքին հետ, հայը պիտի շարունակէ այս ցաւը: Երաբլուրի ցաւը:

Բայց Երաբլուրի ցաւին մէջ կայ պատգամ: Եւ պատգամը կուզայ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՒՕ ԵՒ ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ԹՈՂ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԾԱՂԿԻ ՈՒ ԲԱՐԳԱՒԱՃԻ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԱՄԵԱՆ



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**


GLENDORA
626-914-1940

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԻ
ԳԱԼԲԱԳԵԱՆ**



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԽԱԶՐԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2022

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Նոր տարուայ նախաշեմին ենք կանգնած,
Յինը մեկնելու վրայ է՝ յուշը ետ,
նա այնքան էլ չի վռագում,
ժամկետին է սպասում,
նա յամենում է տարին բոլորի,
կծիկը աւարտին հասցնի,
կամենում է վերջում՝
սպիտակով նախշեր կծկի,
սակայն անօգուտ,
քանի որ կարմրադեղին գոյնը
արդէն մատնում է նրա եութիւնը:
Ինչ յոյսերով էինք օրօրում հինի կապուած...
ցանկութիւններ պէս-պէս՝
խաղաղութիւն աշխարհին,
բարգաւաճում երկրներին,
ապահով կեանք մարդկութեան,
պատերազմներից հրաժարում,
արդարութեամբ տնօրինում,
իրաւազրկուած ժողովուրդների
պահանջներին վերահասութիւն,
պատմական սխալների ճշտում,
հայութեան հարցի լուծում,
ցեղասպան բուրքիայի դատավարութիւն,
ինչ վսեմ սպասելիքներ,
մեր մոլորակը գեղեցկացնող՝
բուրաստան գունակ-գունակ ծաղիկներով:
Բայց որ մէկն է իրականացել,
ամէն ցաւ անբուժ է մնացել,
պայքարներ ամենուրեք,
զեր մեծերն իրենց կամքն են թելադրում,
նրանք վերից են նայում,
տկարին են օգտագործում:
Քանի բեւեռացումը, սպառնալիցումը,
գոռոզութիւնը եւ ընչաքաղցութիւնը տիրակալ են՝
ոչ տեսնենք արդարութեան աղանու թեւածում:
գիտուն մարդիկ են դա ասում,
նրանք են, որ ժողովրդասիրութեամբ եւ
հայրենասիրութեամբ
պահում են աշխարը քարը քարի վրայ:
Նրանք երբեք չեն յուսահատում,
խոհեմաբար եւ համբերատարութեամբ են առաջ գնում,
բարի խորհուրդներով են հրապարակ իջնում՝
հոգու եւ մտքի նորոգութեան,
շրջահայեցողութեան, կարեկցութեան,
ժողովրդասիրութեան, հանդուրժողականութեան եւ...
մէկնզմէկու նկատմամբ սիրոյ եւ յարգանքի զգացումներով:
Ահա Ամանորն է գալիս առաքինի,
տեսնենք այս տարի ինչ կը կատարուի,
Յոյս Աստուծոյ յուսախափ չենք լինի:

Երաբլուրին Պատգամը

Շարունակուած էջ 37

Նահատակ տղոց անշնչացած մարմիններէն: Անոնք կենդանի չեն, բայց իրենց
ձայնը լսելի է: Անոնք կըսեն, « Հայրենիքը պէտք է պահենք: Հայրենիքը պէտք
է կերտենք »:

Անոնք նահատակուեցան, որպէսզի հայրենիքը գոյատեւէ: Մենք՝ ետեւ
մնացողներս, Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, պիտի պահենք եւ կերտենք
հայրենիքը: Եւ զայն պահելու եւ կերտելու համար պիտի վերականգնենք
Հայաստան, Արցախ եւ սփիւռք երակողմանի հաղորդակցութեան կապերը:
Հաղորդակցութեան միջոցաւ է, որ մեր բոլոր տարակարծութիւններուն
մէջէն պիտի կարենանք կերտել հասարակ յայտարարը, որ պիտի դառնայ
հայտուն պատմութեան շարունակականութեան կռուանը: Այն հասարակ
յայտարարը, որ պիտի շինէ մեր «տունը»:

Երաբլուրի ցաւը պիտի մնայ: Բայց մեր տղոց անշնչացած մարմինները
պիտի հանգչին երբ միասին համաձայնինք կերտել հայրենիքը: Եւ հայուն

ՏՕՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ

ՆԵՐՍԷՍ ՊԱԼԱՅԵԱՆ

Տօնական գիշեր
Նոր օր, ամանոր,
Ինչ յուշե՛ր, յուշե՛ր,
Թողեցի այնտեղ
Յեւ մշուշում,
Ի դձեր, երազներ
Մնացին կիսատ...
Թերի, անաւարտ...
Տօնական գիշեր,

Նոր օր, ամանոր,
Անցած յուշերս եմ
Փետրում, փրփրում,
Տխուր ու մոլոր,
Փնտռում այս գիշեր,
Անցած գնացած
Օրերս բոլոր
Ու նոր ամանոր,
Մի նոր ամանոր...

ՏԵՆՉԱՆՔ

Ուզում եմ գնալ
Ու հանգրուանել
Այնտեղ, ուր մարդիկ
Ապրում են անհոգ,
Շրթներին՝ ժպիտ,
Սրտներում՝ ծով սէր,
Աչքերում՝ կարօտ,
Գգուանք, կարեկցանք:
Բառերն անգամ,
Խօսքերն առօրեայ

Աղօթք եմ, օրհնանք,
Ամէն մի ժպիտ
Ցոլք է կարօտի՝
Շաղկապուած կեանքին:
Գնամ ու հասնեմ
Այնտեղ, որտեղ կայ
Կենսատու արեւ
Եւ արեւի մէջ
Շոյոյ, ջերմացնող
Ողջոյն ու բարեւ...

ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր օր է գալիս,
Նոր կեանք մեզ տալիս,
Բերք, բարիք բերում,
Առողջ կեանք բաշխում...

Անուշ մանուկներ,
Նա ձեզ է փնտռում,
Սիրում է սրտանց
Յոյսեր ներշնչում...

Ձիւն, անձրեւ բերում,
Կեանք տալիս հողին,

Ու պարարտ հողը
Մեզ բերք նուիրում...

Ողջո՛յն, Նոր Տարի,
Բեր մեր աշխարհին
Ծով խաղաղութիւն,
Սէր, եղբայրութիւն:

Մայր, Յայաստանին
Միշտ ամուր պահիր,
Որ եռագոյնը
Յաւերժ ծածանի...


ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՉԵՐ

ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Արի, քեզ հետ բեր սէր ու
հաշտութիւն,
Ու հանգիստ քայլի խաղաղ
աշխարհում,
Տոպրակներով բեր խաղալիք
ու սէր
Ու ջերմ համբոյրներ որբերի
համար...
Արի, միշտ արի, դու անգօրի
հայր,
Ու անգին մայրը ամբողջ
աշխարհի,
Եւ նրանց սիրով խնդրի
Աստուն
Գութնի սրտին, կրակ վառողի...

Արի, քեզ հետ բեր
խրատներ բարի,
Լցրու նենգ ոգում չարա-
գործների,
Կրակը չը վառեն չորս կողմ
աշխարհի,
Արի, այս դաժան կրակը մարի...
Արի, դու արի, խաղաղ Ն«որ
Տարի...
Յէգ բանաստեղծիս իղծը կա-
տարի,
Կրկին քեզ հետ բեր խաղալիք
ու սէր,
Ամբողջ աշխարհի սրտերը
վառիր...

պատմութիւնը դնենք շարունակականութեան գործընթացին մէջ:
Պիտի կարենա՞նք:
Երաբլուրի ցաւը: Ու այդ ցաւին պատգամը:
Թէ հայը պէտք է պահէ ու կերտէ:
Պահէ հայրենիքը: Եւ կերտէ հայուն պատմութիւնը եւ դնէ զայն
շարունակականութեան սլացքին մէջ:
Պիտի ու պէտք է որ ընենք:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԻԿԻՆ ԱԶԱՏՈՒՀԻ ՄՈՒԹԱՅԵԱՆ



**ՆՈՐ ՏԱՐԻՆ ԳԻՄՆԱՒՈՐԵՆՔ
ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ, ՀԱՄԱԽՈՀՈՒԹԵԱՄԲ
ԵՒ ՀԱՆԴՈՒՐԺՈՂՈՒԹԵԱՄԲ**

**ՏՕՔԹ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Central Diagnostic Imaging**